«ԳՈՐԻՍԻ ՅՈՒ. ԲԱԽՇՅԱՆԻ ԱՆՎԱՆ ԹԻՎ 3 ՀԻՄՆԱԿԱՆ ԴՊՐՈՑ» ՊՈԱԿ-Ի ԲՆԱԳԻՏԱՄԱԹԵՄԱՏԻԿԱԿԱՆ ԱՌԱՐԿԱՆԵՐԻ ՄԵԹՈԴՄԻԱՎՈՐՄԱՆ ՆԻՍՏԻ ԱՐՁԱՆԱԳՐՈՒԹՅՈՒՆ № 1

«22» օգոստոս 2023թ. ք. Գորիս

Նիստին ներկա էին ՄՄ հետևյալ անդամները՝

1. Անուշ Դաջունց (մ/մ նախագահ)
2. Սիրուշ Բաղդասարյան
3. Արփինե Մարտիրոսյան
4. Ալլա Զեյնալյան
5. Հերմինե Ալավերդյան
6. Օլյա Ղուլյան
7. Արմանուշ Բակունց
8. Մարինե Բաբայան
9. Մերի Մկրտչյան
10. Մարետա Հարությունյան
11. Կարինե Արզումանյան
12. Ալեքսանդր Հայրապետյան

Նիստին ներկա էր ուսումնական գծով փոխտնօրեն Սերգեյ Ավանեսյանը և ուսուցչի օգնական Արփինե Ծատրյանը:

Օ Ր Ա Կ Ա Ր Գ

1. Բնագիտամաթեմատիկական առարկաների մեթոդմիավորման նիստի օրակարգի հաստատում:

(զեկուցող՝ Ա. Դաջունց)

2. 2023-2024 ուսումնական տարվա բնագիտամաթեմատիկական առարկաների մեթոդմիավորման կազմի հաստատում, նախագահի ընտրություն:

(զեկուցող՝ Ս. Ավանեսյան)

3. 2022-2023 ուսումնական տարվա բնագիտամաթեմատիկական առարկաների մեթոդմիավորման կատարած աշխատանքների ամփոփում և նոր ուսումնական տարվա անելիքներն ու խնդիրները:

(զեկուցող՝ Ա. Դաջունց)

4. 2023-2024 ուսումնական տարվա բնագիտամաթեմատիկական առարկաների մեթոդմիավորման ժամաբաժանման հաստատում:

(զեկուցող՝ Ա. Դաջունց)

5. Բնագիտամաթեմատիկական առարկաների մեթոդմիավորման և նախագահի 2023-2024 ուսումնական տարվա աշխատանքային պլանի, առարկայական ծրագրերի, ուսումնական պլանի, օրացուցային թեմատիկ պլանների, առարկայական խմբակների օրացուցային թեմատիկ պլանների, լաբորատորիաների և կաբինետների վարիչների աշխատանքային պլանների հաստատում:

(զեկուցող՝ Ա. Դաջունց)

6. Նախագծային աշխատանքների գնահատման կարգի, թեմաների, պլանների, թեմատիկ պլանների, ղեկավարների, մատյանների և հանձնաժողովների կազմի հաստատում:

(զեկուցող՝ Ս. Ավանեսյան)

7. Բնագիտամաթեմատիկական առարկաների մեթոդմիավորման կազմում ընդգրկված առարկաներից տրվող թեմատիկ գրավոր աշխատանքների, գործնական աշխատանքների քանակի ու տարբերակների հաստատում:

(զեկուցող՝ Ա. Դաջունց)

8. Ըստ նոր ՀՊՉ-ների 2-րդ, 5-րդ և 7-րդ դասարաններում գնահատման չափանիշների հաստատում:

(զեկուցող՝ Ս. Ավանեսյան)

9. 2023-2024 ուսումնական տարվա ԱՈՒՊ-ների քննարկում։

(զեկուցող՝ Ա. Ծատրյան)

10. Ցուցադրական դասերի, դաս միջոցառումների, մրցույթ վիկտորինաներ կազմակերպում, թեմաների և ժամկետների հաստատում։

(զեկուցող՝ Ս. Ավանեսյան)

11. 2023-2024 ուսումնական տարվա ընթացքում դասալսումների, փոխադարձ դասալսումների իրականացում։

(զեկուցող՝ Ս. Ավանեսյան)

12. Երկարօրյա խմբերում աշակերտների ընդգրկվածություն։

(զեկուցող՝ Ս. Ավանեսյան)

Լսեցին 1. Բնագիտամաթեմատիկական առարկաների մեթոդմիավորման նիստի օրակարգի հաստատման մասին հարցը։

(զեկուցող՝ Ա.Դաջունց)

Զեկուցողը ներկայացրեց օրակարգի կետերը։

Արտահայտվեցին՝

Որոշեցին՝ Հաստատել 2023-2024 ուսումնական տարվա բնագիտամաթեմատիկական առարկաների մեթոդմիավորման 1-ին նիստի օրակարգը։

Լսեցին 2. 2023-2024 ուսումնական տարվա բնագիտամաթեմատիկական առարկաների մեթոդմիավորման կազմի հաստատման և նախագահի ընտրության մասին հարցը։

(զեկուցող՝ Ս. Ավանեսյան)

Զեկուցողը նշեց, 2022-2023 ուսումնական տարում բնագիտամաթեմատիկական առարկաների մեթոդմիավորման կազմում է ներառվել նաև «Շախմատ» առարկան և մեթոդմիավորման կազմում ընդգրկել նաև «Շախմատ» առարկայի ուսուցիչ Ալեքսանդր Հայրապետյանը, իսկ 2-րդ դասարաններում «Շախմատ» առարկան դասավանդող Կարինե Արզումանյանը ՄՄ անդամ էր, քանի որ դասավանդում է «Տեխնոլոգիա» առարկան, և առաջարկեց կազմը հաստատել նոր անդամներով, հաշվի առնելով դրանում ընդգրկված առարկաների ուսուցիչներին։ Բնագիտամաթեմատիկական առարկաների մեթոդմիավորման նախագահի պաշտոնում առաջադրվել է «Քիմիա» առարկայի ուսուցչուհի, 2022-2023 ուսումնական տարում մեթոդմիավորման նախագահ Անուշ Դաջունցը։ Զեկուցողն առաջարկեց Անուշ Դաջունցին 2023-2024 ուսումնական տարում ևս թողնել որպես բնագիտամաթեմատիկական առարկաների մեթոդմիավորման նախագահ։

Արտահայտվեցին՝ Մ/մ անդամները

Արտահայտվողներն առաջարկեցին անփոփոխ թողնել բնագիտամաթեմատիկական առարկաների մեթոդմիավորման նախագահին և 2023-2024 ուսումնական տարում նույնպես առաջարկեցին Անուշ Դաջունցի թեկնածություն։

Որոշեցին՝ Հաստատել բնագիտամաթեմատիկական առարկաների մեթոդմիավորման կազմը, ինչպես նաև նախագահ ընտրել Անուշ Դաջունցին։

Լսեցին 3. 2022-2023 ուսումնական տարվա բնագիտամաթեմատիկական առարկաների մեթոդմիավորման կատարած աշխատանքների ամփոփման և նոր ուսումնական տարվա անելիքների ու խնդիրների մասին հարցը։

(զեկուցող՝ Ա. Դաջունց)

Զեկուցողը ներկայացրեց 2022-2023 ուսումնական տարվա ընթացքում իրականացված աշխատանքները, դրանց կատարողականը, բացթողումները։

Զեկուցողն առանձնակի շեշտադրեց նոր ՀՊՉ-ներով ուսուցման գործընթացի պատշաճ կազմակերպումը, շեշտեց, որ կարևոր է առաջնորդվել նոր պահանջներով, առարկայական չափորոշիչներով և ծրագրերով:

Արտահայտվեցին՝ Մ/մ անդամները

Արտահայտվողները նշեցին, որ 2022-2023 ուսումնական տարվա ընթացքում աշխատանքներն իրականացվել են պատշաճ, պահանջներին համապատասխան:

Որոշեցին՝ 2022-2023 ուսումնական տարվա կատարողականն ընդունել ի գիտություն:

Լսեցին 4. 2023-2024 ուսումնական տարվա բնագիտամաթեմատիկական առարկաների մեթոդմիավորման ժամաբաժանման հաստատման մասին հարցը:

(զեկուցող՝ Ա.Դաջունց)

Զեկուցողը նշեց, որ 2023-2024 ուսումնական տարվա բնագիտամաթեմատիկական առարկաների մեթոդմիավորման կազմում ընդգրկված առարկաների նախնական ժամաբաժանումը կատարվել է 2022-2023թ ուսումնական տարվա մեթոդմիավորման վերջին նիստում: Հիմք ընդունելով նախնական ժամաբաժանումը, ինչպես նաև 2-րդ, 5-րդ և 7-րդ դասարանների ծրագրային փոփոխությունները անհրաժեշտ է փոփոխություններ կատարել և հաստատել ժամաբաշխումը: Քանի որ «Քիմիա» առարկային 7-րդ դասարանում հատկացված է շաբաթական 2 դասաժամ, ապա դպրոցական բաղադրիչից քիմիային լրացուցիչ ժամ չի տրամադրվում: Դպրոցական բաղադրիչը տրվում է բնագիտամաթեմատիկական առարկաներից 8-րդ և 9-րդ դասարաններում «Հանրահաշիվ» առարկային՝ 2-րդ կիսամյակում՝ մեկական ժամ:

Արտահայտվեցին՝ Մ/մ անդամները, Ս. Ավանեսյանը

Արտահայտվողները նշեցին, որ նախնական ժամաբաժանման իրականացման ժամանակ բոլոր հարցերը քննարկվել են: Շեշտվեց նոր չափորոշչային դասարաններում ուսուցման կազմակերպման գործընթացի նոր ՀՊՉ-ների պահանջներին համապատասխան իրականացման կարևորության մասին:

Սերգեյ Ավանեսյանը մանրամասն ներկայացրեց 2023-2024 ուսումնական տարվա ուսումնական պլանը, հատկապես ուշադրություն դարձրեց նոր ՀՊՉ-ներով դասավանդվող դասարաններին, որոնց դեպքում մանրամասն ներկայացրեց առարկայացանկը, շաբաթական ժամերի առավելագույն քանակը: Սերգեյ Ավանեսյանը նաև ներկայացրեց դպրոցական և անհատական (ընտրովի) բաղադրիչների տրամադրման մասին հարցերը, առաջարկեց դպրոցական բաղադրիչը շարունակել տրամադրել այն առարկաներին, որոնց տրամադրվել է նախորդ ուսումնական տարում՝ հավելելով, որ 2-րդ, 5-րդ, 7-րդ դասարաններում դպրոցական և անհատական բաղադրիչների տրամադրումը նույնպես իրականացվել է ըստ սահմանված կարգի: Ավանեսյանը առաջարկեց դպրոցական բաղադրիչը տրամադրել հետևյալ սկզբունքով.

- 2-րդ դասարանում դպրոցական բաղադրիչի 1 դասաժամը հատկացվում է «Մաթեմատիկա» առարկային:
- 3-րդ և 4-րդ դասարաններում դպրոցական բաղադրիչի 2 դասաժամը հատկացվում է. «Մաթեմատիկա» առարկային՝ 1 դասաժամ, «Մայրենի» առարկային՝ 1 դասաժամ:
- 5-րդ դասարանում դպրոցական բաղադրիչի 3 դասաժամը հատկացվում է. «Անգլերեն» առարկային՝ 2 դասաժամ, «Մաթեմատիկա» առարկային՝ 1 դասաժամ:
- 6-րդ դասարանում դպրոցական բաղադրիչի 2.5 դասաժամը հատկացվում է. «Անգլերեն» առարկային՝ 2 դասաժամ, «Ազգային երգ ու պար» առարկային՝ 0.5 դասաժամ:

- 7-րդ դասարանում դպրոցական բաղադրիչի 2 դասաժամը հատկացվում է «Անգլերեն» առարկային՝ 2 դասաժամ:
- 8-րդ և 9-րդ դասարաններում դպրոցական բաղադրիչի 2.5 դասաժամը հատկացվում է. «Անգլերեն» առարկային՝ 2 դասաժամ, «Հանրահաշիվ» առարկային՝ 0.5 դասաժամ:

Սերգեյ Ավանեսյանն առաջարկեց նաև 2-րդ, 5-րդ և 7-րդ դասարաններում անհատական (դպրոցական) բաղադրիչը տրամադրել հետևյալ սկզբունքով.

- 2-րդ դասարանում շաբաթական 6 դասաժամ (3 դասարան) անհատական (դպրոցական) բաղադրիչը տրամադրել արտադասարանական խմբակների իրականացմանը
- 5-րդ դասարանում շաբաթական 6 դասաժամ (3 դասարան) անհատական (դպրոցական) բաղադրիչը տրամադրել արտադասարանական խմբակների իրականացմանը, այդ թվում՝ «Առողջ ապրելակերպ» պարտադիր խմբակին

7-րդ դասարանում շաբաթական 12 դասաժամ (3 դասարան) անհատական (դպրոցական) բաղադրիչը տրամադրել արտադասարանական խմբակների իրականացմանը, այդ թվում՝ «Առողջ ապրելակերպ» պարտադիր խմբակին, ինչպես նաև նախագծային աշխատանքների իրականացմանը: 12 դասաժամից 6 դասաժամը տրամադրել արտադասարանական խմբակների իրականացմանը, իսկ 6 դասաժամը՝ նախագծային աշխատանքների իրականացմանը:

Որոշեցին՝ Հաստատել 2023-2024 ուսումնական տարվա բնագիտամաթեմատիկական առարկաների մեթոդմիավորման կազմում ընդգրկված առարկաների ժամաբաժանումը (կցվում է):

2. Առաջարկել դպրոցական բաղադրիչը տրամադրել հետևյալ սկզբունքով.

- 2-րդ դասարանում դպրոցական բաղադրիչի 1 դասաժամը հատկացվում է «Մաթեմատիկա» առարկային:
- 3-րդ և 4-րդ դասարաններում դպրոցական բաղադրիչի 2 դասաժամը հատկացվում է. «Մաթեմատիկա» առարկային՝ 1 դասաժամ, «Մայրենի» առարկային՝ 1 դասաժամ:
- 5-րդ դասարանում դպրոցական բաղադրիչի 3 դասաժամը հատկացվում է. «Անգլերեն» առարկային՝ 2 դասաժամ, «Մաթեմատիկա» առարկային՝ 1 դասաժամ:
- 6-րդ դասարանում դպրոցական բաղադրիչի 2.5 դասաժամը հատկացվում է. «Անգլերեն» առարկային՝ 2 դասաժամ, «Ազգային երգ ու պար» առարկային՝ 0.5 դասաժամ:
- 7-րդ դասարանում դպրոցական բաղադրիչի 2 դասաժամը հատկացվում է «Անգլերեն» առարկային՝ 2 դասաժամ:
- 8-րդ և 9-րդ դասարաններում դպրոցական բաղադրիչի 2.5 դասաժամը հատկացվում է. «Անգլերեն» առարկային՝ 2 դասաժամ, «Հանրահաշիվ» առարկային՝ 0.5 դասաժամ:

3. Առաջարկել անհատական (դպրոցական) բաղադրիչը տրամադրել հետևյալ սկզբունքով.

- 2-րդ դասարանում շաբաթական 6 դասաժամ (3 դասարան) անհատական (դպրոցական) բաղադրիչը տրամադրել արտադասարանական խմբակների իրականացմանը
- 5-րդ դասարանում շաբաթական 6 դասաժամ (3 դասարան) անհատական (դպրոցական) բաղադրիչը տրամադրել արտադասարանական խմբակների իրականացմանը, այդ թվում՝ «Առողջ ապրելակերպ» պարտադիր խմբակին

7-րդ դասարանում շաբաթական 12 դասաժամ (3 դասարան) անհատական (դպրոցական) բաղադրիչը տրամադրել արտադասարանական խմբակների

իրականացմանը, այդ թվում՝ «Առողջ ապրելակերպ» պարտադիր խմբակին, ինչպես նաև նախագծային աշխատանքների իրականացմանը: 12 դասաժամից 6 դասաժամը տրամադրել արտադասարանական խմբակների իրականացմանը, իսկ 6 դասաժամը՝ նախագծային աշխատանքների իրականացմանը:

Լսեցին 5. Բնագիտամաթեմատիկական առարկաների մեթոդմիավորման և նախագահի 2023-2024 ուսումնական տարվա աշխատանքային պլանի, առարկայական ծրագրերի, ուսումնական պլանի, օրացուցային թեմատիկ պլանների, առարկայական խմբակների օրացուցային թեմատիկ պլանների, լաբորատորիաների և կաբինետների վարիչների աշխատանքային պլանների հաստատման մասին հարցը:

(զեկուցող՝ Ա.Դաջունց)

Զեկուցողը ներկայացրեց բնագիտամաթեմատիկական առարկաների մեթոդմիավորման նախագահի 2023-2024 ուսումնական տարվա աշխատանքային պլանը, որի մեջ ներառված են մեթոդմիավորման հիմնական աշխատանքները, հաշվի են առնված նոր չափորոշչային փոփոխությունները: Զեկուցողը նշեց, որ օրացուցային թեմատիկ պլանները կազմված են առարկայական չափորոշիչներին և ծրագրերին համապատասխան, հաշվի են առնված նոր փոփոխությունները, արտադասարանական խմբակների օրացուցային թեմատիկ պլանները կազմված են համապատասխան հաստատված ծրագրերի հիման վրա:

Արտահայտվեցին՝ ՄՄ անդամները, Ս. Ավանեսյանը

Արտահայտվողները նշեցին, որ նոր չափորոշիչներով նախատեսված բոլոր փոփոխությունները հաշվի են առնված կատարված աշխատանքներում: Զեկուցողը նշեց, որ 2023-2024 ուսումնական տարվանից սկսած կաբինետների վարիչները չեն վարձատրվելու և աշխատանքներն իրականացվելու է հասարակական հիմունքներով, սակայն կարևորեց, որ անգամ այդ դեպքում դրանք իրականացվեն համակարգված: Զեկուցողն առաջարկեց «Մաթեմատիկա» առարկայի կաբինետի վարիչի պարտականությունները թողնել Ալլա Զեյնալյանի վրա՝ հասարակական հիմունքներով, «Քիմիա» առարկայի լաբորատորիայի վարիչի պարտականությունները թողնել Անուշ Դաջունցի վրա:

Որոշեցին՝ 1. Հավանության արժանացնել Բնագիտամաթեմատիկական առարկաների մեթոդմիավորման և նախագահի 2023-2024 ուսումնական տարվա աշխատանքային պլանը, առարկայական ծրագրերը, ուսումնական պլանը, օրացուցային թեմատիկ պլանները, առարկայական խմբակների օրացուցային թեմատիկ պլանները, լաբորատորիաների և կաբինետների վարիչների աշխատանքային պլանները:

2. Հաստատել «Մաթեմատիկա» առարկայի կաբինետի վարիչ Ալլա Զեյնալյանի թեկնածությունը (հասարակական հիմունքներով), «Քիմիա» առարկայի լաբորատորիայի վարիչ Անուշ Դաջունցի թեկնածությունը, ինչպես նաև աշխատանքային պլանները:

Լսեցին 6. Նախագծային աշխատանքների գնահատման կարգի, թեմաների, պլանների, թեմատիկ պլանների, ղեկավարների, մատյանների և հանձնաժողովների կազմի հաստատման մասին հարցը:

(զեկուցող՝ Ս. Ավանեսյան)

Զեկուցողը ներկայացրեց նախագծային աշխատանքների կատարման կարգը: Նա նշեց, որ մասնախմբի անդամների կողմից 7-րդ դասարանների համար ներկայացվել են համապատասխան թեմաները, դրանց հիման վրա կազմվել են պլաններ և աշխատանքային թեմատիկ պլաններ, օրացուցային թեմատիկ

պլանները, մատյանները։ Զեկուցողը ներկայացրեց ուսուցիչների կողմից ներկայացված թեմաները, կազմվել են աշակերտների խմբերը, որոնք ընտրել են իրենց թեմաներն ու ղեկավարներին։ Ս. Ավանեսյանը նշեց հանրակրթական հիմնական ընդհանուր և այլընտրանքային ծրագրեր իրականացնող ուսումնական հաստատություններում ուսումնական խմբակների ձևավորման ու գործնական և ուսումնական նախագծերի իրականացման կարգը և առաջարկեց, հիմք ընդունելով նշված կարգը նախագծային աշխատանքներ իրականացնել առարկայական հանձնաժողովներով, որի կազմում պետք է ընգրկվեն տվյալ առարկայի կամ առարկաների ուսուցիչները, մ/մ նախագահը, նույն կամ հարակից առարկայի ուսուցիչները, ուսումնական գծով փոխտնօրենը։

Արտահայտվեցին՝ Անուշ Դաջունցը։

Արտահայտվողը կարևորվեց Հանրակրթական հիմնական ընդհանուր և այլընտրանքային ծրագրեր իրականացնող ուսումնական հաստատություններում ուսումնական խմբակների ձևավորման ու գործունեության և ուսումնական նախագծերի իրականացման կարգի պահանջները, դրանց իրականացումը, ինչպես նաև բոլորի ուշադրությունը հրավիրեց այն պահանջին, որ 7-րդ դասարանում յուրաքանչյուր սովորող տարեկան իրականացնում է առնվազն մեկ ուսումնական նախագիծ՝ իր ընտրած առարկայից (առարկաներից)։

Որոշեցին՝ Հաստատել նախագծային աշխատանքների գնահատման կարգը, թեմաները, պլանները, թեմատիկ պլանները, ղեկավարներին, մատյանները և հանձնաժողովների կազմը (կցվում է)։

Լսեցին 7. Բնագիտամաթեմատիկական առարկաների մեթոդմիավորման կազմում ընդգրկված առարկաներից տրվող թեմատիկ գրավոր աշխատանքների, գործնական աշխատանքների քանակի ու տարբերակների հաստատման մասին։

(զեկուցող՝ Ա. Դաջունց)

Զեկուցողը նշեց, որ թեմատիկ գրավոր աշխատանքների քանակը հիմնականում պայմանավորված է տվյալ առարկայի շաբաթական ժամաքանակից, բայց դասավանդող ուսուցիչը կարող է որոշակի փոփոխություններ կատարել և դրանց քանակության և տեսակների առումով, հիմնավորելով կատարվելիք փոփոխությունները, գործնական աշխատանքները նույնպես կախված են ժամաքանակից, սակայն կիսամյակը մեկ գործնական աշխատանքը պարտադիր է։

Արտահայտվեցին՝ Մ/մ անդամները, Ս. Ավանեսյանը

Նրանք նշեցին, որ թեմատիկ գրավոր աշխատանքների քանակը պետք է թողնել նախկին ձևով ըստ շաբաթական ժամաքանակի և կազմված տարբերակների մեջ անպայման հաշվի առնելով դասարանի սովորողների միջին մակարդակը։

Փոխտնօրեն Ս. Ավանեսյանը նշեց, որ անհրաժեշտ է թեմատիկ գրավոր աշխատանքների, գործնական աշխատանքների հայտորոշիչ և ձևավորող թեստ առաջադրանքների քանակը հաստատվեն մեթոդմիավորումների կողմից։

Որոշեցին՝ Ապահովել ուսումնական տարվա ընթացքում սահմանված գրավոր աշխատանքների, գործնականների քանակն ու բազմազանությունը՝ համապատասխան հավելվածի, ինչպես նաև սկսած 2023-2024 ուսումնական տարվանից բոլոր առարկաներից տրվող թեմատիկ գրավոր աշխատանքները, գործնական աշխատանքները, հայտորոշիչ և ձևավորող թեստերը հաստատել մեթոդմիավորման կողմից, որից հետո կիրառել (կցվում է)։

Լսեցին 8. Ըստ նոր ՀՊՉ-ների 2-րդ, 5-րդ և 7-րդ դասարաններում գնահատման չափանիշների հաստատման մասին հարցը։

(զեկուցող՝ Ս. Ավանեսյան)

Զեկուցողը նշեց, որ անհրաժեշտ է հիմք ընդունել պետական հանրակրթական ուսումնական հաստատությունների սովորողների գնահատման չափանիշները և 2023-2024 ուսումնական տարվանից սկսած նոր ՀՊՉ-ներով դասավանդվող դասարաններում աշակերտների գնահատումն իրականացնել այդ չափանիշներին համապատասխան։ Ըստ այդ չափանիշների 2023-2024 ուսումնական տարում 2-րդ, 5-րդ և 7-րդ դասարաններում ըստ նպատակի՝ կիրառվում է սովորողների գնահատման երեք տեսակ.

1) հայտորոշիչ գնահատում,
2) ձևավորող գնահատում,
3) ամփոփիչ գնահատում (միավորային և բնութագրող)։

Հայտորոշիչ գնահատման ձևն ընտրում է ուսուցիչը։ Հայտորոշիչ գնահատման համար կարող են օգտագործվել հետևյալ ձևերը՝

1) թեստ կամ գրավոր այլ աշխատանք.
2) բանավոր հարցում.
3) բաց հարցերով քննարկում.
4) և ուսուցչի ընտրությամբ ցանկացած այլ ձև։

Ձևավորող գնահատումն իրականացվում է ուսուցչի և սովորողի (ինքնագնահատում, փոխադարձ գնահատում) կողմից։ Ձևավորող գնահատման համար կարող են օգտագործվել հետևյալ ձևերը.

1) գրավոր կարճ հարցում (թեստ).
2) բանավոր հարցում.
3) գրավոր աշխատանք.
4) գործնական (լաբորատոր) աշխատանք.
5) տնային աշխատանք.
6) նախագծային աշխատանք.
7) քննարկում, բանավեճ.
8) և ուսուցչի ընտրությամբ ցանկացած այլ ձև։

Ձևավորող գնահատում իրականացնելիս միավոր չի նշանակվում։

Ամփոփիչ (միավորային և բնութագրող) գնահատման ձևերը սահմանում է ՀՀ կրթության, գիտության, մշակույթի և սպորտի նախարարությունը, իսկ մեթոդներն ընտրում է ուսուցիչը՝ հետևյալ առաջարկվող մեթոդներից.

1) թեստ կամ գրավոր այլ աշխատանք.
2) բանավոր հարցում.
3) բաց հարցերով քննարկում.
4) քննարկում, բանավեճ
5) գրավոր կարճ հարցում (թեստ).
6) գործնական (լաբորատոր) աշխատանք.
7) տնային աշխատանք.
8) նախագծային աշխատանք.
9) բնութագրող (այն դասարաններում, որտեղ ամփոփումն իրականացվում է բնութագրիչների միջոցով)
10) հնգյակի մեթոդ
11) ԳՈՒՍ (Գիտեմ-Ուզում եմ սովորել-Սովորել եմ)
12) մտածիր-զույգ կազմիր-հաղորդիր
13) խճանկար
14) պրիզմա

15) Վենի դիագրամ
16) T-աձև աղյուսակ
17) ելքի քարտերի լրացում
18) ձնագնդի
19) մտածող գլխարկներ
20) մտագրոհ (մտքերի հոսք)
21) կենտրոններով աշխատանք
22) Ֆրայերի մեթոդ
23) գիտելիքի դոմինո
24) երկու բան
25) վարդ, փուշ, բողբոջ
26) տասը տարի անց
27) սկսել, դադարեցնել, պահել
28) մետաիմացության թերթիկ
29) ինձնից առաջ հարցրու երեք հոգու
30) դասի զեկուցող
31) Ես-Դու-Մենք
32) լուսակիր
33) կիսատ նախադասություն
34) «Խաթարված հերթականություն»
35) Միավորային գնահատման իրականացում Quizizz և առցանց այլն գործիքի միջոցով
36) և ուսուցչի ընտրությամբ ցանկացած այլ ուսուցման մեթոդներ ու հնարներ:
Ամփոփիչ (միավորային և բնութագրող) գնահատման մեթոդները կարող են լրացվել կամ փոփոխվել ուսումնական տարվա ընթացքում՝ ուսուցչի հայեցողությամբ:

Միավորային գնահատումը կարող է իրականացվել գնահատման հետևյալ ձևերով՝
1) թեստ.
2) բանավոր հարցում.
3) գրավոր աշխատանք.
4) գործնական (լաբորատոր) աշխատանք.
5) նախագծային աշխատանք.
6) և ուսուցչի ընտրությամբ ցանկացած այլ ձև:

Սովորողի կիսամյակային գնահատականը ձևավորվում է պետական հանրակրթական ուսումնական հաստատությունների սովորողների գնահատման չափանիշների 38-րդ կետում սահմանված և ուսուցչի կողմից ընտրված գնահատման ձևերից ստացած գնահատականների միջին թվաբանականով, ինքնաշխատ եղանակով:

Արտահայտվեցին՝ Անուշ Դաջունցը
Արտահայտվողն առաջարկեց հավանության արժանացնել առաջարկվող ձևերն ու մեթոդները և սույն հարցը քննարկել նաև մանկավարժական խորհրդի նիստում:

Որոշեցին՝ Հաստատել նոր ՀՊՉ-ների համաձայն 2-րդ, 5-րդ, 7-րդ դասարաններում գնահատման չափանիշները՝ հիմք ընդունելով պետական հանրակրթական ուսումնական հաստատությունների սովորողների գնահատման չափանիշները, ինչպես նաև բնագիտամաթեմատիկական առարկաների մեթոդմիավորման կազմում ընդգրկված առարկաների համար կիրառել հետևյալ գնահատման ձևերը, մեթոդները, հնարները.

2023-2024 ուսումնական տարում 2-րդ, 5-րդ և 7-րդ դասարաններում ըստ նպատակի՝ կիրառվում է սովորողների գնահատման երեք տեսակ.
1) հայտորոշիչ գնահատում,
2) ձևավորող գնահատում,
3) ամփոփիչ գնահատում (միավորային և բնութագրող):

Հայտորոշիչ գնահատման ձևն ընտրում է ուսուցիչը: Հայտորոշիչ գնահատման համար կարող են օգտագործվել հետևյալ ձևերը՝
1) թեստ կամ գրավոր այլ աշխատանք.
2) բանավոր հարցում.
3) բաց հարցերով քննարկում.
4) և ուսուցչի ընտրությամբ ցանկացած այլ ձև:

Ձևավորող գնահատումն իրականացվում է ուսուցչի և սովորողի (ինքնագնահատում, փոխադարձ գնահատում) կողմից: Ձևավորող գնահատման համար կարող են օգտագործվել հետևյալ ձևերը.
1) գրավոր կարճ հարցում (թեստ).
2) բանավոր հարցում.
3) գրավոր աշխատանք.
4) գործնական (լաբորատոր) աշխատանք.
5) տնային աշխատանք.
6) նախագծային աշխատանք.
7) քննարկում, բանավեճ.
8) և ուսուցչի ընտրությամբ ցանկացած այլ ձև:
Ձևավորող գնահատում իրականացնելիս միավոր չի նշանակվում:

Ամփոփիչ (միավորային և բնութագրող) գնահատման ձևերը սահմանում է ՀՀ կրթության, գիտության, մշակույթի և սպորտի նախարարությունը, իսկ մեթոդներն ընտրում է ուսուցիչը՝ հետևյալ առաջարկվող մեթոդներից.
1) թեստ կամ գրավոր այլ աշխատանք.
2) բանավոր հարցում.
3) բաց հարցերով քննարկում.
4) քննարկում, բանավեճ
5) գրավոր կարճ հարցում (թեստ).
6) գործնական (լաբորատոր) աշխատանք.
7) տնային աշխատանք.
8) նախագծային աշխատանք.
9) բնութագրող (այն դասարաններում, որտեղ ամփոփումն իրականացվում է բնութագրիչների միջոցով)
10) հնգյակի մեթոդ
11) ԳՈՒՍ (Գիտեմ-Ուզում եմ սովորել-Սովորել եմ)
12) մտածիր-զույգ կազմիր-հաղորդիր
13) խճանկար
14) պրիզմա
15) Վենի դիագրամ
16) Տ-աձև աղյուսակ
17) ելքի քարտերի լրացում
18) ձնագնդի
19) մտածող գլխարկներ
20) մտագրոհ (մտքերի հոսք)
21) կենտրոններով աշխատանք
22) Ֆրայերի մեթոդ

23) գիտելիքի դոմինո
24) երկու բան
25) վարդ, փուշ, բողբոջ
26) տասը տարի անց
27) սկսել, դադարեցնել, պահել
28) մետաիմացության թերթիկ
29) ինձնից առաջ հարցրու երեք հոգու
30) դասի զեկուցող
31) Ես-Դու-Մենք
32) լուսակիր
33) կիսատ նախադասություն
34) «Խաթարված հերթականություն»
35) Միավորային գնահատման իրականացում Quizizz և առցանց այլն գործիքի միջոցով
36) և ուսուցչի ընտրությամբ ցանկացած այլ ուսուցման մեթոդներ ու հնարներ:
Ամփոփիչ (միավորային և բնութագրող) գնահատման մեթոդները կարող են լրացվել կամ փոփոխվել ուսումնական տարվա ընթացքում՝ ուսուցչի հայեցողությամբ:

Միավորային գնահատումը կարող է իրականացվել գնահատման հետևյալ ձևերով՝
1) թեստ.
2) բանավոր հարցում.
3) գրավոր աշխատանք.
4) գործնական (լաբորատոր) աշխատանք.
5) նախագծային աշխատանք.
6) և ուսուցչի ընտրությամբ ցանկացած այլ ձև:

Սովորողի կիսամյակային գնահատականը ձևավորվում է պետական հանրակրթական ուսումնական հաստատությունների սովորողների գնահատման չափանիշների 38-րդ կետում սահմանված և ուսուցչի կողմից ընտրված գնահատման ձևերից ստացած գնահատականների միջին թվաբանականով, ինքնաշխատ եղանակով:

Լսեցին 9. 2023-2024 ուսումնական տարվա ԱՈՒՊ-ների քննարկման հարցը:
(զեկուցող՝ Ա. Ծատրյան)
Զեկուցողը ներկայացրեց ԱՈՒՊ-ների ներկայացման նոր կարգը: 2023-2024 ուստարվա սկզբում դպրոցն ունի 18 կրթության առանձնահատուկ պայմանների կարիք ունեցող աշակերտ, որոնց հետ պետք է աշխատել հատուկ սահմանված կարգով: Զեկուցողը առանձին–առանձին անդրադարձավ բոլոր աշակերտներին և ներկայացրեց նրանց հետ իրականացվող աշխատանքների գրաֆիկը:

Արտահայտվեցին՝ Ս. Ավանեսյանը:

Ս. Ավանեսյանը նշեց, որ ԿԱՊԿՈՒ աշակերտների հետ աշխատանքները կատարվում են պատշաճ մակարդակով: 2023-2024 ուստարում այդ աշխատանքները նույնպես կիրականացվեն բարձր մակարդակով, հատկապես ծանր խնդրով երեխաների հետ հատուկ աշխատանքներ ու հմտություններ են պահանջվում: ԱՈՒՊ-ները պետք է լրացվեն նոր կարգին համապատասխան: Ըստ ԿԱՊԿՈՒ աշակերտների կարողությունների և հնարավորությունների: Ս. Ավանեսյանը կարևորեց դիտարկման թերթիկների լրացումը, ուսուցչի

օգնականների, հատուկ մանկավարժների ու հոգեբանի հետ համատեղ ու համագործակցային աշխատանքները:

Որոշեցին՝ Ընդունել ի գիտություն ԱՈՒՊ-ների լրացման նոր կարգը, աշխատանքներն ու պարզեցումներն իրականացնել սահմանված պահանջներին համապատասխան սահմանված կարգով կիրառել դիտարկման թերթիկները:

Լսեցին 10. Ցուցադրական դասերի, դաս միջոցառումների, մրցույթ վիկտորինաների կազմակերպման, թեմաների և ժամկետների հաստատում:

(զեկուցող՝ Ս. Ավանեսյան)

Զեկուցողը նշեց ցուցադրական դասերի, դաս միջոցառումների կազմակերպման անհրաժեշտությունը, նրանց կարևորությունը դպրոցական աշխատանքներում, որպես կրթական և դաստիարակչական կարևոր բաղադրիչ, լավագույն աշխատանքների փորձի փոխանակում: Զեկուցողը ներկայացրեց նշված աշխատանքների իրականացման համար սահմանված ժամանակացուցային նախագիծը:

Արտահայտվեցին՝ Մ/մ անդամները

Արտահայտվողները նշեցին, որ նախորդ ուսումնական տարվա փորձը դրական է, առաջարկեցին 2023-2024 ուսումնական տարվա ընթացքում նույնպես շարունակել աշխատել այդ սկզբունքով:

Որոշեցին՝ Բնագիտամաթեմատիկական առարկաների մեթոդմիավորման ուսուցիչների կողմից անց կացնել բաց դասեր, դաս միջոցառումներ, մրցույթներ ժամանակացույցի համաձայն, որը կցվում է

Լսեցին 11. 2023-2024 ուսումնական տարվա ընթացքում դասալսումների, փոխադարձ դասալսումների իրականացման մասին հարցը:

(զեկուցող՝ Ս. Ավանեսյան)

Զեկուցողը նշեց, որ 2021-2022 ուսումնական տարվանից սկսած դպրոցում դասալսումները, այդ թվում՝ փոխադարձ դասալսումներն արձանագրվում են հատուկ արձանագրությունների թղթում, որտեղ սահմանված են չափանիշներ, որոնց համապատասխան գնահատվում են դասալսվողները: Ավանեսյանը հավելեց, որ արձանագրության ձևանմուշը համապատասխանում է կարգի պահանջներին, ինչպես նաև առաջարկեց 1 կիսամյակի ընթացքում յուրաքանչյուր ուսուցչի մոտ իրականացնել նվազագույնը 3 դասալսում, այդ թվում՝ փոխադարձ դասալսում, դրանք արձանագրել արձանագրությունների համապատասխան ձևանմուշի մեջ, իսկ կիսամյակի ավարտին դրանք սահմանված կարգով արխիվացնել:

Արտահայտվեցին՝ Մ/մ անդամները

Արտահայտվողները նշեցին, որ նախորդ երկու ուսումնական տարիների փորձը դրական է և նպատակահարմար գտան 2023-2024 ուսումնական տարվա ընթացքում նույնպես աշխատել նույն սկզբունքով:

Որոշեցին՝ 2023-2024 ուսումնական տարվա ընթաքցում դասալսումները, այդ թվում՝ փոխադարձ դասալսումներն արձանագրել հատուկ արձանագրությունների թղթում, որտեղ սահմանված են չափանիշներ, որոնց համապատասխան գնահատվում են դասալսվողները, 1 կիսամյակի ընթացքում յուրաքանչյուր ուսուցչի մոտ իրականացնել նվազագույնը 3 դասալսում, այդ թվում՝ փոխադարձ դասալսում, դրանք արձանագրել արձանագրությունների համապատասխան ձևանմուշի մեջ: Կիսամյակների և ուսումնական տարվա ավարտին ամփոփել դասալսումները և ներկայացնել մանկավարժական խորհդրի ամփոփիչ նիստում:

Լսեցին 12. Երկարօրյա խմբերում աշակերտների ընդգրկվածության մասին հարցը:

(զեկուցող՝ Ս. Ավանեսյան)

Զեկուցողը նշեց, որ երկարօրյա ուսուցումն այսուհետ պետք է իրականացվի 2023 թվականի սեպտեմբերի 4-ին №113-Ն որոշման համաձայն, որով հաստատվել է Հանրակրթական ծրագրեր իրականացնող ուսումնական հաստատություններում երկարօրյա ուսուցման կազմակերպման կարգը: Համապատասխան այդ կարգի երկարօրյա ուսուցումը կազմակերպվում է երկարօրյա խմբերում, որոնք ստեղծվում են՝

1) սովորողի ծնողի դիմումի հիման վրա՝
   ա. ուսումնադաստիարակչական աշխատանքներում ընտանիքին համակողմանի օգնություն ցուցաբերելու.
   բ. դասապատրաստումներին աջակցելու.
   գ. ինքնուրույն սովորելու կարողությունները զարգացնելու նպատակներով:
2) Երկարօրյա ուսուցումը կազմակերպվում է նաև հանրակրթության պետական չափորոշչի ներդրման շրջանակներում ուսումնառության ցածր արդյունք արձանագրած սովորողների առաջադիմության բարելավման նպատակով:

Զեկուցողը բոլորի ուշադրությունը հրավիրեց ուսումնառության ցածր արդյունք արձանագրած սովորողների ներգրավվածության վրա, շեշտեց, որ համապատասխան կարգի ՀՊՉ-ի ներդրման ժամանակացույցով սահմանված դասարաններում ՀՊՉ-ի պահանջներին համապատասխան սովորողի ուսումնառության ցածր արդյունքների դեպքում առարկայական ծրագրի յուրացումը ապահովելու նպատակով կրթության կառավարման տեղեկատվական համակարգի տվյալների հիման վրա տվյալ առարկան դասավանդող ուսուցիչը կամ սովորողի դասղեկը երկարօրյա ուսուցում կազմակերպելու համար դիմում է տնօրենին՝

1) այն դասարաններում, որտեղ չի իրականացվում միավորային գնահատում, սովորողների կողմից որևէ առարկայից առաջադիմության բնութագրող գնահատման միջոցով արձանագրված ցածր արդյունքներ ունենալու.
2) այն դասարաններում, որտեղ իրականացվում է միավորային գնահատում, սովորողների կողմից որևէ առարկայից 2 անգամ անընդմեջ 1-3 գնահատական ստանալու դեպքերում: Զեկուցողը ներկաների ուշադրությունը հրավիրեց վերոնշյալ 2-րդ կետին և շեշտեց, որ երկարօրյայի կազմակերպման և գնահատման կարգի միջև առկա է որոշակի հակասություն: Գնահատման կարգը չի նախատեսում 5-րդ և 7-րդ դասարաններում ընթացիկ գնահատում, սակայն երկարօրյայի կազմակերպման կարգում նշվում է, որ սովորողների կողմից որևէ առարկայից 2 անգամ անընդմեջ 1-3 գնահատական ստանալու դեպքերում վերջինս պետք է մնա երկաօրյա խմբակի:

Զեկուցողն առաջարկեց ուսուցման ընթացքում դիտարկել այն աշակերտներին, որոնք ուսումնառության ընթացքում հայտորոշիչ և ձևավորող գնահատումներից, ինչպես նաև բանավոր հարցումներից գրանցում են ցածր արդյունքներ, նրանց կրթության կառավարման տեղեկատվական համակարգում՝ էլեկտրոնային մատյանում տվյալ թեմաներից գնահատել 1-3 գնահատական, այսպիսով ապահովել 2 անգամ անընդմեջ 1-3 գնահատական ստանալու պայմանը և այդպիսով տվյալ աշակերտին ընդգրկելերկարօրյա խմբերում:

Արտահայտվեցին՝ ՄՄ անդամները

Արտահայտվողները նշեցին, որ կարգերի հակասությունն ակնհայտ է, սակայն համաձայնեցին զեկուցողի հետ, որ պետք է դիտարկել հետ մնացող աշակերտներին, ուսումնառության ընթացքում հայտորոշիչ և ձևավորող գնահատումներից, ինչպես նաև բանավոր հարցումներից ցածր արդյունքներ գրանցած աշակերտներին ընդգրկել երկարօրյա խմբերում, ինչպես նաև առաջարկությամբ հանդես գալ ու փոփոխություն կատարել վերոնշյալ կարգերում՝ համապատասխանությունն ապահովելու նպատակով:

Որոշեցին՝

1. Դպրոցում երկարօրյա ուսուցումն իրականացնել Հանրակրթական ծրագրեր իրականացնող ուսումնական հաստատություններում երկարօրյա ուսուցման կազմակերպման կարգի համաձայն։
2. Ուսուցման ընթացքում դիտարկել այն աշակերտներին, որոնք ուսումնառության ընթացքում հայտորոշիչ և ձևավորող գնահատումներից, ինչպես նաև բանավոր հարցումներից գրանցում են ցածր արդյունքներ, նրանց կրթության կառավարման տեղեկատվական համակարգում՝ էլեկտրոնային մատյանում տվյալ թեմաներից գնահատել 1-3 գնահատական, այսպիսով ապահովել 2 անգամ անընդմեջ 1-3 գնահատական ստանալու պայմանը և այդպիսով տվյալ աշակերտին ընդգրկելերկարօրյա խմբերում։
3. Հանդես գալ գնահատման և երկարօրյայի կարգերում փոփոխություն կատարելու առաջարկությամբ՝ դրանց միջև համապատասխանությունն ապահովելու նպատակով։

Մ/Մ նախագահ՝ _____ Ա.Դաջունց

Ուսումնական գծով փոխտնօրեն՝ _____ Ս. Ավանեսյան

«ԳՈՐԻՍԻ ՅՈՒ. ԲԱԽՇՅԱՆԻ ԱՆՎԱՆ ԹԻՎ 3 ՀԻՄՆԱԿԱՆ ԴՊՐՈՑ» ՊՈԱԿ-Ի
ԲՆԱԳԻՏԱՄԱԹԵՄԱՏԻԿԱԿԱՆ ԱՌԱՐԿԱՆԵՐԻ ՄԵԹՈԴՄԻԱՎՈՐՄԱՆ ՆԻՍՏԻ
ԱՐՁԱՆԱԳՐՈՒԹՅՈՒՆ № 2

«25» սեպտեմբեր 2023թ. ք. Գորիս

Նիստին ներկա էին ՄՄ հետևյալ անդամները՝

1. Անուշ Դաջունց (մ/մ նախագահ)
2. Սիրուշ Բաղդասարյան
3. Արփինե Մարտիրոսյան
4. Ալլա Զեյնալյան
5. Հերմինե Ալավերդյան
6. Օլյա Ղուլյան
7. Արմանուշ Բակունց
8. Մարինե Բաբայան
9. Մերի Մկրտչյան
10. Մարետա Հարությունյան
11. Կարինե Արզումանյան
12. Ալեքսանդր Հայրապետյան

Նիստին ներկա էր ուսումնական գծով փոխտնօրեն Սերգեյ Ավանեսյանը:

Օ Ր Ա Կ Ա Ր Գ

1. Բնագիտամաթեմատիկական առարկաների մեթոդմիավորման նիստի օրակարգի հաստատում:

(զեկուցող՝ Ա. Դաջունց)

2. Բնագիտամաթեմատիկական առարկաների մեթոդմիավորման նախորդ նիստի որոշումների կատարման ընթացքի մասին հաղորդում:

(զեկուցող՝ Ա. Դաջունց)

3. Էլեկտրոնային մատենավարության ստուգում:

(զեկուցող՝ Ա. Դաջունց)

4. Բնագիտամաթեմատիկական առարկաների մեթոդմիավորման կողմից թեմատիկ գրավոր աշխատանքների ու գործնական աշխատանքների ժամկետների փոփոխությունների քննարկումն ու հաստատումը:

(զեկուցող՝ Ա. Դաջունց)

5. Բնագիտամաթեմատիկական առարկաների մեթոդմիավորման կողմից թեմատիկ գրավոր աշխատանքներ կազմելու, տնօրենության կողմից մաթեմատիկա առարկայից տրվող գրավոր աշխատանքներին նախապատրաստվելու հարցերի քննարկում և հանձնարարականներ:

(զեկուցող՝ Ս. Ավանեսյան)

6. ԿԱՊԿՈՒ աշակերտների հետ ուսումնական գործընթացի պատշաճ իրականացումը:

(զեկուցող՝ Ս. Ավանեսյան)

7. Դասալսումների և փոխադարձ դասալսումների իրականացման հետ կապված հարցերի քննարկում:

(զեկուցող՝ Ա. Դաջունց)

Լսեցին 1. Բնագիտամաթեմատիկական առարկաների մեթոդմիավորման նիստի օրակարգի հաստատման մասին հարցը:

(զեկուցող՝ Ա. Դաջունց)

Զեկուցողը ներկայացրեց օրակարգի կետերը:

Արտահայտվեցին՝

Որոշեցին՝ Հաստատել 2023-2024 ուսումնական տարվա բնագիտամաթեմատիկական առարկաների մեթոդմիավորման 2-ին նիստի օրակարգը:

Լսեցին 2. Բնագիտամաթեմատիկական առարկաների մեթոդմիավորման նախորդ նիստի որոշումների կատարման ընթացքի մասին հարցը:

(զեկուցող՝ Ա. Դաջունց)

Զեկուցողը ներկայացրեց բնագիտամաթեմատիկական առարկաների մեթոդմիավորման նախորդ նիստում ընդունած որոշումների կատարման աշխատանքները և նշեց, որ դրանք հիմնականում կատարվել են:

Արտահայտվեցին՝

Որոշեցին՝ Ընդունել ի գիտություն մեթոդմիավորման նախորդ նիստի որոշումների կատարման ընթացքի մասին տեղեկատվությունը:

Լսեցին 3. Էլեկտրոնային մատենավարության ստուգում:

(զեկուցող՝ Ա. Դաջունց)

Զեկուցողը ներկայացրեց էլեկտրոնային մատյանի լրացման մեջ մասնակի փոփոխությունների մասին, մատյանները լրացնելուց նախապես կատարված փոփոխությունների մասին խորհրդակցել օպերատորների հետ, հետագա խնդիրներից խուսափելու համար:

Արտահայտվեցին՝ Ս. Ավանեսյանը:

Ավանեսյանը նշեց, որ անհրաժեշտ է էլեկտրոնային մատյաններում գրանցումները կատարել հաստատված և ներբեռնված ՕԹՊ-ներին համապատասխան: Զեկուցողը նշեց, որ պետք է լինել ավելի ուշադիր գնահատականների հարցում և սահմանված աշխատանքները կատարել ժամանակին: Նա մեթոդմիավորման նախագահին հանձնարարեց ամենշաբաթյա ստուգումներ իրականացնել և այդ տվյալները հայտնել ուսումնական մասին:

Որոշեցին՝ Ստուգման արդյունքները, մեթոդմիավորման նախագահի կողմից կատարված էլեկտրոնային մատյանների ամենշաբաթյա ստուգումները, դրանց արդյունքներն ընդունել ի գիտություն, ինչպես նաև ստուգման դրանց արդյունքներով ի հայտ եկած խնդիրները ներկայացնել ուսումնական գծով փոխտնօրենին:

Լսեցին 4. Բնագիտամաթեմատիկական առարկաների մեթոդմիավորման կողմից թեմատիկ գրավոր աշխատանքների ու գործնական աշխատանքների ժամկետների փոփոխությունների քննարկման ու հաստատման հարցը:

(զեկուցող՝ Ա. Դաջունց)

Զեկուցողը ներկայացրեց, հաստատված ՕԹՊ-ների թեմատիկ շեղումները մ/մ նիստում քննարկելու անհրաժեշտությունը, և միայն դրանց հիմնավորությունը հաստատվելուց հետո կթույլատրվի մատենավարության ընթացքում լրացումներն իրականացնել ՕԹՊ-ներից շեղումով: Նշեց, որ պետք է առավել ուշադիր լինել նոր չափորոշիչների պահանջների նկատմամբ:

Արտահայտվեցին՝ Ս. Բաղդասարյանը, Ա. Բակունցը

Արտահայտվողները նշեցին, որ լինում են դեպքեր, երբ անհրաժեշտություն է առաջանում, օրինակ՝ փոխել թեմատիկ գրավոր աշխատանքի օրը, հաշվի առնելով ՕԹՊ-ով դրա համար նախատեսված օրվա ընթացքում աշակերտների բացակայությունը:

Որոշեցին՝ Բնագիտամաթեմատիկական առարկաների մեթոդմիավորման կողմից օրացուցային-թեմատիկ պլաններում կատարված փոփոխությունների քննարկման և հաստատման մասին հարցն ընդունել ի գիտություն և

հնարավոր անհրաժեշտ փոփոխությունները կատարել բացառապես ՄՄ նիստում քննարկելուց հետո:

Լսեցին 5. Բնագիտամաթեմատիկական առարկաների մեթոդմիավորման կողմից գործնական աշխատանքներ կազմելու, տնօրենության կողմից մաթեմատիկա առարկայից տրվող գրավոր աշխատանքներին նախապատրաստման մասին հարցը:

(զեկուցող՝ Ս. Ավանեսյան)

Զեկուցողը ներկայացրեց թեմատիկ գրավոր աշխատանքների նոր ձևի ներդրման հարցը, թեմատիկ գրավոր աշխատանքների քանակի որոշման մասին ուսուցիչների կողմից 5-րդ և 7-րդ դասարաններում նոր չափորոշիչների հետ կապված փոփոխությունների ներդրումը: Զեկուցողն առաջարկեց նաև տնօրենության կողմից գրավոր աշխատանքները տալ 4 տարբերակով՝ թեստային սկզբունքով:

Սերգեյ Ավանեսյանը նշեց, որ նպատակահարմար է համարում, որ 2023-2024 ուսումնական տարվանից սկսած տնօրենության կողմից տրվող գրավոր աշխատանքների բովանդակությունը փոխվի և նախորդ ուսումնական տարիների ընթացքում տրվող թելադրության փոխարեն աշակերտներն աշխատեն թեստերով:

Արտահայտվեցին՝ Մ/մ անդամները:

Արտահայտվողները նշեցին, որ անհրաժեշտ է հետևել եռամակարդակ թեստեր կամ աշխատանքներ կազմելու սկզբունքին, ինչպես նաև գրավոր աշխատանքները հնարավորինս համապատասխանեցնել ավարտական թեստերին սկզբունքին:

Որոշեցին՝ Տնօրենության կողմից տրվող գրավոր աշխատանքները կազմել 4 տարբերակով:

Լսեցին 6. ԿԱՊԿՈՒ աշակերտների հետ ուսումնական գործընթացի պատշաճ իրականացումը:

(զեկուցող՝ Ս. Ավանեսյան)

Զեկուցողը կարևորեց ուսուցիչ-ուսուցչի օգնական-հատուկ մանկավարժ-հոգեբան համագործակցությունը: Նա նշեց, որ ուսուցչի օգնականը պարտադիր կերպով պետք է ուսուցչի կողմից ստանա համապատասխան հանձնարարականներ մինչև դասապրոցեսի սկսվելը, տվյալ օրվա դասի ընթացքում իրականացվելիք աշխատանքների հետ կապված, որից հետո նոր մեկնարկի աշխատանքները: Զեկուցողը ավելեցրեց, որ կարևոր է ԿԱՊԿՈՒ աշակերտների հետ աշխատանքը, ԱՈՒՊ-ների լրացման ընթացքը ներկայացնել ուսումնական տարվա մեկնարկից սկսած, նա նշեց, որ նոր ԱՈՒՊ-ների լրացման կարգը պարզեցված է և ուսուցիչները բավականին հեշտ են աշխատում: Նշվեց նաև ուսուցիչ-ծնող համագործակցության կարևորությունը: Առաջարկեց հաճախակի կազմակերպել քննարկումներ ուսուցչի, ուսուցչի օգնականների, հոգեբանի, հատուկ մանկավարժի և ծնողների միջև՝ առաջացած հնարավոր խնդիրները լուծելու նպատակով:

Արտահայտվեցին՝ Մ/մ անդամները

Արտահայտվողները նշեցին, որ կան ԿԱՊԿՈՒ աշակերտներ, որոնց հետ աշխատանքը բարդ է ոչ միայն ուսուցչի, այլ նաև ուսուցչի օգնականի համար: Առաջարկվեց ավելի սերտորեն համագործակցել ԳՏՄԱԿ-ի ներկայացուցիչների հետ, որպեսզի տվյալ աշակերտներին հնարավոր լինի հնարավորինս ավելի մասնակից դարձնել դասապրոցեսին և ապահովել ԱՈՒՊ-ով, օրվա դասի պլանով սահմանված նպատակները:

Որոշեցին՝ Ընդունել ի գիտություն զեկույցը, ուսումնական տարվա ընթացքում կազմակերպել հանդիպումներ ուսուցիչ-ուսուցչի օգնական-հոգեբան-հատուկ մանկավարժ ձևաչափով:

Լսեցին 7. Դասալսումների և փոխադարձ դասալսումների իրականացման հետ կապված հարցերի քննարկում:

(զեկուցող՝ Ա. Դաջունց)

Զեկուցողը նշեց, որ մեթոդմիավորման աշխատանքներում կարևոր նշանակություն ունի փոխադարձ դասալսումների կազմակերպումը: Հաշվի առնելով նոր ՀՊՉ-ներով և ծրագրերով ու մեթոդներով աշխատելու կարևորությունը, ինչպես նաև գնահատման նոր ձևերը անհրաժեշտ է փոխադարձ դասալսումների քննարկման ժամանակ ուշադրություն դարձնել այդ հարցերին:

Արտահայտվեցին՝ Սերգեյ Ավանեսյանը

Սերգեյ Ավանեսյանը նշեց, թե որքան արդյունավետ են փոխադարձ դասալսումները: Հավելելով, որ փոխադարձ դասալսումների արդյունքում ուսուցիչները պետք է քննարկեն նաև նոր ՀՊՉ-ներով ու նոր դասագրքերի հետ աշխատելու արդյունավետությունն ու թերությունները: Նշեց, որ անհրաժեշտ է կիրառել նաև վերապատրաստված ուսուցիչների ձեռք բերած հմտություններն ու կարողությունները, ուշադրություն դարձնել միջառարկայական կապերին, ինչպես նաև ուսումնական պրոցեսում հնարավորինս կիրառել ՏՀՏ տեխնոլոգիաները:

Որոշեցին՝ Ինչպես նախորդ ուսումնական տարիների ընթացքում, 2023-2024 ուսումնական տարվա ընթացքում նույնպես յուրաքանչյուր ուսուցչի մոտ իրականացնել նվազագույնը երեք դասալսում, հաճախակի կազմակերպել փոխադարձ դասալսումներ, կատարել քննարկումներ հատկապես ուշադրություն դարձնելով 5-րդ և 7-րդ դասարաններում ուսումնասիրվող առարկաներին:

Մ/Մ նախագահ՝ _____ Ա.Դաջունց

Ուսումնական գծով փոխտնօրեն՝ _____ Ս. Ավանեսյան

«ԳՈՐԻՍԻ ՅՈՒ. ԲԱԽՇՅԱՆԻ ԱՆՎԱՆ ԹԻՎ 3 ՀԻՄՆԱԿԱՆ ԴՊՐՈՑ» ՊՈԱԿ-Ի ԲՆԱԳԻՏԱՄԱԹԵՄԱՏԻԿԱԿԱՆ ԱՌԱՐԿԱՆԵՐԻ ՄԵԹՈԴՄԻԱՎՈՐՄԱՆ ՆԻՍՏԻ ԱՐՁԱՆԱԳՐՈՒԹՅՈՒՆ № 3

«26» հոկտեմբեր 2023թ. ք. Գորիս

Նիստին ներկա էին ՄՄ հետևյալ անդամները՝

1. Անուշ Դաջունց (մ/մ նախագահ)
2. Սիրուշ Բաղդասարյան
3. Արփինե Մարտիրոսյան
4. Ալլա Զեյնալյան
5. Հերմինե Ալավերդյան
6. Օլյա Ղուլյան
7. Արմանուշ Բակունց
8. Մարինե Բաբայան
9. Մերի Մկրտչյան
10. Մարետա Հարությունյան
11. Կարինե Արզումանյան
12. Ալեքսանդր Հայրապետյան

Նիստին ներկա էր ուսումնական գծով փոխտնօրեն Սերգեյ Ավանեսյանը:

Օ Ր Ա Կ Ա Ր Գ

1. Բնագիտամաթեմատիկական առարկաների մեթոդմիավորման նիստի օրակարգի հաստատում:

(զեկուցող՝ Ա.Դաջունց)

2. Բնագիտամաթեմատիկական առարկաների մեթոդմիավորման նախորդ նիստի որոշումների կատարման ընթացքի մասին հաղորդում:

(զեկուցող՝ Ա.Դաջունց)

3. Առարկայական օլիմպիադային մասնակցող աշակերտների հետ աշխատանքների կազմակերպումն ու դպրոցական փուլի կազմակերպումը:

(զեկուցող՝ Ա.Դաջունց)

4. Փոխադարձ դասալսումների կազմակերպում:

(զեկուցող՝ Ս. Ավանեսյան)

5. 5-9-րդ դասարաններում «Մաթեմատիկա» առարկայի դասավանդման դրվածքը:

(զեկուցող՝ Ա.Դաջունց)

6. Էլեկտրոնային մատենավարության ստուգում:

(զեկուցող՝ Ա.Դաջունց)

7. 2-րդ, 5-րդ և 7-րդ դասարաններում ՀՊՉ ներդրման գործընթացի վերահսկողություն:

(զեկուցող՝ Ս. Ավանեսյան)

Լսեցին 1. Բնագիտամաթեմատիկական առարկաների մեթոդմիավորման նիստի օրակարգի հաստատման մասին հարցը:

(զեկուցող՝ Ա. Դաջունց)

Զեկուցողը ներկայացրեց օրակարգի կետերը:

Արտահայտվեցին՝

Որոշեցին՝ Հաստատել 2023-2024 ուսումնական տարվա բնագիտամաթեմատիկական առարկաների մեթոդմիավորման 3-ին նիստի օրակարգը:

Լսեցին 2. Բնագիտամաթեմատիկական առարկաների մեթոդմիավորման նախորդ նիստի որոշումների կատարման ընթացքի մասին հարցը:

(զեկուցող՝ Ա.Դաջունց)

Զեկուցողը ներկայացրեց բնագիտամաթեմատիկական առարկաների մեթոդմիավորման նախորդ նիստում ընդունած որոշումների կատարման աշխատանքները և նշեց, որ դրանք կատարվել են սահմանված ժամկետներում:

Որոշեցին՝ Ընդունել ի գիտություն մեթոդմիավորման նախորդ նիստի որոշումների կատարման ընթացքի մասին տեղեկատվությունը:

Լսեցին 3. Առարկայական օլիմպիադային մասնակցող աշակերտների հետ աշխատանքների ու դպրոցական փուլի կազմակերպման հարցը:

(զեկուցող՝ Ա.Դաջունց)

Զեկուցողը նշեց, որ օլիմպիադաներին մասնակցող աշակերտների հաջողությունները ապահովելու համար անհրաժեշտ է մասնակից աշակերտների հետ տանել անհատական աշխատանքներ և նախապատրաստվել սովորողներին: Շատ կարևոր է օլիմպիադայում ընդգրկել տվյալ առարկայի նկատմամբ հետաքրքրություն ցուցաբերող աշակերտներին: Շաբաթվա ընթացքում առնվազն երկու անգամ ստուգել տրված հանձնարարությունների կատարումը և ըստ մշակված պլանի շարունակել աշխատանքները: Զեկուցողն ներկայացրեց նաև օլիմպիադայի դպրոցական փուլի ժամանակացույցի նախագիծը, հանձնաժողովների, վերահսկողների կազմը:

Արտահայտվեցին՝ Սերգեյ Ավանեսյանը

Սերգեյ Ավանեսյանը նշեց, որ անհրաժեշտ է նախապատրաստվել առարկայական օլիմպիադաների դպրոցական փուլին, կազմել հարցաթերթերը, հարցաշարերը:

Որոշեցին՝ Բնագիտամաթեմատիկական առարկաների ուսուցիչներին հանձնարարել օլիմպիադային մասնակցող աշակերտների հետ կազմակերպել անհատական աշխատանքներ և նախապատրաստել օլիմպիադային:

Հավանության արժանացնել օլիմպիադայի դպրոցական փուլի ժամանակացույցի նախագիծը, հանձնաժողովների, վերահսկողների կազմը (կցվում է):

Լսեցին 4. Փոխադարձ դասալսումների կազմակերպման մասին հարցը:

(զեկուցող՝ Ս. Ավանեսյան)

Զեկուցողը իրազեկեց բնագիտամաթեմատիկական առարկաներ դասավանդող ուսուցիչների կողմից իրականացվող փոխադարձ դասալսումների կազմակերպման հարցի կարևորությունը, կարևորվեց նաև նոր մեթոդների կիրառությունը: Նշվեց որ այդ դասալսումներին ցանկալի է, որ մասնակից լինեն նաև ՄԿԱ գծով փոխտնօրենը, ԴԱԿ-ը և այլ մեթոդմիավորման ուսուցիչների մասնակցությունը: Սերգեյ Ավանեսյանը նաև կարևորեց դասալսումների արդյունքների անկողմնակալ քննարկումն ու ամփոփումը՝ փորձառու ուսուցիչների կողմից իրականացվող փորձի փոխանակումը:

Արտահայտվեցին՝ Անուշ Դաջունցը, Արփինե Մարտիրոսյանը, Կարինե Արզումանյանը:

Արտահայտվողները նշեցին, որ փոխադարձ դասալսումները մանկավարժական նոր մեթոդների կիրառությունը դասապրոցեսի ընթացքում ավելի արդյունավետ են դարձնում: Կարևորվեց դասապրոցեսի ժամանակ աշակերտների մասնակցությունը, և աշակերտների ինքնուրույն աշխատելու կարողությունների ու հմտությունների զարգացմումը:

Որոշեցին՝ Փոխադարձ դասալսումների իրականացումը շարունակել, կազմակերպել ցուցադրական դասեր, դաս-միջոցառումներ: ընդգրկելով նաև այլ մեթոդմիավորման ուսուցիչների, դասերն անցկացնել նոր մեթոդների և հնարների կիրառմամբ:

Լսեցին 5. 5-9-րդ դասարաններում «Մաթեմատիկա» առարկայի դասավանդման դրվածքի մասին հարցը:

(զեկուցող՝ Ա.Դաջունց)

Զեկուցողն առաջարկեց կազմակերպել «Մաթեմատիկա» առարկայի դրվածքի ուսումնասիրություն 5-9-րդ դասարաններում, որոնց ընթացքում հատկապես ուշադրություն դարձնել 5-րդ և 7-րդ դասարաններում առարկայի դասավանդմանը, հաշվի առնելով այն հանգամանքը, որ տվյալ դասարաններում ուսուցումը կազմակերպվում է նոր ՀՊՉ-ներին համապատասխան:

Արտահայտվեցին՝ Ս. Բաղդասարյանը, Արփինե Մարտիրոսյանը, Ալլա Զեյնալյանը:

Արտահայտվողները նշեցին, որ իրենք նույնպես նպատակահարմար են համարում դրվածքի ուսումնասիրությունը, ինչպես նաև կարևորում են նաև նոր ՀՊՉ-ներով դասավանդվող դասարաններում դրա իրականացումն ու արդյունքների քննարկումն ուսումնական մասում, շեշտելով, որ քննարկումները հնարավորություն են տալիս նոր մեթոդներ, հնարներ սովորել և դրանք կիրառել ուսումնական գործընթացում:

Որոշեցին՝ Մանկավարժական խորհրդի նիստում առաջարկել 5-9-րդ դասարաններում «Մաթեմատիկա» առարկայից իրականացնել դասավանդման դրվածքի ուսումնասիրություն:

Լսեցին 6. Էլեկտրոնային մատենավարության ստուգում:

(զեկուցող՝ Ա. Դաջունց)

Զեկուցողը ներկայացրեց ստուգումների արդյունքները: Շեշտվեց էլեկտրոնային մատենավարության ճշգրիտ իրականացման կարևորությունը, խնդիրներից խուսափելու համար: Նշվեց, որ անհրաժեշտ է գրանցումները կատարել ըստ ՕԹՊ-ների, հատուկ ուշադրություն դարձնել հատկապես թեմատիկ գրավոր և գործնական աշխատանքների գնահատականների փոխանցմանը:

Արտահայտվեցին՝ Ս. Ավանեսյանը

Սերգեյ Ավանեսյանը նշեց, որ մ/մ նախագահը և տնօրինությունը պետք է վերահսկեն ուսուցիչների ամենօրյա կատարվող աշխատանքները կապված մատենավարության հետ, որպեսզի խուսափենք հետագա խնդիրներից:

Որոշեցին՝ Ի գիտություն ընդունել էլեկտրոնային մատենավարության ստուգման արդյունքները, կատարել էլեկտրոնային մատենավարության պարտադիր կատարողականի վերահսկում, առաջացած խնդիրներն ու հարցերը քննարկել ուսումնական գծով փոխտնօրեն Ս. Ավանեսյանի հետ:

Լսեցին 7. 2-րդ, 5-րդ և 7-րդ դասարաններում ՀՊՉ ներդրման գործընթացի վերահսկողության մասին հարցը:

(զեկուցող՝ Ս. Ավանեսյան)

Զեկուցողը նշեց, որ նախորդող ժամանակահատվածում իր, տնօրենի, մեթոդմիավորման նախագահի, դասարանների դասղեկների և Բնագիտամաթեմատիկական առարկաների ու մյուս մեթոդմիավորումների անդամների կողմից իրականացվել են դասալսումներ, դասերի դիտարկումներ, որոնց ընթացքում արձանագրվել է, որ 2-րդ, 5-րդ և 7-րդ դասարաններում ուսուցիչները հիմնականում ապահովում են նոր ՀՊՉ-ների պահանջները: Դասալսվող ուսուցիչների մոտ առկա էին օրացուցային-թեմատիկ պլանները, օրվա դասի պլանները՝ էլեկտրոնային տարբերակով, մատենավարությունը կազմակերպված էր օրացուցային-թեմատիկ պլաններին համապատասխան: Զեկուցողը նշեց, որ օրվա դասի պլանների մեջ ըստ պահանջի սահմանված էին

տվյալ թեմայի նպատակը, վերջնարդյունքը, ՀՊՉ համապատասխան կոդերը, խարվող հասկացությունները: Օրվա դասի պլանի գործընթացի քայլերում սահմանված էին այն քայլերը, որոնց համաձայն իրականացվում է դասապրոցեսը: Հստակ նշված էին ռեսուրսներն ու մեթոդները: Միևնույն ժամանակ զեկուցողը նշեց, որ որոշակի խնդիրներ նկատվեցին առարկայի ծրագրով նախատեսված կարողությունների զարգացման հետ կապված: Նկատելի էր, որ որոշ ուսուցիչներ ամբողջապես չեն ուսումնասիրել իրենց առարկաների ծրագրերը, ինչը նաև հանգեցնում է առարկայի ծրագրով նախատեսված կարողությունների ոչ ամբողջական պատկերացմանը: Զեկուցողը նշեց, որ քանի որ օրվա դասի պլանի մեջ հստակ սահմանված է տվյալ օրվա թեմայի վերջնարդյունքը, ուսուցիչները կարողանում են պատկերացնել, թե դասի ավարտին ինչ վերջնարդյունքներ պետք է ապահովեն, ինչն ուսուցիչների մոտ հաջողվում է:

Զեկուցողը նշեց, որ առանձնակի ուշադրություն է դարձվել դասապրոցեսին աշակերտների ներգրավվածությանն ու գնահատման վերաբերյալ հարցերին: Աշակերտների ներգրավվածությանն հետ զեկուցողը նշեց, որ խնդիրը հիմնականում կապված է այն աշակերտների հետ, որոնք հետ են մնում, շեշտեց, որ այդ աշակերտներն ընդգրկվում են երկարօրյա խմբերում: ԿԱՊԿՈՒ աշակերտների ամբողջական ներգրավվումը դասապրոցեսին իրականացվում է հիմնականում ուսուցչի օգնականների օգնությամբ և նրանց համար սահմանված ԱՈՒՊ-ների համաձայն: Որոշ աշակերտների հետ աշխատանքն է իրականացվում հոգեբանի կողմից, որպեսզի հնարավոր լինի նրանց նույնպես ներգրավվել դասապրոցեսին:

Զեկուցողը բոլորի ուշադրությունը հրավիրեց գնահատման հետ կապված հարցերին, նշեց, որ հիմնականում բացթողում է նկատում գնահատման դեպքում. որոշ ուսուցիչներ ամբողջապես չեն պատկերացնում գնահատման նոր համակարգի պահանջները, ինչի պատճառով չեն կարողանում կիրառել այն ամբողջ գործիքակազմը, որն ընձեռում է հայտորոշիչ, ձևավորող ամփոփիչ գնահատումները:

Զեկուցողն առաջարկեց ուշադրություն դարձնել առարկայի ծրագրով նախատեսված կարողությունների զարգացման, տվյալ թեմայի վերջնարդյունքների զարգացման, ուսումնական գործընթացում աշակերտների ներգրավվածության, ինչպես նաև գնահատման նոր համակարգին և այս ուղղություններով կազմակերպել հանդիպումներ, քննարկումներ:

Արտահայտվեցին՝ ՄՄ անդամները

Արտահայտվողները նշեցին, որ համակարծիք են զեկուցողի դիտարկումների հետ, հավելեցին, որ անհրաժեշտ են համարում լրացուցիչ հանդիպումներ, քննարկումներ կազմակերպել՝ ունեցած գիտելիքները բարելավելու, թարմացնելու ուղղությամբ:

Որոշեցին՝

1. 2-րդ, 5-րդ և 7-րդ դասարաններում իրականացնել ՀՊՉ ներդրման գործընթացի վերահսկողության, 2 ամիսը 1 անգամ հարցը քննարկել ՄՄ նիստի ընթացքում:
2. ՄՄ նիստերի ընթացքում իրականացնել քննարկումներ առարկայի ծրագրով նախատեսված կարողությունների զարգացման, տվյալ թեմայի վերջնարդյունքների զարգացման, ուսումնական գործընթացում աշակերտների ներգրավվածության, ինչպես նաև գնահատման նոր համակարգի շուրջ:
3. Դպրոցում կազմակերպել վերապատրաստումներ գնահատման, կարողունակությունների, վերջնարդյունքների և դասապրոցեսում աշակերտների ներգրավվածության շուրջ, դրանում ներգրավելով դպրոցի բոլոր մանկավարժներին:

Մ/Մ նախագահ՝ _____ Ա.Դաջունց

Ուսումնական գծով փոխտնօրեն՝ _____ Ս. Ավանեսյան

«ԳՈՐԻՍԻ ՅՈՒ. ԲԱԽՇՅԱՆԻ ԱՆՎԱՆ ԹԻՎ 3 ՀԻՄՆԱԿԱՆ ԴՊՐՈՑ» ՊՈԱԿ-Ի
ԲՆԱԳԻՏԱՄԱԹԵՄԱՏԻԿԱԿԱՆ ԱՌԱՐԿԱՆԵՐԻ ՄԵԹՈԴՄԻԱՎՈՐՄԱՆ ՆԻՍՏԻ
ԱՐՁԱՆԱԳՐՈՒԹՅՈՒՆ № 4

«29» նոյեմբեր 2023թ. ք. Գորիս

Նիստին ներկա էին ՄՄ հետևյալ անդամները՝

1. Անուշ Դաջունց (մ/մ նախագահ)
2. Սիրուշ Բաղդասարյան
3. Արփինե Մարտիրոսյան
4. Ալլա Զեյնալյան
5. Հերմինե Ալավերդյան
6. Օլյա Ղուլյան
7. Արմանուշ Բակունց
8. Մարինե Բաբայան
9. Մերի Մկրտչյան
10. Մարետա Հարությունյան
11. Կարինե Արզումանյան
12. Ալեքսանդր Հայրապետյան

Նիստին ներկա էր ուսումնական գծով փոխտնօրեն Սերգեյ Ավանեսյանը և ուսուցչի օգնական Արփինե Ծատրյանը:

Օ Ր Ա Կ Ա Ր Գ

1. Բնագիտամաթեմատիկական առարկաների մեթոդմիավորման նիստի օրակարգի հաստատում:

(զեկուցող՝ Ա. Դաջունց)

2. Բնագիտամաթեմատիկական առարկաների մեթոդմիավորման նախորդ նիստի որոշումների կատարման ընթացքի մասին հաղորդում:

(զեկուցող՝ Ա. Դաջունց)

3. Հատուկ մանկավարժի, հոգեբանի, ուսուցչի օգնականների հետ համագործակցության և ԱՈԻՊ-ների, դիտարկման թերթիկների հետ ընթացիկ աշխատանքների քննարկում:

(զեկուցող՝ Ա. Ծատրյան)

4. Առարկայական օլիմպիադաների դպրոցական փուլի արդյունքները:

(զեկուցող՝ Ս. Ավանեսյան)

5. Էլեկտրոնային մատենավարության ստուգում:

(զեկուցող՝ Ա. Դաջունց

Լսեցին 1. Բնագիտամաթեմատիկական առարկաների մեթոդմիավորման նիստի օրակարգի հաստատման մասին հարցը:

(զեկուցող՝ Ա. Դաջունց)

Զեկուցողը ներկայացրեց օրակարգի կետերը:

Արտահայտվեցին՝

Որոշեցին՝ Հաստատել 2023-2024 ուսումնական տարվա բնագիտամաթեմատիկական առարկաների մեթոդմիավորման 4-րդ նիստի օրակարգը:

Լսեցին 2. Բնագիտամաթեմատիկական առարկաների մեթոդմիավորման նախորդ նիստի որոշումների կատարման ընթացքի մասին հարցը:

(զեկուցող՝ Ա. Դաջունց)

Զեկուցողը ներկայացրեց բնագիտամաթեմատիկական առարկաների մեթոդմիավորման նախորդ նիստում ընդունած որոշումների կատարման

մասին, ամփոփվեց կատարված աշխատանքները և նշեց, որ դրանք կատարվել են սահմանված ժամկետում:

Արտահայտվեցին՝

Որոշեցին՝ Բնագիտամաթեմատիկական առարկաների մեթոդմիավորման նախորդ նիստի որոշումների կատարման ընթացքի մասին մ/մ նախագահի հաղորդումն ընդունել ի գիտություն:

Լսեցին 3. Հատուկ մանկավարժի, հոգեբանի, ուսուցչի օգնականների հետ համագործակցության և ԱՈՒՊ-ների, դիտարկման թերթիկների հետ ընթացիկ աշխատանքի մասին հարցը:

(զեկուցող՝ Ա. Ծատրյան)

Զեկուցողը նշեց, որ ԿԱՊԿՈՒ աշակերտների աշխատանքներում շատ կարևոր է ամենաօրյա համագործակցությունը հատուկ մանկավարժի, հոգեբանի և ուսուցչի օգնականների հետ, առաջացած խնդիրները արդյունավետ լուծելու համար: Նշվեց նաև անհատական աշխատանքի կարևորության մասին: Զեկուցողը ներկայացրեց նաև նախորդող ժամանակահատվածում ԿԱՊԿՈՒ աշակերտների ԱՈՒՊ-ների, դիտարկման թերթիկների լրացման մասին ինֆորմացիան, նշվեց, որ աշխատանքները կատարվում են սահմանված ժամկետներում, պահանջներին համապատասխան: Զեկուցողը նշեց, որ ԿԱՊԿՈՒ աշակերտների հետ աշխատում են նաև ԳՏՄԱԿ-ի մասնագետները, ըստ սահմանված կարգի երկու ամիսը մեկ անգամ իրականացվում են քննարկումներ ԳՏՄԱԿ-ի ներկայացուցիչների, ուսուցիչներին, ուսուցչի օգնականների, հոգեբանի, հատուկ մանկավարժի և ԿԱՊԿՈՒ աշակերտների ծնողների մասնակցությամբ, որին մասնակցում է նաև ուսումնական գծով փոխտնօրեն Սերգեյ Ավանեսյանը:

Արտահայտվեցին՝ Մ/մ անդամները, Ս. Ավանեսյանը:

Սերգեյ Ավանեսյանը նշեց, որ անհրաժեշտ է և շատ կարևոր հաշվի առնել երեխաների տարիքային փոփոխությունները, քանի որ վարքի փոփոխությունները ևս պայմանավորված են ավելի շատ տարիքային առանձնահատկություններով, կարևորեց աշխատանքի ճիշտ կազմակերպումը և ծնող-ուսուցիչ-աջակցության թիմ համագործակցությունը: Արտահայտվողները կարևորեցին ՕԴՊ-ով սահմանված նպատակների իրագործումը՝ ԱՈՒՊ-ի շրջանակներում:

Որոշեցին՝ Ընդունել ի գիտություն նախորդող ժամանակահատվածում ԿԱՊԿՈՒ աշակերտների ԱՈՒՊ-ների, դիտարկման թերթիկների լրացման կարգի մասին ինֆորմացիան:

Լսեցին 4. Բնագիտամաթեմատիկական առարկաներից առարկայական օլիմպիադայի մասնակից աշակերտների հետ աշխատանքների կազմակերպման, օլիմպիադայի դպրոցական փուլի կազմակերպման մասին հարցը:

(զեկուցող՝ Ս. Ավանեսյան)

Զեկուցողը ներկայացրեց առարկայական օլիմպիադաների դպրոցական փուլի ճիշտ կազմակերպման կարևորությունը: Բնագիտամաթեմատիկական առարկաներից «Մաթեմատիկա» առարկայից ավելի շատ աշակերտներ են մասնակցում դպրոցական փուլին, իսկ բնագիտական առարկաներից ավելի քիչ, անհրաժեշտ է խրախուսել աշակերտներին, նրանց հետ տանել անհատական աշխատանքներ: Զեկուցողը նշեց, որ արդեն ավարտվել է «ՆԶՊ», «Ռուսաց լեզու», «Ֆրանսերեն», «Հայոց լեզու», «Գրականություն», «ՀԵՊ», «Պատմություն» և «Անգլերեն» առարկաներից առարկայական օլիմպիադաների դպրոցական փուլ, իսկ որոշ բնագիտական առարկաներ դեռ ընթացքում են:

Արտահայտվեցին՝ Մ/մ անդամները

Արտահայտվողները կարևորեցին օլիմպիադայի դպրոցական փուլի արդար և անկողմնակալ կազմակերպումը, շեշտվեց, որ արդեն քանի տարի է օլիմպիադաների դպրոցական փուլի կազմակերպումը գրեթե չի տարբերվում տարածքային, մարզային փուլերից, ինչպես նաև կարևոր համարեց այն փաստը, որ օլիմպիադայի ընթացքը վերահսկում էին ոչ մասնագետները և խիստ հետևում էին սահմանված կարգի պահպանմանը:

Որոշեցին՝ Ընդունել ի գիտություն առարկայական օլիմպիադաների դպրոցական փուլի ընթացիկ արդյունքներն ու առարկայական օլիմպիադաների դպրոցական փուլի հանձնաժողովների որոշումները (կցվում է արձանագրությունը):

Լսեցին 5. Էլեկտրոնային մատենավարության ստուգում:

(զեկուցող՝ Ա. Դաջունց)

Զեկուցողը մանրամասն ներկայացրեց նախորդող ժամանակահատվածում էլեկտրոնային մատյանների ստուգման արդյունքները:

Արտահայտվեցին՝ Ս. Ավանեսյանը:

Զեկուցողը կարևորեց էլեկտրոնային մատյանում յուրաքանչյուր ուսուցչի կողմից կատարվող աշխատանքի մեծ պատասխանատվությունը: Նշվեց, որ ստուգման արդյունքում արձանագրվել են որոշակի թերություններ

Որոշեցին՝ Ի գիտություն ընդունել նիստում ներկայացված էլեկտրոնային մատենավարության ստուգման արդյունքները

Մ/Մ նախագահ՝ _____ Ա.Դաջունց

Ուսումնական գծով փոխտնօրեն՝ _____ Ս. Ավանեսյան

«ԳՈՐԻՍԻ ՅՈՒ. ԲԱԽՇՅԱՆԻ ԱՆՎԱՆ ԹԻՎ 3 ՀԻՄՆԱԿԱՆ ԴՊՐՈՑ» ՊՈԱԿ-Ի ԲՆԱԳԻՏԱՄԱԹԵՄԱՏԻԿԱԿԱՆ ԱՌԱՐԿԱՆԵՐԻ ՄԵԹՈԴՄԻԱՎՈՐՄԱՆ ՆԻՍՏԻ ԱՐՁԱՆԱԳՐՈՒԹՅՈՒՆ № 5

«22» դեկտեմբեր 2023թ. ք. Գորիս

Նիստին ներկա էին ՄՄ հետևյալ անդամները՝

1. Անուշ Դաջունց (մ/մ նախագահ)
2. Սիրուշ Բաղդասարյան
3. Արփինե Մարտիրոսյան
4. Ալլա Զեյնալյան
5. Հերմինե Ալավերդյան
6. Օլյա Ղուլյան
7. Արմանուշ Բակունց
8. Մարինե Բաբայան
9. Մերի Մկրտչյան
10. Մարետա Հարությունյան
11. Կարինե Արզումանյան
12. Ալեքսանդր Հայրապետյան

Նիստին ներկա էր փոխտնօրեն Սերգեյ Ավանեսյանը, ուսուցչի օգնական Արփինե Ծատրյանը

Օ Ր Ա Կ Ա Ր Գ

1. Բնագիտամաթեմատիկական առարկաների մեթոդմիավորման նիստի օրակարգի հաստատում:

(զեկուցող՝ Ա. Դաջունց)

2. Բնագիտամաթեմատիկական առարկաների մեթոդմիավորման նախորդ նիստի որոշումների կատարման ընթացքի մասին հաղորդում:

(զեկուցող՝ Ա. Դաջունց)

3. 2023-2024 ուսումնական տարվա առաջին կիսամյակում տնօրենության կողմից «Մաթեմատիկա» առարկայից տրվող գրավոր աշխատանքների արդյունքների քննարկում:

(զեկուցող՝ Ս. Ավանեսյան)

4. Դպրոցական առարկայական օլիմպիադաների արդյունքների քննարկում:

(զեկուցող՝ Ս. Ավանեսյան)

5. 2023-2024 ուսումնական տարվա առաջին կիսամյակում տրված թեմատիկ գրավոր աշխատանքների, գործնական աշխատանքների քանակի ու ծրագրերի կատարման հարցերի քննարկում:

(զեկուցող՝ Ա. Դաջունց)

6. 2023-2024 ուսումնական տարվա առաջին կիսամյակի ընթացքում կատարած դասալսումների քննարկում, վերլուծություն և ամփոփում:

(զեկուցող՝ Ա. Դաջունց)

7. 2023-2024 ուսումնական տարվա առաջին կիսամյակի ընթացքում իրականացված նախագծային աշխատանքների հաշվետվությունների քննարկում:

(զեկուցող՝ Ս. Ավանեսյան)

8. 2023-2024 ուսումնական տարվա 1-ին կիսամյակի էլեկտրոնային մատենավարության ստուգման արդյունքների ամփոփում:

(զեկուցող՝ Ս. Ավանեսյան)

9. Բնագիտամաթեմատիկական առարկաների մեթոդմիավորման 2023-2024 ուսումնական տարվա 2-րդ կիսամյակի ժամաբաժանման փոփոխություն և հաստատում:

(զեկուցող՝ Ա. Դաջունց)

10. Բնագիտամաթեմատիկական առարկաների մեթոդմիավորման անդամ ուսուցիչների պարտադիր վերապատրաստման մասնակիցների ցանկի քննարկում:

(զեկուցող՝ Ս. Ավանեսյան)

11. 2023-2024 ուսումնական տարվա ընթացքում ԱՈՒՊ-ների, դիտարկման թերթիկների հետ կապված աշխատանքը:

(զեկուցող՝ Ա. Ծատրյան)

12. 5-9-րդ դասարաններում «Մաթեմատիկա» առարկայի դասավանդման դրվածքի ամփոփում:

(զեկուցող՝ Ա. Դաջունց)

13. 2-րդ, 5-րդ և 7-րդ դասարաններում ՀՊՉ ներդրման գործընթացի վերահսկողություն:

(զեկուցող՝ Ս. Ավանեսյան)

Լսեցին 1. Բնագիտամաթեմատիկական առարկաների մեթոդմիավորման նիստի օրակարգի հաստատման մասին հարցը:

(զեկուցող՝ Ա. Դաջունց)

Զեկուցողը ներկայացրեց բնագիտամաթեմատիկական առարկաների մեթոդմիավորմանօրակարգի կետերը:

Արտահայտվեցին՝

Որոշեցին՝ Հաստատել 2023-2024 ուսումնական տարվա բնագիտամաթեմատիկական առարկաների մեթոդմիավորման 5-րդ նիստի օրակարգը:

Լսեցին 2. Բնագիտամաթեմատիկական առարկաների մեթոդմիավորման նախորդ նիստի որոշումների կատարման ընթացքի մասին հարցը:

(զեկուցող՝ Ա. Դաջունց)

Զեկուցողը ներկայացրեց բնագիտամաթեմատիկական առարկաների մեթոդմիավորման նախորդ նիստում ընդունած որոշումների կատարողականը, ամփոփվեց կատարված աշխատանքները, անդրադարձավ կատարված աշխատանքներին: Նշվեց, որ աշխատանքները կատարվել են սահմանված ժամկետում:

Արտահայտվեցին՝

Որոշեցին՝ Բնագիտամաթեմատիկական առարկաների մեթոդմիավորման նախորդ նիստի որոշումների կատարման ընթացքի մասին մ/մ նախագահի հաղորդումն ընդունել ի գիտություն:

Լսեցին 3. 2023-2024 ուսումնական տարվա առաջին կիսամյակում տնօրենության կողմից մաթեմատիկա առարկայից տրվող գրավոր աշխատանքների արդյունքների քննարկման հարցը:

(զեկուցող՝ Ս. Ավանեսյան)

Զեկուցողը տնօրենության կողմից տրվող գրավոր աշխատանքներում կարևորեց աշակերտների մեծ մասի կողմից ինքնուրույն աշխատելու կարողությունը և ուսուցիչների կոմից գրավորների ստուգման մեթոդները, որը թույլ է տալիս ավելի անաչառ ու անկողմնակալ լինել, հնարավորություն է տալիս պարզելու գրավոր աշխատանքների ժամանակ սովորողների մոտ հանդիպող դժվարություններն ու խնդիրները:

Արտահայտվեցին՝ Ս. Բաղդասարյանը, Արփինե Մարտիրոսյանը, Ալլա Զեյնալյանը:

Արտահայտվողները նշեցին, որ սովորողները շատ դեպքերում այդ աշխատանքերը ավելի արագ ու ճիշտ են կատարում, քան թեմատիկ գրավոր աշխատանքների ժամանակ, ինչպես նաև շեշտվեց, որ աշակերտներն այլևս աշխատանքներ իրականացնում են թեաստային սկզբունքով, ինչը հնարավորություն է տալիս նրանց մոտ ձևավորել սթրեսակայություն ու նմանատիպ աշխատանքներ կատարելու հմտությունը, ինչը կարևոր է օլիմպիադաների, ավարտական քննությունների համար:

Որոշեցին՝ Ընդունել ի գիտություն 2023-2024 ուսումնական տարվա առաջին կիսամյակում տնօրենության կողմից տրվող գրավոր աշխատանքների արդյունքները (կցվում է ամփոփագիրը)։

Լսեցին 4. Դպրոցական առարկայական օլիմպիադաների արդյունքների քննարկման մասին հարցը։

(զեկուցող՝ Ս. Ավանեսյան)

Զեկուցողը նշեց, որ 2023-2024 ուսումնական տարվա առարկայական օլիմպիադաների դպրոցական փուլն ըստ ժամանակացույցի մեկնարկել է 2023 թվականի նոյեմբերի 17-ին և ավարտվել դեկտեմբերի 6-ին։ 12 առարկաներից դպրոցական փուլին հայտագրվել է 5-9-րդ դասարանների 193 աշակերտ, որից՝

- Աշխարհագրություն – 5 աշակերտ
- Քիմիա – 3 աշակերտ
- Կենսաբանություն – 7 աշակերտ
- Ֆիզիկա – 2 աշակերտ
- Մաթեմատիկա – 77 աշակերտ
- Հայոց լեզու – 18 աշակերտ
- Գրականություն – 18 աշակերտ
- ՀԵՊ – 8 աշակերտ
- Անգլերեն – 17 աշակերտ
- Պատմություն – 8 աշակերտ
- Ֆրանսերեն – 6 աշակերտ
- Ռուսաց լեզու – 7 աշակերտ
- ՆԶՊ – 17 աշակերտ։

Դպրոցական փուլի արդյունքներով տարածքային փուլ է անցել 5-9-րդ դասարաններից 34 աշակերտ, որից՝

- ՆԶՊ - 4 աշակերտ
- Ռուսաց լեզու - 4 աշակերտ
- Ֆրանսերեն - 2 աշակերտ
- Հայոց լեզու - 5 աշակերտ
- Գրականություն - 7 աշակերտ
- ՀԵՊ - 3 աշակերտ
- Պատմություն - 4 աշակերտ
- Անգլերեն - 3 աշակերտ
- Մաթեմատիկա - 2 աշակերտ։

Տարածքային փուլի արդյունքներով մարզային փուլ է անցել 5-9-րդ դասարաններից 10 աշակերտ, որից՝

- Ֆրանսերեն - 2 աշակերտ
- Ռուսաց լեզու - 1 աշակերտ
- ՀԵՊ - 1 աշակերտ
- Պատմություն - 1 աշակերտ
- Հայոց լեզու - 3 աշակերտ
- Մաթեմատիկա - 2 աշակերտ։

Զեկուցողը կարևորեց հետագա կազմակերպվելիք աշխատանքների ճիշտ համակարգումը՝ հաջորդ փուլերում հաջողություններ արձանագրելու համար։

Արտահայտվեցին՝ ՄՄ անդամները։

Արտահայտվողները նշեցին, որ նույն աշակերտի մասնակցությունը մի քանի օլիմպիադաների լրացուցիչ դժվարություններ է ստեղծում աշակերտի համար, ինչի արդյունքում աշակերտը չի կարողանում պատշաճ կերպով ինքնադրսևորվել։ Առաջարկեցին այսուհետ կարևորել ոչ միայն աշակերտների ցանկությունը որևէ առարկայից օլիմպիադային մասնակցելու հետ կապված, այլ նաև նրանց մասնակցության հարցը քննարկել բոլոր առարկաների

ուսուցիչների հետ և յուրաքանչյուր աշակերտի ընդգրկել այն առարկայի օլիմպիադայի մասնակցության ցանկում, որից նա կկարողանա ցուցաբերել առավել արդյունք:

Որոշեցին՝ Ընդունել ի գիտություն 2023-2024 ուսումնական տարվա առարկայական օլիմպիադաների դպրոցական և տարածքային փուլերի արդյունքները: Ապահովել առարկայական օլիմպիադաների հաջորդ փուլերում դպրոցի աշակերտների պատշաճ մասնակցությունն ու անհրաժեշտ պայմանները (կցվում է դպրոցական և տարածքային փուլերի արդյունքները):

Լսեցին 5. 2023-2024 ուսումնական տարվա առաջին կիսամյակում տրված թեմատիկ գրավոր աշխատանքների, գործնական աշխատանքների քանակի ու ծրագրերի կատարման հարցերի քննարկման մասին հարցը:

(զեկուցող՝ Ա. Դաջունց)

Զեկուցողը նշեց, որ 2023-2024 ուսումնական տարվա առաջին կիսամյակի ընթացքում տրված գրավոր աշխատանքներ քանակն և տեսակը համապատասխանում են ՕԹՊ-ներով նախատեսված աշխատանքներին, թեմատիկ և գործնական աշխատանքների քանակն ըստ ՕԹՊ-ների պահանջված է: Ծրագրային աշխատանքները ինչպես և ինչ ժամկետներում նախատեսված էր կատարված են:

Արտահայտվեցին՝ Ս. Ավանեսյանը, մ/մ անդամները:

Սերգեյ Ավանեսյանը նշեց, որ գործնական և թեմատիկ գրավոր աշխատանքների տարբերակները կազմելիս անպայման պետք է հաշվի առնել չափորոշչային պահանջները, կարևորեց, որ թեմատիկ ու գործնական աշխատանքները տրված լինեն ըստ ժամաքանակի և տեսակի, հավելեց, որ 2023-2024 ուսումնական տարվանից սկսած մեթոդական միավորումներում հաստատվում են թեմատիկ գրավոր աշխատանքների և գործնական աշխատանքների տեսակներն ու քանակները, որոնց համապատասխան ուսումնական տարվա ընթացքում ուսուցիչները պետք է իրականացնեն այդ աշխատանքները:

Որոշեցին՝ Ընդունել ի գիտություն առաջին կիսամյակի թեմատիկ գրավոր և գործնական աշխատանքների կատարողականը, ինչպես նաև մեթոդմիավորման նախագահի կողմից կատարել ստուգումներ թեմատիկ գրավոր աշխատանքների բովանդակության և քանակի հետ կապված:

Լսեցին 6. 2023-2024 ուսումնական տարվա առաջին կիսամյակի ընթացքում կատարած դասալսումների քննարկման, վերլուծության և ամփոփման մասին հարցը:

(զեկուցող՝ Ա. Դաջունց)

Զեկուցողը ներկայացրեց 2023-2024 ուսումնական տարվա 1-ին կիսամյակի ընթացքում տնօրինության ու բնագիտամաթեմատիկական առարկաների մեթոդմիավորման նախագահի և անդամների կողմից կատարված դասալսումների մասին ինֆորմացիան, քննարկումներն ու դիտարկումները: Նշեց, որ անհրաժեշտ է հաճախակի կազմակերպել փոխադարձ դասալսումներ, կատարել քննարկումներ, դիտարկումներ, վեր հանել թերությունները, դրանք շտկելու համար համապատասխան միջոցներ ձեռնարկել: Զեկուցողը ներկայացրեց 1-ին կիսամյակի ընթացքում իրականացված դասալսումների արդյունքները:

Արտահայտվեցին՝ Ս. Ավանեսյանը, մեթոդմիավորման անդամները:

Մեթոդմիավորման անդամները կարևորեցին մեթոդների և հնարների կիրառումը, դրանց նպատակային, տեղին լինելն ու այն, որ ներգրավվեն բոլոր աշակերտները: Կարևորվեց դասալսումների ընթացքում համագործակցային մոտեցումներ իրականացնելու անհրաժեշտությունը: Արտահայտվողները

կարևոր համարեցին արդյունքների ամփոփման ժամանակ ուսուցիչների կողմից ցուցաբերված մոտեցումները, առաջարկները և վեր հանված խնդիրների քննարկման եղանակները:
Փոխտնօրեն Ավանեսյանը նշեց, որ 2021-2022 ուսումնական տարվանից սկսած դպրոցում դասալսումները, այդ թվում՝ փոխադարձ դասալսումներն արձանագրվում են հատուկ արձանագրությունների թղթում, որտեղ սահմանված են չափանիշներ, որոնց համապատասխան գնահատվում են դասալսվողները: Ավանեսյանը հավելեց, որ արձանագրության ձևանմուշը համապատասխանում է կարգի պահանջներին:

Որոշեցին՝ Ընդունել ի գիտություն 2023-2024 ուսումնական տարվա 1-ին կիսամյակի ընթացքում կատարված դասալսումների արդյունքները և շարունակել դասալսումներն իրականացնել արձանագրության ձևանմուշով (կցվում է ամփոփագիրը):

Լսեցին 7. 2023-2024 ուսումնական տարվա առաջին կիսամյակի ընթացքում իրականացված նախագծային աշխատանքների հաշվետվությունների քննարկման մասին հարցը:

(զեկուցող՝ Ս. Ավանեսյան)

Զեկուցողը նշեց, որ 2023-2024 ուսումնական տարվա առաջին կիսամյակի ընթացքում իրականացվել է 8 նախագծային աշխատանք, որից 5-ը՝ միջառարկայական, իսկ 3-ը՝ ներառարկայական: Առաջին կիսամյակի ընթացքում նախագծային աշխատանքներ են իրականացվել «Ֆրանսերեն», «ԹԳՀԳ», «Հայոց պատմություն», «Գրականություն», «Հայոց լեզու», «Մաթեմատիկա», «Անգլերեն», «Կենսաբանություն» առարկաներից: Նախագծային աշխատանքները ղեկավարել են համապատասխան առարկաների ուսուցիչները, իսկ մասնակցել են 7-րդ դասարանների այն աշակերտները, որոնք ընդգրկված են եղել այդ խմբերում: Հիմք ընդունելով Հանրակրթական հիմնական ընդհանուր և այլընտրանքային ծրագրեր իրականացնող ուսումնական հաստատություններում ուսումնական խմբակների ձևավորման ու գործունեության և ուսումնական նախագծերի իրականացման կարգը, մեթոդմիավորման որոշումն ու մանկավարժական խորհրդի որոշումը, նախագծային աշխատանքների պաշտպանություններն իրականացվել են առարկայական հանձնաժողովներով, որոնց կազմում ընդգրկվել են տվյալ առարկայի կամ առարկաների ուսուցիչները, մեթոդական միավորման նախագահը, նույն կամ հարակից առարկայի ուսուցիչները, ուսումնական գծով տնօրենի տեղակալը: Զեկուցողը հավելեց, որ կարգի համաձայն բոլոր նախագծերն ու պրոդուկտները հրապարակվել են դպրոցի կայքում, որտեղ դրանց համար ստեղծվել է առանձին էջ:

Արտահայտվեցին՝ Նախագծային աշխատանքների ղեկավարները

Նախագծային աշխատանքների ղեկավարները հանգամանալից ներկայացրին իրենց հաշվետվությունները, պրոդուկտները, իրականացման ընթացքում առաջացած խնդիրները, ձեռքբերումները:

Որոշեցին՝ Ընդունել ի գիտություն 2023-2024 ուսումնական տարվա առաջին կիսամյակի ընթացքում իրականացված նախագծային աշխատանքների հաշվետվությունները և ներկայացնել տնօրենին՝ հաստատման:

Լսեցին 8. 2023-2024 ուսումնական տարվա 1-ին կիսամյակի էլեկտրոնային մատենավարության ստուգման արդյունքների ամփոփում:

(զեկուցող՝ Ս. Ավանեսյան)

Զեկուցողը ներկայացրեց, որ 2023-2024 ուսումնական տարվա 1-ին կիսամյակի ընթացքում էլեկտրոնային մատյանում արձանագրված թերությունները, նշեց, որ արձանագրվել են շեղումներ օրացուցային-թեմատիկ պլաններից, ինչպես

նաև նկատվել են դեպքեր, երբ թեմատիկ գրավոր աշխատանքների փոխանցված գնահատականների մի մասը չի պահպանվել, ինչի պատճառով ուսուցիչը ստիպված է եղել գնահատականները փոխանցել այլ օրվա վրա: Զեկուցողը շեշտեց, որ նման խնդիրներ հաճախակի են հանդիպում էլեկտրոնային մատենավարության դեպքում, հավելեց, որ նախորդ ուսումնական տարի ընթացքում այդ և կամ նմանատիպ խնդիրներ նույնպես եղել են: Համակարգի մարզի պատասխանատուի հետ քննարկման արդյունքում պարզվել է, որ այն դեպքում, երբ ինտերնետ հասանելիությունը բավարար չի լինում, իրականացված աշխատանքները կարող են չպահպանվել: Զեկուցողը նշեց, որ այդ դեպքերում ավելի նպատակահարմար է մատենավարությունն իրականացնել այն ժամանակ, երբ ինտերնետ հասանելիության խնդիր չկա: Զեկուցողն ըստ ուսուցիչների ներկայացրեց, թե ինչ խնդիրներ են արձանագրվել նրանց մոտ.

Արտահայտվեցին՝ Ա. Դաջունցը

Արտահայտվողը նշեց, որ պետք է վերահսկել ուսուցիչների ամենօրյա կատարվող աշխատանքները՝ կապված մատենավարության հետ, հորդորեց լինել առավել ուշադիր, չշեղվել ՕԹՊ-ներից, լինել հետևողական՝ աշխատանքը կատարելուց հետո կրկին ստուգել մատյանը, իսկ խնդիրների դեպքում համագործակցել մ/մ նախագահի, ուսումնական մասի ղեկավարի, իսկ անհրաժեշտության դեպքում նաև օպերատորների հետ:

Որոշեցին՝ Ընդունել ի գիտություն 2023-2024 ուսումնական տարվա 1-ին կիսամյակի էլեկտրոնային մատենավարության ստուգման ամփոփման մասին ինֆորմացիան և հայտարարել նախազգուշացում մեթոդմիավորման այն անդամներին, որոնք մատենավարության ընթացքում թույլ են տվել բացթողումներ:

Լսեցին 9. Բնագիտամաթեմատիկական առարկաների մեթոդմիավորման 2023-2024 ուսումնական տարվա 2-րդ կիսամյակի ժամաբաժանման փոփոխության և հաստատման մասին հարցը:

(զեկուցող՝ Ա. Դաջունց)

Զեկուցողը ներկայացրեց 2-րդ կիսամյակում բնագիտամաթեմատիկական առարկաներկաների մեթոդմիավորման ժամաբաժանման փոփոխությունները. 8-րդ դասարաններում «Հայոց պատմություն» առարկայի 2 դասաժամից մեկը փոխանցվում է «Հանրահաշիվ» առարկային, ինչի արդյունքում «Հայոց պատմություն» առարկան ունենում է 1 դասաժամ, իսկ «Հանրահաշիվ» առարկան 4 դասաժամ:

9-րդ դասարաններում «Հայոց պատմություն» առարկայի 2 դասաժամից մեկը փոխանցվում է «Հանրահաշիվ» առարկային, ինչի արդյունքում «Հայոց պատմություն» առարկան ունենում է 1 դասաժամ, իսկ «Հանրահաշիվ» առարկան 4 դասաժամ:

Արտահայտվեցին՝ Ս. Ավանեսյանը

Սերգեյ Ավանեսյանը նշեց, որ նախնական դասաբաշխումը կատարելու ժամանակ, ինչպես նաև 2023-2024 ուսումնական տարվա մեկնարկին ևս քննարկվել է փոփոխությունների մասին հարցը: Նշվել են բոլոր այն փոփոխությունները, որոնք սահմանված են օրինակելի ուսումնական պլանով և այդպիսով կատարվել է սահմանված պահանջը: Սերգեյ Ավանեսյանն անդրադարձ կատարեց նաև «Առողջ ապրելակերպ» առարկայի հետ կապված փոփոխությանը, նշեց, որ 5-րդ և 7-րդ դասարաններում այդ առարկան իրականացվելու է պարտադիր խմբակի տեսքով, իսկ 8-րդ և 9-րդ դասարաններում «Առողջ ապրելակերպ» դասընթացին տրամադրված ժամաքանակը ձևավորվում է «Ֆիզկուլտուրա» առարկայի տարեկան ժամաքանակից առանձնացված 14 դասաժամի հաշվին, իսկ «Ֆիզկուլտուրա»

առարկայի ծրագրով նախատեսված ուսումնական նյութերը ենթարկվում են թեմատիկ վերաբաշխման՝ պահպանելով տվյալ դասարանի համար Նախարարության հաստատած ծրագրային ամբողջ ծավալը:

Որոշեցին՝ 1. Հաստատել 2023-2024 ուսումնական տարվա 2-րդ կիսամյակի ժամաբաժանումը (կցվում է ամփոփագիրը, փոփոխությունների տեղեկանքը):

2. 8-րդ և 9-րդ դասարաններում «Առողջ ապրելակերպ» դասընթացին տրամադրել «Ֆիզկուլտուրա» առարկայի տարեկան ժամաքանակից առանձնացված 14 դասաժամ, իսկ «Ֆիզկուլտուրա» առարկայի ծրագրով նախատեսված ուսումնական նյութերը ենթարկել թեմատիկ վերաբաշխման՝ պահպանելով տվյալ դասարանների համար Նախարարության հաստատած ծրագրային ամբողջ ծավալը:

Լսեցին 10. Բնագիտամաթեմատիկական առարկաների մեթոդմիավորման անդամ ուսուցիչների պարտադիր վերապատրաստման մասնակիցների ցանկի քննարկման մասին հարցը:

(զեկուցող՝ Ս. Ավանեսյան)

Զեկուցողը կարևորեց ուսուցիչների պարտադիր վերապատրաստման գործընթացին մասնակցությունը, նշեց, որ 2023-2024 ուսումնական տարվա ընթացքում Գորիսի Յու. Բախշյանի անվան թիվ 3 հիմնական դպրոցից ուսուցիչների պարտադիր վերապատրաստմանը պետք է մասնակցեն Ալեքսանդր Հայրապետյանը, Մարգարիտա Պետրոսյանը, Թագուհի Գրիգորյանը, Թամարա Հովհաննիսյանը, Մարինե Բաբայանը, Հերմինե Ալավերդյանն ու Օլյա Ղուլյանը, քանի որ կա՛մ լրացել է նրանց պարտադիր վերապատրաստման 5 տարին, կա՛մ մինչ այդ երբեք չեն վերապատրաստվել: Միևնույն ժամանակ զեկուցողը նշեց, որ սույն պահանջը գործում է վերապատրաստման հին կարգով, իսկ նոր կարգն արդեն դրված է հանրային քննարկման: Հերթական ատեստավորման ենթակա ուսուցչի վերապատրաստման կարգի նախագծով առաջարկվող փոփոխություններով վերանայվելու են վերապատրաստումների իրականացման մեխանիզմները. նախատեսվում է դրանք իրականացնել առավելագույնը չորս մակարդակում արված գնահատումների արդյունքում արձանագրված մասնագիտական կարիքի հիման վրա, այդ թվում՝ առարկայի իմացության:

Ըստ այդմ՝ ուսուցչի մասնագիտական զարգացման կարիքը կգնահատվի ուսուցչի և տնօրենի կողմից Դպրոցների կառավարման տեղեկատվական համակարգում՝ ինքնաշխատ եղանակով, հարցաթերթիկի միջոցով: Ուսուցիչը կիրականացնի ինքնագնահատում, իսկ տնօրինությունը դասալսումների միջոցով կորոշի ուսուցչի մասնագիտական զարգացման կարիքի աստիճանը: Էլեկտրոնային հարթակում կձևավորվի ուսուցչի մասնագիտական կարիքի վերաբերյալ տեղեկանք, որով էլ ուսուցիչը կմասնակցի համապատասխան մոդուլով վերապատրաստմանը:

Ուսուցչի մասնագիտական զարգացման կարիքը ձևավորվում է ըստ մոդուլների՝ յուրաքանչյուր մոդուլի համար նշելով համապատասխան մակարդակը:

Յուրաքանչյուր մոդուլից մասնակցելով բարդության համապատասխան մակարդակի վերապատրաստումների՝ ուսուցիչը պետք է հավաքի առնվազն 9 կրեդիտ, որն էլ հիմք կհամարվի նրա ատեստավորման համար:

Ատեստավորման համար պահանջվող կրեդիտները՝ իր մասնագիտական զարգացման կարիքին համապատասխան, ուսուցչը կարող է հավաքել

ատեստավորման համապատասխան շրջափուլի ընթացքում:Ուսուցչի մասնագիտական զարգացման շրջափուլը ևս նախագծով սահմանված է:

Նոր նախագծով առաջարկվում է առարկայի իմացության կարիքի բացահայտման դեպքում վերապատրաստման իրականացման գործառույթը վերապահել տվյալ առարկայի մասնագիտական որակավորում շնորհող բուհին, մասնագիտական մյուս կարիքների բացահայտման դեպքում՝ համապատասխան մոդուլի համար երաշխավորված կազմակերպությանը:

Կախված ուսուցչի աշխատանքային փորձից՝ տարբերակված են նաև վերապատրաստման եղանակները: Սկսնակ ուսուցիչների համար այն կլինի առկա ձևաչափով, իսկ աշխատանքային ավելի մեծ փորձ ունեցող ուսուցիչների համար կարող է իրականացվել հեռավար կամ հիբրիդ ձևաչափով:

Քաղաքացիները և շահառու խմբերը մինչև դեկտեմբերի 23-ը կարող են նախագծի վերաբերյալ իրենց առաջարկություններն ու դիտողությունները ներկայացնել Իրավական ակտերի նախագծերի հրապարակման միասնական կայքում»,-իր խոսքում նշեց զեկուցողը և ներկայացրեց e-draft.am համակարգում տեղադրված նախագծի էլեկտրոնային տարբերակը (հղումը՝ https://www.e-draft.am/projects/6598):

Արտահայտվեցին՝ Ա. Դաջունցը:

Դաջունցը կարևորեց պարտադիր վերապատրաստման և ատեստավորման գործընթացը, նշեց, որ դրա միջոցով ուսուցիչները կարողանում են սովորել արդի մեթոդներ, հնարներ, ինչպես նաև հնարավորություն են ստանում գործնականում տեսնել, թե ինչպես կարելի է կիրառել ՏՀՏ գործիքներն ուսուցման գործընթացում:

Որոշեցին՝ Ապահովել ուսուցիչների մասնակցությունը կազմակերպվող պարտադիր վերապատրաստումներին:

Լսեցին 11. 2023-2024 ուսումնական տարվա ընթացքում ԱՈՒՊ-ների, դիտարկման թերթիկների հետ կապված աշխատանքի մասին հարցը:

(զեկուցող՝ Ա. Ծատրյան)

Զեկուցողը ներկայացրեց 2023-2024 ուսումնական տարվա առաջին կիսամյակի ընթացքում ԿԱԽԿՈՒ աշակերտների ԱՈՒՊ-ների, դիտարկման թերթիկների լրացման մասին ինֆորմացիան, շեշտեց, որ աշխատանքները կատարվել են սահմանված պահանջներին համապատասխան: Հավելեց, որ ԿԱՊԿՈՒ աշակերտների հետ աշխատում են նաև ԳՏՄԱԿ-ի մասնագետները, շեշտեց, որ ըստ սահմանված կարգի երկու ամիսը մեկ անգամ իրականացվում են քննարկումներ ԳՏՄԱԿ-ի ներկայացուցիչների, ուսուցիչներին, ուսուցչի օգնականների, հոգեբանի, հատուկ մանկավարժի և ԿԱՊԿՈՒ աշակերտների ծնողների մասնակցությամբ, որին մասնակցում է նաև ուսումնական գծով փոխտնօրեն Սերգեյ Ավանեսյանը:

Արտահայտվեցին՝ Ս. Ավանեսյանը:

Սերգեյ Ավանեսյանը կարևորեց աշխատանքի ճիշտ կազմակերպումը և ծնող-ուսուցիչ-աջակցության թիմ համագործակցությունը, ՕԴՊ-ով սահմանված նպատակների իրագործումը՝ ԱՈՒՊ-ի շրջանակներում և դիտարկման թերթիկների պատշաճ լրացումը:

Որոշեցին՝ Ընդունել ի գիտություն 2023-2024 ուսումնական տարվա առաջին կիսամյակի ընթացքում ԿԱԽԿՈՒ աշակերտների ԱՈՒՊ-ների, դիտարկման թերթիկների լրացման մասին ինֆորմացիան:

Լսեցին 12. 5-9-րդ դասարաններում «Մաթեմատիկա» առարկայի դասավանդման դրվածքի ամփոփման մասին հարցը:

(զեկուցող՝ Ա. Դաջունց)

Զեկուցողը նշեց, որ Բնագիտամաթեմատիկական առարկաների մեթոդմիավորման նիստում, ինչպես նաև մանկավարժական խորհրդի նիստում հաստատվել էր 5-9-րդ դասարաններում «Մաթեմատիկա» առարկայի դասավանդման դրվածքի ուսումնասիրության մասին հարցը: Ուսումնասիրությունների արդյունքում պարզվել է, որ «Մաթեմատիկա» առարկայի դրվածքը դպրոցում բավարար հիմքերի վրա է: Դասալսումների արդյունքում պարզվեց, որ բոլոր աշակերտներն էլ սիրով մասնակցում են մաթեմատիկայի դասերին: Զեկուցողը նշեց նաև, որ դրվածքի ուսումնասիրության ընթացքում առանձնակի ուշադրություն է դարձվել 5-րդ և 7-րդ դասարաններում առարկայի ուսուցման դրվածքին, հաշվի առնելով այն հանգամանքը, որ տվյալ դասարաններում ուսուցումն իրականացվում է նոր ՀՊՉ-ներով: Զեկուցողը հավելեց՝ 6-րդ, 8-րդ, 9-րդ դասարաններում ուսուցումն իրականացվում է հին ՀՊՉ-ներին համաձայն, ուսուցիչներն աշխատում են հիմք ընդունելով հաստատված ՕԹՊ-ները, որոնք գրվել են առարկայական ծրագրերի հիման վրա՝ հաշվի առնելով առարկայական չափորոշչային պահանջները: 5-րդ և 7-րդ դասարաններում ուսուցումն իրականացվում է նոր ՀՊՉ-ների համաձայն: Ուսուցիչներն աշխատում են հիմք ընդունելով հաստատված ՕԹՊ-ները, որոնք գրվել են նոր առարկայական ծրագրերի հիման վրա՝ հաշվի առնելով առարկայական նոր չափորոշչային պահանջները: Տվյալ դասարաններում ուսուցիչները կիրառում են նաև գնահատման նոր համակարգը՝ հայտորոշիչ և ձևավորող գնահատում, որը զուգորդում են ընթացիկ հարցումներով գնահատումներին: Զեկուցողը կարևոր համարեց նաև այն հանգամանքը, որ ուսուցիչներն առաջորդվում են հաստատված նոր ՀՊՉ-ների համաձայն 5-րդ, 7-րդ դասարաններում գնահատման չափանիշները:

Արտահայտվեցին՝ Ս. Ավանեսյան

Սերգեյ Ավանեսյանը նշեց, որ դասալսումների նախնական փուլում նկատվում էին մեթոդների կիրառման որոշակի բացթողումներ: Դասալսումների քննարկումների արդյունքում մեթոդմիավորման նախագահի և իր կողմից ներկայացվեցին դիտարկումները, բացթողումները, մատնանշվեցին ճանապարհներ, որոնց միջոցով հնարավոր է լուծել առկա խնդիրները, բացթողումները: Հետագա դասալսումների ընթացքում պարզ դարձավ, որ դասալսումների ամփոփման ընթացքում իրականացվող քննարկումները, կիրառվող մեթոդներն արդյունավետ էին: Կիրառվող մեթոդները խթանում են դասերի որակի բարձրացմանը: Անհրաժեշտ է փորձի փոխանակման նպատակով իրականացնել փոխադարձ դասալսումներ, կիրառել մեթոդներ, որոնք կմեծացնեն հետաքրքրությունը «Մաթեմատիկա» առարկայի նկատմամբ:

Որոշեցին՝ Ընդունել ի գիտություն 5-9-րդ դասարաններում «Մաթեմատիկա» առարկայի դասավանդման դրվածքի ամփոփման մասին տեղեկատվությունը:

Լսեցին 13. 2-րդ, 5-րդ և 7-րդ դասարաններում ՀՊՉ ներդրման գործընթացի վերահսկողության մասին հարցը:

(զեկուցող՝ Ս. Ավանեսյան)

Զեկուցողը նշեց, որ նախորդող ժամանակահատվածում իր, տնօրենի, մեթոդմիավորման նախագահի, դասարանների դասղեկների և մեթոդմիավորումների անդամների կողմից իրականացվել են դասալսումներ, դասերի դիտարկումներ, որոնց ընթացքում արձանագրվել է, որ 2-րդ, 5-րդ և 7-րդ դասարաններում ուսուցիչները հիմնականում ապահովում են նոր ՀՊՉ-ների պահանջները: Դասալսվող ուսուցիչների մոտ առկա էին օրացուցային-

թեմատիկ պլանները, օրվա դասի պլանները՝ էլեկտրոնային տարբերակով, մատենավարությունը կազմակերպված էր օրացուցային-թեմատիկ պլաններին համապատասխան: Զեկուցողը նշեց, որ օրվա դասի պլանների մեջ ըստ պահանջի սահմանված էին տվյալ թեմայի նպատակը, վերջնարդյունքը, ՀՊՉ համապատասխան կոդերը, խաչվող հասկացությունները: Օրվա դասի պլանի գործընթացի քայլերում սահմանված էին այն քայլերը, որոնց համաձայն իրականացվում է դասապրոցեսը: Հստակ նշված էին ռեսուրսներն ու մեթոդները: Միևնույն ժամանակ զեկուցողը նշեց, որ որոշակի խնդիրներ նկատվեցին առարկայի ծրագրով նախատեսված կարողությունների զարգացման հետ կապված հատկապես այն դասարաններում, որտեղ աշակերտների խտությունը մեջ է և հնարավոր չի լինում բոլոր աշակերտների մոտ հավասարաչափ իրականացնել կարողությունների զարգացում: Աշակերտների մեծ թվաքանակի հետ կապված նաև ուսուցիչները դժվարանում են բոլոր աշակերտներին հավասարապես ներառել դասապրոցեսին, ավելի շատ ուշադրություն դարձնել նրանց կողմից ինքնուրույն աշխատանքների իրականացմանը: Զեկուցողը նշեց, որ քանի որ օրվա դասի պլանի մեջ հստակ սահմանված է տվյալ օրվա թեմայի վերջնարդյունքը, ուսուցիչները կարողանում են պատկերացնել, թե դասի ավարտին ինչ վերջնարդյունքներ պետք է ապահովեն, ինչն ուսուցիչների մոտ հաջողվում է, եթե դասարանում աշակերտների խտությունը մեծ չէ:

Զեկուցողը, ինչպես նախորդիվ, այս անգամ նույնպես բոլորի ուշադրությունը հրավիրեց գնահատման հետ կապված հարցերին, նշեց, որ հիմնականում բացթողում է նկատում գնահատման դեպքում: Նախորդ քննարկումներից հետո նկատելի է, որ ուսուցիչները հիմնականում տիրապետում են գնահատման նոր համակարգին, կատարում ես սահմանված պահանջները, սակայն խնդիրներ շարունակում են լինել հիմնականում գործիքակազմ հետ կապված:

Զեկուցողն առաջարկեց շարունակել ուշադրության կենտրոնում պահել առարկայի ծրագրով նախատեսված կարողությունների զարգացման, տվյալ թեմայի վերջնարդյունքների զարգացման, ուսումնական գործընթացում աշակերտների ներգրավվածության, ինչպես նաև գնահատման նոր համակարգին վերաբերող հարցերը:

Արտահայտվեցին՝ ՄՄ անդամները

Արտահայտվողները նշեցին, որ համակարծիք են զեկուցողի դիտարկումների հետ, հավելեցին, որ անհրաժեշտ են համարում լրացուցիչ դասընթացների՝ նոր ՀՊՉ-ներով ուսուցումն ավելի լիարժեք իրականացնելու նպատակով:

Որոշեցին՝ ՄՄ նիստերի ընթացքում իրականացնել քննարկումներ առարկայի ծրագրով նախատեսված կարողությունների զարգացման, տվյալ թեմայի վերջնարդյունքների զարգացման, ուսումնական գործընթացում աշակերտների ներգրավվածության, ինչպես նաև գնահատման նոր համակարգի շուրջ և արդյունքները քննարկել 2 ամիս անց:

Մ/Մ նախագահ՝ _____ Ա.Դաջունց

Ուսումնական գծով փոխտնօրեն՝ _____ Ս. Ավանեսյան

«ԳՈՐԻՍԻ ՅՈՒ. ԲԱԽՇՅԱՆԻ ԱՆՎԱՆ ԹԻՎ 3 ՀԻՄՆԱԿԱՆ ԴՊՐՈՑ» ՊՈԱԿ-Ի ԲՆԱԳԻՏԱՄԱԹԵՄԱՏԻԿԱԿԱՆ ԱՌԱՐԿԱՆԵՐԻ ՄԵԹՈԴՄԻԱՎՈՐՄԱՆ ՆԻՍՏԻ ԱՐՁԱՆԱԳՐՈՒԹՅՈՒՆ № 6

«25» հունվար 2024թ. ք. Գորիս

Նիստին ներկա էին ՄՄ հետևյալ անդամները՝

1. Անուշ Դաջունց (մ/մ նախագահ)
2. Սիրուշ Բաղդասարյան
3. Արփինե Մարտիրոսյան
4. Ալլա Զեյնալյան
5. Հերմինե Ալավերդյան
6. Օլյա Ղուլյան
7. Արմանուշ Բակունց
8. Մարինե Բաբայան
9. Մերի Մկրտչյան
10. Մարետա Հարությունյան
11. Կարինե Արզումանյան
12. Ալեքսանդր Հայրապետյան

Նիստին ներկա էր ուսումնական գծով փոխտնօրեն Սերգեյ Ավանեսյանը և ուսուցչի օգնական Արփինե Ծատրյանը:

Օ Ր Ա Կ Ա Ր Գ

1. Բնագիտամաթեմատիկական առարկաների մեթոդմիավորման նիստի օրակարգի հաստատում:
(զեկուցող՝ Ա. Դաջունց)
2. Բնագիտամաթեմատիկական առարկաների մեթոդմիավորման նախորդ նիստի որոշումների կատարման ընթացքի մասին հաղորդում:
(զեկուցող՝ Ա. Դաջունց)
3. ՕԹՊ-ների փոփոխությունները, թերություններն ու խնդիրները:
(զեկուցող՝ Ա. Դաջունց)
4. Օրվա դասի պլանների ներկայացման, թերությունների ու խնդիրների մասին:
(զեկուցող՝ Ս. Ավանեսյան)
5. Էլեկտրոնային մատենավարության ստուգում:
(զեկուցող՝ Ա. Դաջունց)
6. ԱՈՒՊ-ների դիտարկման թերթիկների մասին:
(զեկուցող՝ Ա. Ծատրյան)
7. 2-րդ, 5-րդ, 7-րդ դասարաններում ՀՊՉ-ների ներդրման գործընթացի վերահսկողություն:
(զեկուցող՝ Ս. Ավանեսյան)
8. Սերգեյ Ավանեսյանի և Օլյա Ղուլյանի կողմից համահեղինակած «Համակարգչային տեխնոլոգիա» և «Տեղեկատվության անվտանգություն» անվանումով ուսումնական ձեռնարկը:
(զեկուցող՝ Ս. Ավանեսյան)

Լսեցին 1. Բնագիտամաթեմատիկական առարկաների մեթոդմիավորման նիստի օրակարգի հաստատման մասին հարցը:
(զեկուցող՝ Ա. Դաջունց)
Զեկուցողը ներկայացրեց օրակարգի կետերը:

Արտահայտվեցին՝

Որոշեցին՝ Հաստատել 2023-2024 ուսումնական տարվա բնագիտամաթեմատիկական առարկաների մեթոդմիավորման 6-րդ նիստի օրակարգը:

Լսեցին 2. Բնագիտամաթեմատիկական առարկաների մեթոդմիավորման նախորդ նիստի որոշումների կատարման ընթացքի մասին հարցը:

(զեկուցող՝ Ա. Դաջունց)

Զեկուցողը ներկայացրեց բնագիտամաթեմատիկական առարկաների մեթոդմիավորման նախորդ նիստում ընդունած որոշումների կատարման աշխատանքները և նշեց, որ դրանք կատարվել են նշված ժամկետներում:

Արտահայտվեցին՝

Որոշեցին՝ Բնագիտամաթեմատիկական առարկաների մեթոդմիավորման նախորդ նիստի որոշումների կատարման ընթացքի մասին տեղեկատվությունն ընդունել ի գիտություն:

Լսեցին 3. ՕԹՊ-ների փոփոխությունների, թերությունների ու խնդիրների մասին հարցը:

(զեկուցող՝ Ա. Դաջունց)

Զեկուցողը նշեց, որ 2023-2024 ուսումնական տարվա 1-ին կիսամյակի ընթացքում ուսուցիչների կողմից կազմված և հաստատված օրացուցային-թեմատիկ պլաններում կատարվել են որոշակի փոփոխություններ, մասնավորապես, որոշ դեպքերում փոխվել են թեմատիկ գրավոր աշխատանքների օրերը, ինչի արդյունքում փոփոխություն է կատարվել թեմատիկ հաջորդականության մեջ: Զեկուցողը նշեց նաև, որ օրացուցային-թեմատիկ պլաններում ի հայտ են եկել որոշակի տեխնիկական թերություններ, որոնք պետք է հաշվի առնել և հաջորդ ուսումնական տարվա ընթացքում փոփոխություն կատարել այդ օրացուցային-թեմատիկ պլանների մեջ:

Արտահայտվեցին՝ ՄՄ անդամները, Սերգեյ Ավանեսյանը

Արտահայտվողները նշեցին, որ մեթոդմիավորման նախագահին, ուսումնական գծով փոխտնօրենի կողմից արված բոլոր դիտարկումները հաշվի են առել, ընդունել ի գիտություն և հաջորդ ուսումնական տարվա մեկնարկին այդ բոլոր դիտարկումները հաշվի կառնվեն:

Սերգեյ Ավանեսյանը նշեց, որ բոլորի մոտ կան չպարզաբանված և որոշակի առումով թյուրըմբռնված հարցեր 2-րդ, 5-րդ, 7-րդ դասարաններում գնահատման համակարգի հետ կապված, շեշտելով, որ ընթացիկ գնահատման հետ կապված հարցը վերապատրաստումների ժամանակ պատշաճ չի ներկայացվել, սակայն 1-ին կիսամյակի ավարտին մոտ նշվել է, որ տվյալ դասարաններում ընթացիկ գնահատում չի իրականացվում, ինչի պատճառով ի հայտ է եկել որոշակի առումով անհասկանալի իրավիճակ: Վերջինս նշեց նաև, որ դրա հետ կապված նշված դասարանների օրացուցային-թեմատիկ պլանների մեջ թեմաների ամփոփման համար հստակ ժամկետներ չեն նշվել, ինչպես նաև այդ դասարաններում նույնպես սահմանվել են թեմատիկ գրավոր աշխատանքների, գործնական աշխատանքների քանակներ, ինչն այդքան էլ այդպես չպետք է լիներ: Ավանեսյանը նշեց, որ յուրաքանչյուր թեմայի ավարտը կարող էլ լինել հենց թեմատիկ գրավոր աշխատանք կամ գործնական աշխատանք, կամ ինչ-որ այլ աշխատանք: Արտահայտվողը նշեց նաև. «Որպես ուսումնական գծով փոխտնօրեն խորհրդատվություններ ստանալու նպատակով մշտապես կապի մեջ եմ ԿԶՆԱԿ հիմնադրամի համապատասխան աշխատակիցների հետ: Այդ խորհրդատվությունների ընթացքում հանդես եմ եկել առաջարկությամբ, որը կապված է պետական հանրակրթական ուսումնական հաստատությունների սովորողների գնահատման չափանիշների և հանրակրթական ծրագրեր իրականացնող ուսումնական հաստատություններում երկարօրյա ուսուցման կազմակերպման կարգի անհամապատասխանության հետ, ինչը կապված է երկարօրյա ուսուցման կազմակերպման կարգի 16-րդ կետի 2-րդ ենթակետի պահանջի հետ, ինչպես նաև պետական հանրակրթական ուսումնական հաստատությունների սովորողների գնահատման չափանիշների 4-րդ գլխի 24-րդ կետի «դասի» բառի

հեռացման հետ, որը շփոթություն է առաջացնում գնահատման համակարգի նոր սկզբունքների հետ կապված:

Որոշեցին՝ Ընդունել ի գիտություն օրացուցային-թեմատիկ պլանների փոփոխությունների, թերությունների ու խնդիրների մասին զեկուցումները:

Լսեցին 4. Օրվա դասի պլանների ներկայացման, թերությունների ու խնդիրների մասին:

(զեկուցող՝ Ս. Ավանեսյան)

Զեկուցողը նշեց, որ որոշ ուսուցիչների մոտ դժվար է իրականացվում 2-րդ, 5-րդ, 7-րդ դասարաններում օրվա դասի պլանների պատշաճ լրացումը, հավելելով, որ այդ դժվարությունները հիմնականում կապված են նոր չափորոշիչներով դասարաններում գնահատման համակարգի հետ, շեշտեց, որ նրանց մոտ այնքան էլ ճիշտ չի հասկացվել հայտորոշիչ, ձևավորող և ամփոփիչ գնահատման հերթականությունը և դրանց իրականացման սկզբունքները: Զեկուցողը նշեց նաև, որ օրվա դասի պլաններում բացթողումներ թույլ տված ուսուցիչների հետ իրականացվել է անհատական քննարկում, ինչի արդյունքում նրանք ստացել են պարզաբանումներ, իսկ նշված թեմայով վերապատրաստում իրականացնելու որոշումը ավելի կխորացնի ու կհիմնավորի նրանց ձեռք բերած գիտելիքները:

Արտահայտվեցին՝ ՄՄ անդամները

Արտահայտվողները նշեցին, որ համակարծիք են զեկուցողի դիտարկումների հետ, հավելեցին, որ իրենց կարծիքով ԿԶՆԱԿ հիմնադրամի կողմից իրականացված վերապատրաստումների ժամանակ ամբողջական ու հանգամանալից չեն ներկայացվել գնահատման նոր սկզբունքներն ու պահանջները, ինչի արդյունքում էլ ի հայտ են եկել այդ բացթողումները:

Որոշեցին՝ Ընդունել ի գիտություն օրվա դասի պլանների ներկայացման, թերությունների ու խնդիրների մասին զեկուցումը:

Լսեցին 5. Էլեկտրոնային մատենավարության ստուգում:

(զեկուցող՝ Ա. Դաջունց)

Զեկուցողը նշեց էլեկտրոնային մատենավարության ճշգրիտ վարման կարևորության մասին: Էլեկտրոնային մատենավարությունը պետք է կատարվի խիստ ուշադիր և հետևողական կերպով: Հատկապես ուշադրություն դարձնել ճիշտ և ժամանակին գնահատելու հարցերին: 2-րդ, 5-րդ և 7-րդ դասարաններում գնահատումը իրականացնել ըստ նոր ՀՊՉ-ների պահանջի:

Արտահայտվեցին՝ ՄՄ անդամները

Արտահայտվողները նշեցին, որ հետևողական աշխատանքները օգնում են ուսուցիչներին բարելավել իրենց կարողությունները էլէկտրոնային մատենավարության հարցում: Արտահայտվողները շեշտեցին նաև օրվա դասի պլանների և օրացուցային-թեմատիկ պլանների որպես օգնող գործիք լինելու մասին:

Որոշեցին՝ Ընդունել ի գիտություն նախորդող ժամանակահատվածում էլեկտրոնային մատենավարության ստուգման մասին զեկուցումը, շարունակել վերահսկողությունը:

Լսեցին 6. ԱՈՒՊ-ների դիտարկման թերթիկների մասին հարցը:

(զեկուցող՝ Ա. Ծատրյան)

Զեկուցողը ներկայացրեց նախորդող ժամանակահատվածում ԿԱԽԿՈՒ աշակերտների ԱՈՒՊ-ների, ինչպես նաև դիտարկման թերթիկների լրացման մասին ինֆորմացիան, շեշտեց, որ աշխատանքները կատարվել են սահմանված պահանջներին համապատասխան: Զեկուցողը նշեց, որ ԿԱՊԿՈՒ աշակերտների հետ կատարվող աշխատանքների արդյունքում ստուգվում է մեր առջև դրված նպատակները, ունեցած առաջընթացը:

Արտահայտվեցին՝ Ս. Ավանեսյանը:
Սերգեյ Ավանեսյանը կարևորեց աշխատանքի ճիշտ կազմակերպումը և ծնող-ուսուցիչ-աջակցության թիմ համագործակցությունը, ՕԴՊ-ով սահմանված նպատակների իրագործումը՝ ԱՈՒՊ-ի շրջանակներում և դիտարկման թերթիկների պատշաճ լրացումը:

Որոշեցին՝ Ընդունել ի գիտություն նախորդող ժամանակահատվածում ԱՈՒՊ-ների, դիտարկման թերթիկների մասին զեկուցումը:

Լսեցին 7. 2-րդ, 5-րդ, 7-րդ դասարաններում ՀՊՉ-ների ներդրման գործընթացի վերահսկողության մասին հարցը:

(զեկուցող՝ Ս. Ավանեսյան)

Զեկուցողը ներկայացրեց նոր չափորոշիչների ներդրման ընթացքում նախորդող ժամանակահատվածում ի հայտ եկած խնդիրները, նշեց, որ որոշման համաձայն վերահսկողության արդյունքները պետք է քննարկվեն 2 ամիսը մեկ անգամ, միևնույն ժամանակ հավելեց. Քանի որ ընթացքում ուսուցիչների մոտ հարցեր են առաջանում, ապա անհրաժեշտ է համարում այս նիստի ընթացքում նույնպես քննարկել նոր ՀՊՉ-ների ներդրման հետ կապված հարցերը և ընդունել որոշումներ՝ հետագա աշխատանքները պատշաճ կազմակերպելու համար: Զեկուցողը նաև կարևորեց 2-րդ, 5-րդ և 7-րդ դասարաններում կատարված դասալսումների և քննարկումների արդյունքում բարձրաձայնվող հարցերի շուրջ տրվող պարզաբանումները: Զեկուցողն առաջարկեց հաջորդող ժամանակահատվածում դպրոցի ուսուցիչների համար իրականացնել վերապատրաստման դասընթաց, որի ընթացքում իր և «Աշխարհագրություն» առարկայի ուսուցչուհի Հերմինե Ալավերդյանի կողմից, որը նաև Գորիսի պետական համալսարանի վերպատրաստողներից է, քներկայացվեն գնահատման նոր համակարգը, կարողունակությունները, աշակերտների ներգրավվածության հետ կապված հարցերը, դասի ճիշտ պլանավորումն ու փաստաթղթավարությունը:

Արտահայտվեցին՝ ՄՄ անդամները
Արտահայտվողները նշեցին, որ նոր չափորոշչային դասարաններում խնդիրներ կան հիմնականում գնահատման նոր սկզբունքների հետ կապված, և հարցի շուրջ բավականին արդյունավետ համարեց Սերգեյ Ավանեսյանի կողմից տրվող խորհրդատվությունները և կազմակերպվող քննարկումները:

Որոշեցին՝ 1. Ընդունել ի գիտություն նախորդող ժամանակահատվածում 2-րդ, 5-րդ և 7-րդ դասարաններում ՀՊՉ ներդրման գործընթացի ընթացիկ վերահսկողության հետ կապված զեկուցումը:
2. Կազմակերպել վերապատրաստման դասընթաց դպրոցի ուսուցիչների և ուսուցիչների համար ներկայացնելով գնահատման համակարգը, կարողութնակությունները, աշակերտների ներգրավվածությունն ու փաստաթղթավարությունը:

Լսեցին 8. Սերգեյ Ավանեսյանի և Օլյա Ղուլյանի կողմից համահեղինակած «Համակարգչային տեխնոլոգիա» և «Տեղեկատվության անվտանգություն» անվանումով ուսումնական ձեռնարկի մասին հարցը:

(զեկուցող՝ Ս. Ավանեսյան)

Զեկուցողը ներկայացրեց իր, դպրոցի «Ինֆորմատիկա/ԹԳՀԳ» առարկայի ուսուցչուհի, Գորիսի պետական քոլեջի Մաթեմատիկայի, ինֆորմատիկայի և տնտեսագիտության ամբիոնի վարիչ, դասախոս Օլյա Ղուլյանի և Գորիսի պետական քոլեջի Մաթեմատիկայի, ինֆորմատիկայի և տնտեսագիտության ամբիոնի դասախոս Զարինե Աբգարյանի կողմից համահեղինակած «Համակարգչային տեխնոլոգիա» անվանումով ուսումնական ձեռնարկը:

Զեկուցողը նշեց, որ «Համակարգչային տեխնոլոգիա» ձեռնարկում անդրադարձ է կատարվում տեղեկատվության մշակման և ղեկավարման ավտոմատացված համակարգերին, հաշվիչ տեխնիկայի և ավտոմատացված համակարգերի ծրագրային ապահովմանը, համակարգչային տեխնիկական միջոցների աշխատանքի սկզբունքներին, կառուցվածքներին, արտադրության տեխնոլոգիաներին, շահագործման կանոններին և ընտրությանը, դրանց մշտապես զարգացման ու կատարելագործման խնդիրներին: «Տեղեկատվության անվտանգություն» ձեռնարկում անդրադարձ է կատարվում տեղեկատվության անվտանգությանը, մասնավորապես, համակարգչում տեղեկատվության անվտանգ մշակմանը, պահպանմանն ու փոխանցմանը, ինֆորմացիայի կոդավորմանը:

Արտահայտվեցին՝ ՄՄ անդամները

Արտահայտվողները նշեցին, որ ուսումնասիրել են ձեռնարկը, շեշտելով, որ հսկայական աշխատանք է կատարվել: Օլյա Ղուլյանը նշեց, որ առաջիկայում ևս մի քանի ուսումնական ձեռնարկներ կներկայացվեն քննարկման, որոնք վերաբերում են համակարգչային ցանցերին, օպերացիոն համակարգերին, WEB ծրագրավորմանն ու ԷՀՄ ճարտարապետությանը, որոնց համահեղինակները նույնպես իրենք են:

Որոշեցին՝ Հավանության արժանացնել «Համակարգչային տեխնոլոգիա» անվանումով ուսումնական ձեռնարկը:

Մ/Մ նախագահ՝ _____ Ա.Դաջունց

Ուսումնական գծով փոխտնօրեն՝ _____ Ս. Ավանեսյան

«ԳՈՐԻՍԻ ՅՈՒ. ԲԱԽՇՅԱՆԻ ԱՆՎԱՆ ԹԻՎ 3 ՀԻՄՆԱԿԱՆ ԴՊՐՈՑ» ՊՈԱԿ-Ի ԲՆԱԳԻՏԱՄԱԹԵՄԱՏԻԿԱԿԱՆ ԱՌԱՐԿԱՆԵՐԻ ՄԵԹՈԴՄԻԱՎՈՐՄԱՆ ՆԻՍՏԻ ԱՐՁԱՆԱԳՐՈՒԹՅՈՒՆ № 7

«26» փետրվար 2024թ. ք. Գորիս

Նիստին ներկա էին ՄՄ հետևյալ անդամները՝

1. Անուշ Դաջունց (մ/մ նախագահ)
2. Սիրուշ Բաղդասարյան
3. Արփինե Մարտիրոսյան
4. Ալլա Զեյնալյան
5. Հերմինե Ալավերդյան
6. Օլյա Ղուլյան
7. Արմանուշ Բակունց
8. Մարինե Բաբայան
9. Մերի Մկրտչյան
10. Մարետա Հարությունյան
11. Կարինե Արզումանյան
12. Ալեքսանդր Հայրապետյան

Նիստին ներկա էր տնօրեն Դավիթ Կոստանդյանը, փոխտնօրեն Սերգեյ Ավանեսյանը:

Օ Ր Ա Կ Ա Ր Գ

1. Բնագիտամաթեմատիկական առարկաների մեթոդմիավորման նիստի օրակարգի հաստատում:
(զեկուցող՝ Ա. Դաջունց)
2. Բնագիտամաթեմատիկական առարկաների մեթոդմիավորման նախորդ նիստի որոշումների կատարման ընթացքի մասին հաղորդում:
(զեկուցող՝ Ա. Դաջունց)
3. Դպրոցական առարկայական օլիմպիադաների արդյունքների քննարկում:
(զեկուցող՝ Ս. Ավանեսյան)
4. 2-րդ, 5-րդ, 7-րդ դասարաններում ՀՊՉ-ների ներդրման գործընթացի վերահսկողություն:
(զեկուցող՝ Ա. Դաջունց)
5. Բնագիտական առարկաների՝ «Ֆիզիկա», «Քիմիա», «Աշխարհագրություն», «Կենսաբանություն», «Բնություն», «Բնագիտություն», դրվածքի ուսումնասիրություն:
(զեկուցող՝ Ա. Դաջունց)
6. Էլեկտրոնային մատենավարության հարցի քննարկում:
(զեկուցող՝ Ա. Դաջունց)
7. Տնօրենության կողմից գրավոր աշխատանքների նախապատրաստում՝ «Մաթեմատիկա» («Հանրահաշիվ», «Երկրաչափություն») առարկայից 5-9-րդ դասարաններում:
(զեկուցող՝ Ս. Ավանեսյան)

Լսեցին 1. Բնագիտամաթեմատիկական առարկաների մեթոդմիավորման նիստի օրակարգի հաստատման մասին հարցը:
(զեկուցող՝ Ա. Դաջունց)

Զեկուցողը ներկայացրեց օրակարգի կետերը:

Արտահայտվեցին՝

Որոշեցին՝ Հաստատել 2023-2024 ուսումնական տարվա բնագիտամաթեմատիկական առարկաների մեթոդմիավորման 7-րդ նիստի օրակարգը:

Լսեցին 2. Բնագիտամաթեմատիկական առարկաների մեթոդմիավորման նախորդ նիստի որոշումների կատարման ընթացքի մասին հարցը:
(զեկուցող՝ Ա. Դաջունց)

Զեկուցողը ներկայացրեց բնագիտամաթեմատիկական առարկաների մեթոդմիավորման նախորդ նիստում ընդունած որոշումների կատարման աշխատանքները և նշեց, որ դրանք կատարվել են նշված ժամկետներում։

Արտահայտվեցին՝

Որոշեցին՝ Բնագիտամաթեմատիկական առարկաների մեթոդմիավորման նախորդ նիստի որոշումների կատարման ընթացքի մասին տեղեկատվությունն ընդունել ի գիտություն։

Լսեցին 3. Դպրոցական առարկայական օլիմպիադաների արդյունքների քննարկման մասին հարցը։

(զեկուցող՝ Ս. Ավանեսյան)

Զեկուցողը նշեց, որ ավարտվել է 2023-2024 ուսումնական տարվա առարկայական օլիմպիադաների մարզային փուլը, որի արդյունքներով դպրոցը հանրապետական փուլում կներկայացնի 5 աշակերտ՝

6-րդ «Բ» դասարանի աշակերտ Դավիթ Ֆարամազյան

6-րդ «Գ» դասարանի աշակերտ Մայիս Դաջունց

9-րդ «Ա» դասարանի աշակերտուհի Սյունե Ստեփանյան

9-րդ «Ա» դասարանի աշակերտուհի Նարե Ավագյանը

9-րդ «Բ» դասարանի աշակերտ Գագիկ Կարապետյանը։

Հանրապետական փուլին մասնակցող աշակերտները մասնակցելու են հետևյալ առարկաներից.

Մաթեմատիկա

- Դաջունց Մայիս
- Ֆարամազյան Դավիթ։

Արտահայտվեցին՝ ՄՄ անդամները

Արտահայտվողները կարևորեցին օլիմպիադաներին աշակերտների մասնակցությունը, նշեցին, որ թեկուզ բնագիտամաթեմատիկական առարկաների նկատմամբ աշակերտների հետաքրքրությունը նվազել է և շարունակում է նվազել, ինչի հետևանքով մասնակցությունը թույլ է, ինչը ցավալի է։ Շեշտեցին, որ 2023-2024 ուսումնական տարում «Մաթեմատիկա» առարկայից հանրապետական փուլին կմասնակցեն 2 աշակերտ, ինչն էլ արտահայտում է վերոնշյալ կարծիքի հիմքը։ Արտահայտվողները խոսեցին նաև օլիմպիադաներին աշակերտներին նախապատրաստելու կարևորությունը, որպեսզի վերջիններս կարողանան պատշաճ ներկայանալ։

Որոշեցին՝ 2023-2024 ուստարվա առարկայական օլիմպիադաների մարզային փուլի արդյունքներն ընդունել ի գիտություն։ Ապահովել առարկայական օլիմպիադաների հաջորդ փուլերում աշակերտների պատշաճ մասնակցությունն ու անհրաժեշտ պայմանները։

Լսեցին 4. 2-րդ, 5-րդ, 7-րդ դասարաններում ՀՊՉ-ների ներդրման գործընթացի վերահսկողության մասին հարցը։

(զեկուցող՝ Ա. Դաջունց)

Զեկուցողը ներկայացրեց ԿԳՄՍ-ի կողմից ուղարկված գրությունը, ըստ որի 2023-2024 ուստարվա ընթացքում հանրակրթության պետական չափորոշչի ներդրման շրջանակներում կատարված մշտադիտարկումների ընթացքում (ԿԶՆԱԿ, ԳԹԿ, ԿՏԱԿ, մենթոր դպրոցներ), պարզվել է որ 2-րդ, 5-րդ և 7-րդ դասարաններում դպրոցների տնօրենների և տնօրենների տեղակալների կողմից բավարար չափով չեն իրականացվում դասալսումներ։ Արդյունքում բավարար պատկերացում չունեն ուսուցիչների կողմից չափորոշիչային պահանջների կատարման մասին, չափորոշչի ներդրման խնդիրները չեն քննարկվում մ/մ նիստերում, մանկավարժական խորհրդի նիստում չեն մշակվում և ձեռնարկվում միջոցներ խնդիրները վերացնելու համար։

Գրությամբ առաջարկվում է հաշվի առնելով դասալսումների իրականացման կարևորությունը և դրան հետևող մանկավարժամեթոդական աշխատանքների իրականացումը անհրաժեշտ է փետրվարի տասից մինչև մարտի 15-ը ընկած ժամանակահատվածում իրականացնել դասալսումներ հատկապես 2-րդ, 5-րդ և 7-րդ դասարաններում և ուշադրություն դարձնել հետևյալ կարևոր կետերին՝ «Առարկայի ծրագրով նախատեսված կարողությունների զարգացումը», «Թեմայի վերջնարդյունքների զարգացումը», «Ինքնուրույն աշխատանքի հմտությունների զարգացումը», «Գնահատում» թեմաներին։

Զեկուցողը նշեց, որ նոր ՀՊՉ-ներով ուսուցումն իրականացվող 2-րդ, 5-րդ և 7-րդ դասարաններում կատարված դասալսումները ցույց են տալիս, որ բնագիտամաթեմատիկական մասնախմբի ուսուցիչները առաջնորդվում են նոր ՀՊՉ-ների ներկայացված պահանջներով, հաշվի է առնված նշված 4 կետերով առաջնորդվելու սկզբունքները՝ սովորողների մոտ ինքնուրույն աշխատելու, ընկերներին անաչառ գնահատելու կարողությունների, հմտությունների զարգացումը, տվյալ թեմայի նպատակների և վերջնարդյունքերին հասնելու աշխատանքների իրականացմանն է միտված դասապրոցեսում կատարված աշխատանքները։

Բայց ոչ միշտ է հաջողվում բոլոր աշակերտներին ակտիվ ներգրավել ուսումնառության պրոցեսի մեջ։

Բոլոր ուսուցիչների մոտ անցկացված դասալսումները ցույց են տվել, որ հատկապես 2-րդ, 5-րդ և 7-րդ դասարաններում պարապող ուսուցիչները դասերը վարում են նոր ՀՊՉ-ներին համապատասխան, բայց, այնուամենայնիվ, առկա են բացթողումներ և թերացումներ։ Ուսուցիչներն ինքնուրույն աշխատանքների հմտությունների զարգացման ուղղությամբ քիչ հաջողությունների են հասել, ինչը նաև ուղղակիորեն կապված է դասարանների խտության հետ։ Որոշ ուսուցիչների մոտ իրականացված դասալսումների ընթացքում հստակ չէին երևում տվյալ թեմայի վերջնարդյունքների զարգացմանը միտված աշխատանքները։ Շատ են բացթողումները նոր ՀՊՉ-ներին համապատասխան գնահատման համակարգի կիրառության հետ կապված։ Դասապրոցեսում ոչ բոլոր ուսուցիչներին է հաջողվում կիրառել հայտորոշիչ, ձևավորող գնահատման տարբերակները։ Ուսուցիչները դեռ շարունակում են ընթացքում կիրառել միավորային գնահատում։ Սակայն, խնդիրը համատարած բնույթ չի կրում։ Նաև կարևոր է հաշվի առնել այն հանգամանքը, որ ի տարբերություն առաջին կիսամյակի, երկրորդ կիսամյակի ընթացքում գնահատման հետ կապված խնդիրներն ինչ-որ չափով մեղմացել են, ինչը նաև կապված է դպրոցում կազմակերպված «Գնահատում, կարողունակություններ, վերջնարդյունքներ, աշակերտների ներգրավվածություն, փաստաթղթավարություն» թեմայով դասընթացի իրականացման հետ, որին մասնակցել են դպրոցի բոլոր մանկավարժական աշխատողները, այդ թվում՝ ուսուցչի օգնականները, հատուկ մանկավարժն ու հոգեբանը։։ Ուսուցիչներն այժմ կիրառում են իրենց կողմից մշակված հայտորոշիչ գնահատման թեստեր։

Արտահայտվեցին՝ ՄՄ անդամները, Դ. Կոստանդյանը, Ս. Ավանեսյանը

Դավիթ Կոստանդյանը կարևորեց ուսուցիչների տեղեկացվածությունը՝ կապված նոր ՀՊՉ-ների ներդրման հետ և հատկապես գնահատման հարցի շուրջ եղած խնդիրների հետ։ Նշեց և կարևորվեց նաև կազմակերպվող վերապատրաստումներին (նոր ՀՊՉ-ներ, գնահատում) դպրոցի ուսուցիչների կողմից ակտիվ մասնակցությունը։ Դավիթ Կոստանդյանը նշեց նաև ՏՀՏ-ների կիրառման անհրաժեշտության մասին։ Հետաքրքիր և գործնականում հագեցած դասապրոցես ապահովելու համար անհրաժեշտ համարեց նաև դիտակտիկ պարագաների ապահովումը և կիրառումը։ Կարծիք հայտնեց, որ այս հարցը կարելի է լուծել նաև, եթե ուսուցիչները տիրապետում են նոր տեղեկատվական

տեխնոլոգիաներին և կիրառում են դասաժամերի ընթացքում, հավելելով՝ դպրոցն իր կողմից ամեն ինչ անում է, ՏՀՏ-ներ ապահովելու համար:
Սերգեյ Ավանեսյանը նշեց. «2023-2024 ուսումնական տարվա հոկտեմբեր ամսվա նիստերի ընթացքում բոլոր մեթոդական միավորումներում որոշում է կայացվել, որ առանձնակի ուշադրություն պետք է դրաձնել 5-րդ և 7-րդ դասարաններում նոր ՀՊՉ-ների կիրառմանը, ի հայտ եկած բացթողումները, խնդիրները երկու ամիսը մեկ անգամ պարտադիր քննարկել մեթոդմիավորումների նիստերում, հստակ նշել, թե ինչ գործողություններ պետք է կատարել այդ բացթողումների, խնդիրների վերացման ուղղությամբ: Այդ նպատակով նախորդ նիստերից մեկի ընթացքում որոշում է կայացվել, որ դպրոցում պետք է իրականացվի վերապատրաստման դասընթաց: Երկօրյա վերապատրաստումների ընթացքում անդրադարձ է կատարվել 5-րդ և 7-րդ դասարաններում առարկայի ծրագրով նախատեսված կարողությունների զարգացմանը, թեմայի վերջնարդյունքների զարգացմանը, աշակերտների ինքնուրույն աշխատանքի հմտությունների զարգացմանը, դպրոցում սովորողների գնահատման չափանիշներին: Դասընթացը վարել եմ ես և «Աշխարհագրություն» առարկայի ուսուցչուհի, Գորիսի պետական համալսարանի Ընդհանուր մանկավարժության և հատուկ կրթության ամբիոնի դասախոս Հերմինե Ալավերդյանը: Դասընթացից հետո իրականացված դասալսումների, դիտարկումների արդյունքում պարզ է դարձել, որ ուսուցիչների մոտ քննարկված թեմաներից առկա է առաջընթաց: Այդուհանդերձ դպրոցը խնդրանքով դիմել է ԿԶՆԱԿ հիմնադրամին, միայն դպրոցի աշխատակիցների համար հանդիպում կազմակերպելու և դրա ընթացքում ուսուցիչների մոտ առաջացած հարցերը քննարկելու համար: Ուսուցիչների հետ քննարկման արդյունքում պատրաստել եմ հարցաշար, որտեղ նշվել են այն բոլոր թեմաները, որոնց ուղղությամբ ուսուցիչները ցանկանում եմ իրականացնել քննարումներ ԿԶՆԱԿ-ի ներկայացուցիչների հետ:
Նախորդող ժամանակահատվածում բոլոր ուսուցիչների մոտ իրականացվել են դասալսումներ, որոնց ինտենսիվությունը մի փոքր ավելին էր, քան սահմանված է դպրոցի համապատասխան որոշումներով: Առանձնակի ուշադրություն է դարձվել 5-րդ և 7-րդ դասարաններում դասալսումների իրականացմանը: Իրականացված բոլոր դասալսումներից հետո պարտադիր իրականացվել են քննարկումներ դասալսվողի և դասալսողի կամ դասալսողների մասնակցությամբ, որոնց ընթացքում քննարկվել են դասերը: Կարևոր է նաև այն հանգամանքը, որ աշակերտների ներգրավվածության և ինքնուրույն աշխատանքի խրախուսման հետ կապված խնդիրները կապված են նաև դասարաններում աշակերտների մեծ թվաքանակի հետ, ինչը հնարավորություն չի տալիս 45 րոպեի ընթաքցում բոլոր աշակերտներին հավասարաչափ ներառել ուսումնական գործընթացում»:
Արփինե Մարտիրոսյանը նշեց, որ օրվա դասի բոլոր պլանները կազմված են նոր ՀՊՉ-ների պահանջներին համապատասխան, և ձգտում են պարտադիր կերպով աշխատանքի պրոցեսում առաջնորդվել այդ պահանջներին համապատասխան: Նա նշեց նաև, որ օրվա դասի պլաններն օգնում են հստակ տեսնել նոր ՀՊՉ-ով այն վերջնարդյունքները, որոնք պետք է ապահովեն դասի ընթացքում, խաչվող հասկացությունները:
Մարինե Բաբայանը նշեց, որ նոր չափորոշիչների ներդրման և իրականացման ուղղությամբ մեծ աշխատանքներ են կատարվում, բայց երբեմն դասարաններում աշակերտների մեծ խտությունը հնարավորություն չի տալիս բոլոր սովորողներին ներգրավել ուսուցման գործընթացում, ինչի հետ կարելի է կապել նաև աշակերտների կողմից ինքնուրույն աշխատանքի իրականացումը:

Որոշեցին՝ 1. ՀՊՉ ներդրման գործընթացի վերահսկողության արդյունքներն ընդունել ի գիտություն:
2. ԿԶՆԱԿ հիմնադրամի ներկայացուցիչների հետ հանդիպումից հետո նույնպես շարունակել իրականացնել դիտարկումներ 2-րդ, 5-րդ և 7-րդ դասարաններում, դրանց արդյունքները սահմանված որոշման համաձայն երկու ամիսը մեկ անգամ քննարկել մեթոդմիավորման նիստում:
3. Հաշվի առնելով երկամսյա դիտարկումների արդյունքները, ըստ անհրաժեշտության կազմակերպել կոնկրետ թեմաների հետ կապված վերապատրաստման դասընթաց:
4. 2-րդ, 5-րդ և 7-րդ դասարաններում ՀՊՉ ներդրման գործընթացի վերահսկողության պատասխանատու նշանակել Բնագիտամաթեմատիկական առարկաների մեթոդմիավորման նախագահ Անուշ Դաջունցին:

Լսեցին 5. Բնագիտական առարկաների՝ «Ֆիզիկա», «Քիմիա», «Աշխարհագրություն», «Կենսաբանություն», «Բնություն», «Բնագիտություն», դրվածքի ուսումնասիրության մասին հարցը:

(զեկուցող՝ Ա. Դաջունց)

Զեկուցողը նշեց բնագիտական առարկաների կարևորությունը աշխարհճանաչողության, հմտությունների, կարողունակությունների զարգացման գործում: Շեշտեց, որ բոլոր ուսուցիչները մասնակցել են պարտադիր վերապատրաստմանը, ինչպես նաև նոր ՀՊՉ-ներով վերապատրաստման դասընթացներին: Զեկուցողն առաջարկեց հաջորդող ժամանակահատվածում իրականացնել բնագիտական առարկաների, մասնավորապես, «Ֆիզիկա», «Քիմիա», «Աշխարհագրություն», «Կենսաբանություն», «Բնություն», «Բնագիտություն» առարկաների դրվածքի ուսումնասիրություն: Առաջարկեց այդ նպատակով հարցը քննարկել նաև մանկավարժական խորհրդի նիստում:

Արտահայտվեցին՝ Ս. Ավանեսյանը

Սերգեյ Ավանեսյանը նշեց, որ կարևոր է համարում բնագիտական առարկաների ուսուցման ընթացքում արդի մեթոդների, հնարների կիրառումը, լաբորատոր աշխատանքների պատշաճ իրականացումը, ինչը լրացուցիչ խթան կհանդիսանա տվյալ առարկաների հետ կապված աշակերտների մոտ լրացուցիչ հետաքրքրությունների առաջացման համար:

Որոշեցին՝ Մանկավարժական խորհրդի նիստում առաջարկել իրականացնել դրվածքի ուսումնասիրություն՝ «Ֆիզիկա», «Քիմիա», «Աշխարհագրություն», «Կենսաբանություն», «Բնություն», «Բնագիտություն» առարկաներից:

Լսեցին 6. Էլեկտրոնային մատենավարության մասին հարցը

(զեկուցող՝ Ա. Դաջունց)

Զեկուցողը նշեց, որ էլեկտրոնային մատենավարությունը կատարվող աշխատաներում շատ կարևոր առանցքային նշանակություն ունի և մ/մ բոլոր նիստերում այդ հարցի մասին անպայման խոսվում է: Էլեկտրոնային դասամատյաններում կատարվող լրացումները պետք է հստակ համապատասխանի ՕԹՊ-ներում գրված ժամկետներին: Բացթողումների և անճշտությունների դեպքում անպայման դիմել փոխտնօրեն Ս. Ավանեսյանին՝ հնարավոր թերությունները շտկելու համար:

Արտահայտվեցին՝ Ս. Ավանեսյանը, ՄՄ անդամները

Սերգեյ Ավանեսյանը կարևորեց ուսուցիչների կողմից մատենավարության պատշաճ իրականացումը, նշեց աջակցություններ տրամադրելու իր պատրաստակամության մասին, ինչպես նաև կարևորեց, որ

մատենավարությունն իրականացվի թեմատիկ հաջորդականության համապատասխան։
ՄՄ անդամները նշեցին, որ օրացուցային-թեմատիկ պլաններն ու օրվա դասի պլաններն օգնում պատշաճ մատենավարության իրականացման համար։

Որոշեցին՝ Նշված հարցերը ընդունել ի գիտություն և միշտ պահել ուշադրության կենտրոնում։

Լսեցին 7. «Մաթեմատիկա» («Հանրահաշիվ», «Երկրաչափություն») առարկայից 5-9-րդ դասարաններում տնօրենության կողմից գրավոր աշխատանքների նախապատրաստման մասին հարցը։

(զեկուցող՝ Ս. Ավանեսյան)

Զեկուցողը առաջարկեց, որ 2023-2024 ուսումնական տարվա 2-րդ կիսամյակում 5-6-րդ դասարաններում «Մաթեմատիկա», 7-9-րդ դասարաններում «Հանրահաշիվ», «Երկրաչափություն» առարկաներից տնօրենության կողմից տրվող գրավոր աշխատանքների համար ընտրել թեստային աշխատանքի տարբերակը։

Արտահայտվեցին՝ Ա. Զեյնալյանը, Ա. Մարտիրոսյանը, Ս. Բաղդասարյանը
Արտահայտվողները նշեցին, որ նպատակահարմար են համարում ինչպես 2023-2024 ուսումնական տարվա առաջին կիսամյակի ընթացքում, այնպես էլ երկրորդ կիսամյակի ընթացքում աշխատանքները տալ նույն սկզբունքով, այն է՝ թեստային տարբերակով։

Որոշեցին՝ «Մաթեմատիկա» («Հանրահաշիվ», «Երկրաչափություն») առարկայի ուսուցիչներին տալ հանձնարարականներ՝ ութ տարբերակով, որից կիրառել միայն 4-ը, կազմել համապատասխան առաջադրանքները։ Կազմակերպել քննարկում Մ/Մ անդամ ուսուցիչների և ուսումնական մասի ղեկավարի մասնակցությամբ։

Մ/Մ նախագահ՝ _____ Ա.Դաջունց

Ուսումնական գծով փոխտնօրեն՝ _____ Ս. Ավանեսյան

«ԳՈՐԻՍԻ ՅՈՒ. ԲԱԽՇՅԱՆԻ ԱՆՎԱՆ ԹԻՎ 3 ՀԻՄՆԱԿԱՆ ԴՊՐՈՑ» ՊՈԱԿ-Ի ԲՆԱԳԻՏԱՄԱԹԵՄԱՏԻԿԱԿԱՆ ԱՌԱՐԿԱՆԵՐԻ ՄԵԹՈԴՄԻԱՎՈՐՄԱՆ ՆԻՍՏԻ ԱՐՁԱՆԱԳՐՈՒԹՅՈՒՆ № 8

«26» մարտ 2024թ. ք. Գորիս

Նիստին ներկա էին ՄՄ հետևյալ անդամները՝

1. Անուշ Դաջունց (մ/մ նախագահ)
2. Սիրուշ Բաղդասարյան
3. Արփինե Մարտիրոսյան
4. Ալլա Զեյնալյան
5. Հերմինե Ալավերդյան
6. Օլյա Ղուլյան
7. Արմանուշ Բակունց
8. Մարինե Բաբայան
9. Մերի Մկրտչյան
10. Մարետա Հարությունյան
11. Կարինե Արզումանյան
12. Ալեքսանդր Հայրապետյան

Նիստին ներկա էր փոխտնօրեն Մերգեյ Ավանեսյանը:

Օ Ր Ա Կ Ա Ր Գ

1. Բնագիտամաթեմատիկական առարկաների մեթոդմիավորման նիստի օրակարգի հաստատում:
(զեկուցող՝ Ա. Դաջունց)
2. Բնագիտամաթեմատիկական առարկաների մեթոդմիավորման նախորդ նիստի որոշումների կատարման ընթացքի մասին հաղորդում:
(զեկուցող՝ Ա. Դաջունց)
3. Թեմատիկ գրավոր աշխատանքների կատարողականի ստուգում:
(զեկուցող՝ Ա. Դաջունց)
4. Քննական առարկաների հետ կապված հարցերի քննարկում:
(զեկուցող՝ Ս. Ավանեսյան)
5. Բնագիտամաթեմատիկական առարկաների ուսուցիչների կողմից իրականացրած մատենավարության ստուգում:
(զեկուցող՝ Ս. Ավանեսյան)

Լսեցին 1. Բնագիտամաթեմատիկական առարկաների մեթոդմիավորման նիստի օրակարգի հաստատման մասին հարցը:
(զեկուցող՝ Ա. Դաջունց)
Զեկուցողը ներկայացրեց օրակարգի կետերը:

Արտահայտվեցին՝

Որոշեցին՝ Հաստատել 2023-2024 ուսումնական տարվա բնագիտամաթեմատիկական առարկաների մեթոդմիավորման 8-րդ նիստի օրակարգը:

Լսեցին 2. Բնագիտամաթեմատիկական առարկաների մեթոդմիավորման նախորդ նիստի որոշումների կատարման ընթացքի մասին հարցը:
(զեկուցող՝ Ա. Դաջունց)
Զեկուցողը ներկայացրեց բնագիտամաթեմատիկական առարկաների մեթոդմիավորման նախորդ նիստում ընդունած որոշումների կատարման աշխատանքները և նշեց, որ դրանք կատարվել են նշված ժամկետներում:

Արտահայտվեցին՝

Որոշեցին՝ Բնագիտամաթեմատիկական առարկաների մեթոդմիավորման նախորդ նիստի որոշումների կատարման ընթացքի մասին տեղեկատվությունն ընդունել ի գիտություն։

Լսեցին 3. Թեմատիկ գրավոր աշխատանքների կատարողականի ստուգման մասին հարցը։

(զեկուցող՝ Ա. Դաջունց)

Զեկուցողը ներկայացրեց 2023-2024 ուսումնական տարվա 2-րդ կիսամյակի ընթացքում՝ մինչև մարտի 26-ն ընկած ժամանակահատվածը տրված թեմատիկ գրավոր աշխատանքների քանակի, պետական ծրագրով ներկայացվող պահանջների կատարմանն ուղղված աշխատանքները։ Նշեց, որ և՛ առաջին կիսամյակի ընթացքում, և՛ երկրորդ կիսամյակի ընթացքում թեմատիկ գրավոր աշխատանքները տրվել են ըստ նախապես կազմված թեստերի և ըստ նախապես հաստատված ժամանակացույցի ու քանակի։ Նշեց նաև, որ որոշ ուսուցիչներ որոշ դասարաններում կատարել են թեմատիկ գրավոր աշխատանքի օրերի փոփոխություն, ինչը կապված է նաև emis.am համակարգի ոչ պատշաճ աշխատանքի հետ։ Փոփոխությունը սահմանված կարգով քննարկվել է մեթոդմիավորման նիստում, օրացուցային-թեմատիկ պլաններում կատարվել է թեմատիկ հաջորդականության փոփոխություն։ Արտահայտվողը նշեց, որ տնօրինության կողմից մարտի 21-ին 6-րդ «Ա» դասարանում «Մաթեմատիկա» առարկայից տրված գրավոր աշխատանքի օրը տեղափոխվել է ապրիլի 2-ը, թույլ կապի պատճառով գնահատականները չեն պահպանվել։ Մարտի 14-ի «Քիմիա» առարկայի գործնական աշխատանքների գնահատականները 8-րդ «Ա» և 8-րդ «Բ» դասարաններում տեղափոխվել են ապրիլի 2-ը, 9-րդ «Ա» դասարանում գործնական աշխատանքների գնահատականները փետրվարի 28-ից տեղափոխվել են ապրիլի 1-ը։

Արտահայտվեցին՝ Ս. Ավանեսյանը

Սերգեյ Ավանեսյանը կարևորեց ՕԹՊ-ների և ՕԴՊ-ների ճիշտ կազմումը, դրանց կիրառության հետևելը, որը թույլ է տալիս գրավոր և գործնական աշխատանքների քանակը պահպանել և ժամանակի բաժանման հարցում գործել մեթոդմիավորման որոշումներին և առարկայական ծրագրերին համապատասխան։

Որոշեցին՝ Ընդունել ի գիտություն թեմատիկ գրավոր աշխատանքների կատարողականի ստուգման մասին զեկուցումը։

Լսեցին 4. Քննական առարկաների հետ կապված հարցերի քննարկման մասին հարցը։

(զեկուցող՝ Ս. Ավանեսյան)

Զեկուցողը նշեց, որ 9-րդ դասարանում աշակերտները հանձնում են քննություն «Մաթեմատիկա» և «Բնագիտություն» առարկաներից։ Վերջինս իր մեջ ներառում է «Քիմիա», «Ֆիզիկա», «Կենսաբանություն» և «Աշխարհագրություն» առարկաներից։ Զեկուցողը նշեց նաև, որ վերոնշյալ առարկաների քննական տոմսերը կազմվում են ԳԹԿ-ի կողմից, դպրոցին մնում է միայն պատշաճ կազմակերպել քննական գործընթացը։

Արտահայտվեցին՝ Մ. Բաբայանը, Ա. Դաջունցը, Ա. Բակունցը, Հ. Ալավերդյանը

Արտահայտվողները նշեցին, որ աշակերտների մոտ քննական առարկաներից գիտելիքների պաշարը հիմնականում գոհացուցիչ է։ Աշակերտներն ունեն եռամակարդակի պահանջներին համապատասխան գիտելիքներ։

Որոշեցին՝ Ընդունել ի գիտություն 9-րդ դասարանում քննական առարկաների զեկուցման հետ կապված ինֆորմացիան։

Լսեցին 5. Բնագիտամաթեմատիկական առարկաների ուսուցիչների կողմից իրականացրած մատենավարության ստուգման արդյունքների մասին հարցը։

(զեկուցող՝ Ս. Ավանեսյան)

Զեկուցողը նշեց, որ մատենավարության ճիշտ վարման հարցը միշտ ուշադրության կենտրոնում է, այն ամենօրյա աշխատանք է, ժամանակ առ ժամանակ ստուգվում են նախորդ լրացված էջերը, որպեսզի անհրաժեշտ շտկումները կատարվեն ճիշտ ժամանակին, ստուգվում է, թե արդյոք ամեն ինչ պահպանված է թե ոչ, հնարավոր սխալներից խուսափելու համար: 5-րդ և 7-րդ դասարաններումմիավորային գնահատում կատարել թեմայի ամփոփման ժամանակ, ինչպես նաև թեմատիկ գրավոր աշխատանքների և գործնական աշխատանքների ժամանակ: Անպայման առաջնորդվել ըստ ՕԴՊ-ների:

Արտահայտվեցին՝ Անուշ Դաջունցը

Արտահայտվողը նշեց, որ պետք է վերահսկել ուսուցիչների ամենօրյա կատարվող աշխատանքները կապված մատենավարության հետ, որպեսզի խուսափենք հետագա խնդիրներից:

Որոշեցին՝ Բնագիտամաթեմատիկական առարկաների ուսուցիչների կողմից իրականացրած մատենավարության ստուգման արդյունքների մասին զեկուցումն ընդունել ի գիտություն:

Մ/Մ նախագահ՝ _____ Ա. Դաջունց

Ուսումնական գծով փոխտնօրեն՝ _____ Ս. Ավանեսյան

«ԳՈՐԻՍԻ ՅՈՒ. ԲԱԽՇՅԱՆԻ ԱՆՎԱՆ ԹԻՎ 3 ՀԻՄՆԱԿԱՆ ԴՊՐՈՑ» ՊՈԱԿ-Ի ԲՆԱԳԻՏԱՄԱԹԵՄԱՏԻԿԱԿԱՆ ԱՌԱՐԿԱՆԵՐԻ ՄԵԹՈԴՄԻԱՎՈՐՄԱՆ ՆԻՍՏԻ ԱՐՁԱՆԱԳՐՈՒԹՅՈՒՆ № 9

«25» ապրիլ 2024թ. ք. Գորիս

Նիստին ներկա էին ՄՄ հետևյալ անդամները՝

1. Անուշ Դաջունց (մ/մ նախագահ)
2. Սիրուշ Բաղդասարյան
3. Արփինե Մարտիրոսյան
4. Ալլա Զեյնալյան
5. Հերմինե Ալավերդյան
6. Օլյա Ղուլյան
7. Արմանուշ Բակունց
8. Մարինե Բաբայան
9. Մերի Մկրտչյան
10. Մարետա Հարությունյան
11. Կարինե Արզումանյան
12. Ալեքսանդր Հայրապետյան

Նիստին ներկա էր ուսումնական գծով փոխտնօրեն Սերգեյ Ավանեսյանը

Օ Ր Ա Կ Ա Ր Գ

1. Բնագիտամաթեմատիկական առարկաների մեթոդմիավորման նիստի օրակարգի հաստատում:
(զեկուցող՝ Ա. Դաջունց)
2. Բնագիտամաթեմատիկական առարկաների մեթոդմիավորման նախորդ նիստի որոշումների կատարման ընթացքի մասին հաղորդում:
(զեկուցող՝ Ա. Դաջունց)
3. Բնագիտական առարկաների՝ «Ֆիզիկա», «Քիմիա», «Աշխարհագրություն», «Կենսաբանություն», «Բնագիտություն», «Բնություն» դրվածքի ուսումնասիրության ամփոփում:
(զեկուցող՝ Ա. Դաջունց)
4. Բնագիտամաթեմատիկական առարկաների ուսուցիչների կողմից իրականացրած մատենավարության ստուգում:
(զեկուցող՝ Ա. Դաջունց)

Լսեցին 1. Բնագիտամաթեմատիկական առարկաների մեթոդմիավորման նիստի օրակարգի հաստատման մասին հարցը:
(զեկուցող՝ Ա. Դաջունց)
Զեկուցողը ներկայացրեց օրակարգի կետերը:

Արտահայտվեցին՝

Որոշեցին՝ Հաստատել 2023-2024 ուսումնական տարվա բնագիտամաթեմատիկական առարկաների մեթոդմիավորման 9-րդ նիստի օրակարգը:

Լսեցին 2. Բնագիտամաթեմատիկական առարկաների մեթոդմիավորման նախորդ նիստի որոշումների կատարման ընթացքի մասին հարցը:
(զեկուցող՝ Ա. Դաջունց)
Զեկուցողը ներկայացրեց բնագիտամաթեմատիկական առարկաների մեթոդմիավորման նախորդ նիստում ընդունած որոշումների կատարման ընթացքը և նշեց, որ դրանք կատարվել են նշված ժամկետներում:

Արտահայտվեցին՝

Որոշեցին՝ Բնագիտամաթեմատիկական առարկաների մեթոդմիավորման նախորդ նիստի որոշումների կատարման ընթացքի մասին տեղեկատվությունն ընդունել ի գիտություն։

Լսեցին 3. Բնագիտական առարկաների՝ «Ֆիզիկա», «Քիմիա», «Աշխարհագրություն», «Կենսաբանություն», «Բնագիտություն», «Բնություն» դրվածքի ուսումնասիրության ամփոփման մասին հարցը

(Զեկուցող Ա. Դաջունց)

Զեկուցողը նշեց, որ նշված առարկաների դրվածքի ուսումնասիրման համար ավելի հաճախակի են իրականացվել դասալսումներ և՛ տնօրինության, և՛ մ/մ նախագահի, և՛ այլ առարկաներ դասավանդող ուսուցչների կողմից։ Դասալսումների արդյունքում երևում է որ, ուսուցիչները դասապրոցեսն իրականացնում են առաջնորդվելով օրացուցային-թեմատիկ պլաններով, նախատեսված թեմատիկ գրավոր աշխատանքները, գործնական աշխատանքները, բոլորը տրված են ստուգված և գնահատված։ 5-րդ և 7-րդ դասարաններում գնահատման աշխատանքներն իրականցվում են նոր ՀՊՉ-ների համաձայն։ Ուսուցիչները դասերի ընթացքում կիրառում են նոր մանկավարժահոգեբանական մեթոդներ, կատարվում են հնարավոր բոլոր փորձնական և ցուցադրական աշխատանքները։ Գործնական և լաբորատոր աշխատանքներն աշակերտները հիմնականում կատարում են ուսուցչի հետ միասին։ Այս առարկաների դասավանդման ժամանակ քիչ են օգտագործվում ՏՀՏ միջոցներ, մեծամասամբ դաս-միջոցառումների ժամանակ։ ԿԱՊԿՈՒ աշակերտների հետ աշխատանքներն իրականացվում են ըստ ԱՈՒՊ-ների, սահմանված կարգով։ Նշված առարկաների ուսուցիչները բոլորը մասնակցել են պարտադիր վերապատրաստմանը և ստացել համապատասխան վկայական։

Արտահայտվեցին՝ Մ. Բաբայանը, Մ. Մկրտչյանը, Ա. Բակունցը

Արտահայտվողները նշեցին, որ հնարավոր ամեն ինչ անում են դասերն ավելի հետաքրքիր, ավելի տեսանելի, ավելի հագեցած դարձնելու համար։ Շատ է զգացվում նորոգված և հագեցած կաբինետների կարիքը։

Որոշեցին՝ Ընդունել ի գիտություն «Ֆիզիկա», «Քիմիա», «Աշխարհագրություն», «Կենսաբանություն», «Բնագիտություն», «Բնություն» առարկաների դրվածքի ուսումնասիրության ամփոփման մասին զեկուցումը։

Լսեցին 4. Բնագիտամաթեմատիկական առարկաների ուսուցիչների կողմից իրականացրած մատենավարության ստուգման հարցը։

(զեկուցող՝ Ա. Դաջունց)

Զեկուցողը նշեց, որ մատենավարության հարցը դպրոցում ամենա առանցքային հարցերից է և պետք է տանել ամենաօրյա ճշգրիտ աշխատանք՝ հնարավոր սխալներից խուսափելու համար։ 2-րդ, 5-րդ և 7-րդ դասարաններում ուշադրություն դարձնել բնութագրող և միավորային գնահատման առանձնահատկություններին։ Պարտադիր կերպով ամեն օր ստուգել էլեկտրոնային դասամատյանները, քանի որ ինտերնետային կապից կախված երբեմն կարող են թերություններ առաջանալ։ Ուշադիր լինել, որպեսզի աշակերտների գնահատականները պահպանված լինեն։ Զեկուցողը նշեց նաև, որ «Մաթեմատիկա» առարկայի ուսուցչուհի Սիրուշ Բաղդասարյանի մոտ էլեկտրոնային մատենավարության հետ կապված խնդիր է առաջացել, ինչի պատճառով վերջինս կատարել է թեմատիկ հաջորդականության փոփոխությունը, որը ներկայացված է ստորև.

Արտահայտվեցին՝ Մ/մ անդամները

Նրանք նշեցին, որ ամեն ինչ անում են որպեսզի էլեկտրոնային մատենավարությունը լինի անթերի։ Երբեմն թերություններն իրենցից կախված չեն։

Որոշեցին՝ Էլեկտրոնային մատենավարության մասին հարցերը ընդունել ի գիտություն։

Մ/Մ նախագահ՝ _____ Ա.Դաջունց

Ուսումնական գծով փոխտնօրեն՝ _____ Ս. Ավանեսյան

«ԳՈՐԻՍԻ ՅՈՒ. ԲԱԽՇՅԱՆԻ ԱՆՎԱՆ ԹԻՎ 3 ՀԻՄՆԱԿԱՆ ԴՊՐՈՑ» ՊՈԱԿ-Ի ԲՆԱԳԻՏԱՄԱԹԵՄԱՏԻԿԱԿԱՆ ԱՌԱՐԿԱՆԵՐԻ ՄԵԹՈԴՄԻԱՎՈՐՄԱՆ *ԱՐՏԱՀԵՐԹ* ՆԻՍՏԻ ԱՐՁԱՆԱԳՐՈՒԹՅՈՒՆ № 10

«08» մայիս 2024թ. ք. Գորիս

Նիստին ներկա էին ՄՄ հետևյալ անդամները՝

1. Անուշ Դաջունց (մ/մ նախագահ)
2. Սիրուշ Բաղդասարյան
3. Արփինե Մարտիրոսյան
4. Ալլա Զեյնալյան
5. Հերմինե Ալավերդյան
6. Օլյա Ղուլյան
7. Արմանուշ Բակունց
8. Մարինե Բաբայան
9. Մերի Մկրտչյան
10. Մարետա Հարությունյան
11. Կարինե Արզումանյան
12. Ալեքսանդր Հայրապետյան

Նիստին ներկա էր ուսումնական գծով փոխտնօրեն Սերգեյ Ավանեսյանը, ուսուցչի օգնական Արփինե Ծատրյանը:

Օ Ր Ա Կ Ա Ր Գ

1. Բնագիտամաթեմատիկական առարկաների մեթոդմիավորման նիստի օրակարգի հաստատում:
(զեկուցող՝ Ա. Դաջունց)
2. Բնագիտամաթեմատիկական առարկաների մեթոդմիավորման նախորդ նիստի որոշումների կատարման ընթացքի մասին հաղորդում:
(զեկուցող՝ Ա. Դաջունց)
3. 9-րդ դասարանների ավարտական քննությունների հանձնաժողովների կազմերի քննարկում և հաստատում:
(զեկուցող՝ Ս. Ավանեսյան)
4. 9-րդ դասարաններում բնագիտամաթեմատիկական առարկաների քննությունների նախապատրաստական աշխատանքների մասին:
(զեկուցող՝ Ա. Դաջունց)
5. 9-րդ դասարանների ավարտական քննությունների ժամանակացույցի քննարկում և հաստատում:
(զեկուցող՝ Ա. Դաջունց)
6. ԿԱՊԿՈՒ աշակերտներին 9-րդ դասարանների ավարտական քննություններից ազատել:
(զեկուցող՝ Ա. Ծատրյան)
7. 120-200 դասաժամ բացակայություն ունեցող աշակերտի հարցը:
(զեկուցող՝ Ա. Դաջունց)

Լսեցին 1. Բնագիտամաթեմատիկական առարկաների մեթոդմիավորման նիստի օրակարգի հաստատման մասին հարցը:
(զեկուցող՝ Ա. Դաջունց)
Զեկուցողը ներկայացրեց օրակարգի կետերը:

Արտահայտվեցին՝

Որոշեցին՝ Հաստատել 2023-2024 ուսումնական տարվա բնագիտամաթեմատիկական առարկաների մեթոդմիավորման արտահերթ նիստի օրակարգը:

Լսեցին 2. Բնագիտամաթեմատիկական առարկաների մեթոդմիավորման նախորդ նիստի որոշումների կատարման ընթացքի մասին հարցը։

(զեկուցող՝ Ա. Դաջունց)

Զեկուցողը ներկայացրեց բնագիտամաթեմատիկական առարկաների մեթոդմիավորման նախորդ նիստում ընդունած որոշումների կատարման աշխատանքները և նշեց, որ դրանք կատարվել են նշված ժամկետներում։

Արտահայտվեցին՝

Որոշեցին՝ Բնագիտամաթեմատիկական առարկաների մեթոդմիավորման նախորդ նիստի որոշումների կատարման ընթացքի մասին տեղեկատվությունն ընդունել ի գիտություն։

Լսեցին 3. 9-րդ դասարանների ավարտական քննությունների հանձնաժողովների կազմերի քննարկման և հաստատման մասին հարցը։

(զեկուցող՝ Ս. Ավանեսյան)

Զեկուցողը ներկայացրեց 9-րդ դասարանների ավարտական քննությունների հանձնաժողովների կազմերը, նշեց, որ կազմի անդամներն ընտրվել են հիմք ընդունելով հանրակրթական ուսումնական հաստատության սովորողների կողմից կրթական ծրագրերի յուրացման ամփոփիչ ստուգման կամ ատեստավորման անցկացման, սովորողների փոխադրման, ավարտման և ուսումնական տարվա ընթացքում բացակայած սովորողի՝ հաջորդ դասարան կամ հանրակրթության հաջորդ աստիճան փոխադրման կարգը։

Արտահայտվեցին՝ Ա. Դաջունցը, Ս. Բաղդասարյանը

Արտահայտվողները նշեցին, որ 9-րդ դասարանների ավարտական քննությունների հանձնաժողովների կազմում առաջադրվել են բոլոր ցանկացողները, ինչպես նաև հաշվի են առնվել հանրակրթական ուսումնական հաստատության սովորողների կողմից կրթական ծրագրերի յուրացման ամփոփիչ ստուգման կամ ատեստավորման անցկացման, սովորողների փոխադրման, ավարտման և ուսումնական տարվա ընթացքում բացակայած սովորողի՝ հաջորդ դասարան կամ հանրակրթության հաջորդ աստիճան փոխադրման կարգի պահանջները, ՀՀ ԿԳՄՍ նախարարի 2022 թվականի դեկտեմբերի 6-ի №78 և 2024 թվականի մայիսի 7-ի թիվ 713-Ա/2 հրամանները։

Որոշեցին՝ Հաստատել 9-րդ դասարանների ավարտական քննությունների հանձնաժողովների կազմերը (կցվում է)։

Լսեցին 4. 9-րդ դասարաններում բնագիտամաթեմատիկական առարկաների քննությունների նախապատրաստական աշխատանքների մասին հարցը։

(զեկուցող՝ Ա. Դաջունց)

Զեկուցողը նշեց, որ բնագիտամաթեմատիկական առարկաների բոլոր քննությունները գրավոր տարբերակով են, իսկ այդ թեստերը մշակվում և դպրոցին են տրամադրվում ԳԹԿ-ի կողմից։ Առավելագույն արդյունքի հասնելու համար անհրաժեշտ է աշակերտներին նախապատրաստել և դասերի ընթացքում և խորհրդատվությունների ժամանակ։

Արտահայտվեցին՝ Ա. Բակունցը, Ա. Զեյնալյանը, Հ. Ալավերդյանը, Մ. Մկրտչյանը

Արտահայտվողները նշեցին, որ կրկնությունների ժամանակ աշխատում են նախորդ ուսումնական տարվա ընթացքում կիրառված հարցատոմսերի օրինակներով, ինչպես նաև խորհրդատվությունների ժամանակ օգտագործում են այլ գրականություն, ինչը պետք է որ նմաստի աշակերտների կողմից քննությունների ընթացքում պատշաճ առաջադիմության և որակի գրանցմանը։

Որոշեցին՝ Ընդունել ի գիտություն 9-րդ դասարաններում բնագիտամաթեմատիկական առարկաների քննությունների նախապատրաստական աշխատանքների մասին զեկուցումը:

Լսեցին 5. 9-րդ դասարանների ավարտական քննությունների ժամանակացույցի քննարկման և հաստատման մասին հարցը:

(զեկուցող՝ Ա. Դաջունց)

Զեկուցողը նշեց, որ 2022-2023 ուսումնական տարում դպրոցի 9-րդ դասարանների աշակերտները քննություն են հանձնելու «Մաթեմատիկա», «Կենսաբանություն», «Աշխարհագրություն», «Քիմիա», «Ֆիզիկա» առարկաներից, հավելեց, որ քննական թեստերը կազմվելու են ԳԹԿ-ի կողմից:

Զեկուցողը նշեց նաև, որ քննությունների ժամանակացույցը կազմվել է ԳԹԿ-ի կողմից:

Արտահայտվեցին՝

Որոշեցին՝ Հաստատել 2022-2023 ուսումնական տարվա 9-րդ դասարանների ավարտական քննությունների ժամանակացույցը (կցվում է):

Լսեցին 6. ԿԱՊԿՈՒ աշակերտներին 9-րդ դասարանների ավարտական քննություններից ազատելու մասին հարցը:

(զեկուցող՝ Ա. Ծատրյան)

Զեկուցողը նշեց, որ 9-րդ «Գ» դասարանի աշակերտուհի Լիլիթ Ծատրյանի ծնողը դիմում է ներկայացրել, որով խնդրել է նրան ազատել 9-րդ դասարանների ավարտական քննություններից:

Արտահայտվեցին՝ Ս. Ավանեսյանը

Արտահայտվողը նշեց, որ Լիլիթ Ծատրյանի ծնողի դիմումի համաձայան վերոնշյալ աշակերտին պետք է ազատել 9-րդ դասարանների ավարտական քննություններից, հիմք ընդունելով այն հանգամանքը, որ տվյալ աշակերտներն ունի կրթության առանձնահատուկ պայմանների կարիք, ինչպես նաև հղում կատարեց հանրակրթական ուսումնական հաստատության սովորողների կողմից կրթական ծրագրերի յուրացման ամփոփիչ ստուգման կամ ատեստավորման անցկացման, սովորողների փոխադրման, ավարտման և ուսումնական տարվա ընթացքում բացակայած սովորողի՝ հաջորդ դասարան կամ հանրակրթության հաջորդ աստիճան փոխադրման կարգի 9-րդ կետին, որտեղ սահմանվում է, որ ինտելեկտուալ (մտավոր) զարգացման խանգարմամբ պայմանավորված կրթության առանձնահատուկ պայմանների կարիք ունեցող սովորողները, ծնողի (նրա օրինական ներկայացուցչի) համաձայնությամբ, կարող են չմասնակցել գիտելիքների ստուգմանը (4-րդ դասարան), ավարտական (9-րդ դասարան) և պետական ավարտական (12-րդ դասարան) քննություններին: Այդ դեպքում նրանց տրվում է պետական նմուշի ավարտական փաստաթուղթ (հիմնական կրթության վկայական և միջնակարգ կրթության ատեստատ)՝ առանց քննական գնահատականների:

Որոշեցին՝ Համաձայն Հանրակրթական ուսումնական հաստատության սովորողների կողմից կրթական ծրագրերի յուրացման ամփոփիչ ստուգման կամ ատեստավորման անցկացման, սովորողների փոխադրման, ավարտման և ուսումնական տարվա ընթացքում բացակայած սովորողի՝ հաջորդ դասարան կամ հանրակրթության հաջորդ աստիճան փոխադրման կարգի՝ 9-րդ դասարանի ԿԱՊԿՈՒ ներքոնշյալ աշակերտին՝ Լիլիթ Ծատրյանին ազատել 9-րդ դասարանի ավարտական քննություններից:

Լսեցին 7. 120-200 դասաժամ բացակայություն ունեցող աշակերտի հարցը:

(զեկուցող՝ Ա. Դաջունց)

Զեկուցողը ներկայացրեց 120-200 դասաժամ բացականեր ունեցող աշակերտների հետ կապված կարգը: Նշեց, որ տարրական դասարաններում 120 և ավելի ժամ բացակայություն ունեցող աշակերտ կա 4-րդ «Բ» դասարանում:

Արտահայտվեցին՝ Սերգեյ Ավանեսյանը

Ավանեսյանը նշեց, որ Նարեկ Վահիկի Դալլաքյանի բացակայությունները 120-200 դասաժամ է: Նշեց, որ արդեն կազմված են վերաքննության թեստերը և բոլոր առարկաների համար աշակերտը կհանձնի վերաքննություն:

Որոշեցին՝ Հաստատել 120-200 դասաժամ բացակայություն ունեցող աշակերտի վերաքննության ստուգողական աշխատանքների, ստուգարքի և քննական հարցաշարերը, հարցատոմսերն ու ժամանակացույցը (հարցատոմս՝ էլեկտրոնային, ժամ.՝ առդիր):

Մ/Մ նախագահ՝ _____ Ա.Դաջունց

Ուսումնական գծով փոխտնօրեն՝ _____ Ս. Ավանեսյան

«ԳՈՐԻՍԻ ՅՈՒ. ԲԱԽՇՅԱՆԻ ԱՆՎԱՆ ԹԻՎ 3 ՀԻՄՆԱԿԱՆ ԴՊՐՈՑ» ՊՈԱԿ-Ի ԲՆԱԳԻՏԱՄԱԹԵՄԱՏԻԿԱԿԱՆ ԱՌԱՐԿԱՆԵՐԻ ՄԵԹՈԴՄԻԱՎՈՐՄԱՆ ՆԻՍՏԻ ԱՐՁԱՆԱԳՐՈՒԹՅՈՒՆ № 11

«29» մայիսի 2024թ. ք. Գորիս

Նիստին ներկա էին ՄՄ հետևյալ անդամները՝

1. Անուշ Դաջունց (մ/մ նախագահ)
2. Սիրուշ Բաղդասարյան
3. Արփինե Մարտիրոսյան
4. Ալլա Զեյնալյան
5. Հերմինե Ալավերդյան
6. Օլյա Ղուլյան
7. Արմանուշ Բակունց
8. Մարինե Բաբայան
9. Մերի Մկրտչյան
10. Մարետա Հարությունյան
11. Կարինե Արզումանյան
12. Ալեքսանդր Հայրապետյան

Նիստին ներկա էր տնօրենի ուսումնական գծով տեղակալ Սերգեյ Ավանեսյանը, ՄԿԱ գծով տեղակալ Արմիդա Գևորգյանը

Օ Ր Ա Կ Ա Ր Գ

1. Բնագիտամաթեմատիկական առարկաների մեթոդմիավորման նիստի օրակարգի հաստատում։

(զեկուցող՝ Ա. Դաջունց)

2. Բնագիտամաթեմատիկական առարկաների մեթոդմիավորման նախորդ նիստի որոշումների կատարման ընթացքի մասին հաղորդում։

(զեկուցող՝ Ա. Դաջունց)

3. 2023-2024 ուսումնական տարվա 2-րդ կիսամյակում իրականացված նախագծային աշխատանքների հաշվետվությունների քննարկում։

(զեկուցող Ա. Դաջունց, նախագծային աշխատանքների ղեկավարներ)

4. 2-րդ, 5-րդ և 7-րդ դասարաններում նոր ՀՊՉ-ների ներդրման գործընթացի արդյունքների մասին։

(զեկուցող՝ Ա. Դաջունց)

5. 2023-2024 ուսումնական տարվա 2-րդ կիսամյակում իրականացված տեսչական ստուգումների և տրված գրավոր աշխատանքների արդյունքների վերլուծության մասին։

(զեկուցող Ս. Ավանեսյան)

6. 2023-2024 ուսումնական տարվա ընթացքում էլեկտրոնային մատենավարության ստուգման մասին։

(զեկուցող՝ Ս. Ավանեսյան)

7. 2023-2024 ուսումնական տարում իրականացված երկարօրյա ուսուցման խմբակների հաշվետվությունների քննարկման մասին։

(զեկուցող Ա. Գևորգյան)

Լսեցին 1. Բնագիտամաթեմատիկական առարկաների մեթոդմիավորման նիստի օրակարգի հաստատման մասին հարցը։

(զեկուցող՝ Ա. Դաջունց)

Զեկուցողը ներկայացրեց օրակարգի կետերը։

Արտահայտվեցին՝

Որոշեցին՝ Հաստատել 2023-2024 ուսումնական տարվա բնագիտամաթեմատիկական առարկաների մեթոդմիավորման 11-րդ նիստի օրակարգը։

Լսեցին 2. Բնագիտամաթեմատիկական առարկաների մեթոդմիավորման նախորդ նիստի որոշումների կատարման ընթացքի մասին հարցը։

(զեկուցող՝ Ա. Դաջունց)

Զեկուցողը ներկայացրեց բնագիտամաթեմատիկական առարկաների մեթոդմիավորման նախորդ նիստում ընդունած որոշումների կատարման աշխատանքները և նշեց, որ դրանք կատարվել են նշված ժամկետներում։

Արտահայտվեցին՝

Որոշեցին՝ Բնագիտամաթեմատիկական առարկաների մեթոդմիավորման նախորդ նիստի որոշումների կատարման ընթացքի մասին տեղեկատվությունն ընդունել ի գիտություն։

Լսեցին 3. 2023-2024 ուսումնական տարվա 2-րդ կիսամյակում իրականացված նախագծային աշխատանքների հաշվետվությունների քննարկման մասին հարցը։

(զեկուցող Ա. Դաջունց, նախագծային աշխատանքների ղեկավարներ)

Զեկուցող Անուշ Դաջունցը ներկայացրեց 2-րդ կիսամյակում 7-րդ դասարաններում իրականացված նախագծային աշխատանքները, նշեց, որ դրանք միջառարկայական էին։ Նախագծային աշխատանքների ղեկավարներն իրենց հաշվետվությունների մեջ մանրամասն ներկայացրել էին կատարված աշխատանքները, նրանք նշել էին, որ նախագծային աշխատանքների մասնակիցները մեծ ոգևորությամբ են աշխատել, ավելի կազմակերպված և միասնական։ Այդ աշխատանքները կարևոր են սովորողների կարողությունների զարգացման, ինչպես նաև թիվային աշխատանք կատարելու գործում։

Արտահայտվեցին՝ Հերմինե Ալավերդյանը, Մերի Մկրտչյանը, Արփինե Մարտիրոսյանը, Ալլա Զեյնալյանը

Արտահայվողները նշեցին, որ նախագծային աշխատանքների ճիշտ կազմակերպումը, երեխաների հնարավորությունների և կարողությունների հաշվի առնելը, համագործակցությունը շատ կարևոր է անհրաժեշտ արդյունքներին հասնելու համար։ Սովորողները աստիճանաբար ավելի ազատ, անկաշկանդ ու նախաձեռնող են դառնում։ Շատ կարևոր է, որ նախագծի ղեկավարը սովորողների խմբի հետ մանրամասն մշակի աշխատանքի պլանը, իսկ աշխատանքներում ավելի ու ավելի շատ աշակերտներ ներգրավված լինեն, իսկ ղեկավարները լինեն ուղղություն տվողի դերում։

Որոշեցին՝ Ընդունել ի գիտություն 2023-2024 ուսումնական 2-րդ կիսամյակում իրականացված նախագծային աշխատանքների հաշվետվությունները։

Լսեցին 4. 2-րդ, 5-րդ և 7-րդ դասարաններում նոր ՀՊՉ-ների ներդրման գործընթացի արդյունքների մասին հարցը։

(զեկուցող՝ Ա. Դաջունց)

Զեկուցողը նշեց, որ նոր ՀՊՉ-ների ներդրման գործընթացը ճիշտ և արդյունավետ կազմակերպելու համար կատարվել են բազմաթիվ դասալսումներ, դասերի քննարկումներ, դիտարկումներ։

Նշված դասարաններում հատկապես գնահատման համար, ինչպես նաև մնացած աշխատանքների ճիշտ կազմակերպման համար ուսումնական մասի ղեկավար Սերգեյ Ավանեսյանի կողմից անցկացվել են խորհրդատվություններ։

Արտահայտվեցին՝ Ս.Բաղդասարյանը, Մ. Բաբայանը, Ա. Մարտիրոսյանը։

Արտահայտվողները նշեցին, որ առաջին կիսամյակում նոր ՀՊՉ-ի պահանջների համաձայն գնահատման հարցը հստակ չէր։ Ուսումնական մասի ղեկավար Սերգեյ Ավանեսյանի խորհրդատվությունները, ինչպես նաև

դասալսումների ընթացքում կատարված քննարկումները օգնեցին իրականացնել ավելի հստակ գնահատում: Թեմայի ամփոփման ժամանակ միավորային գնահատում կատարել բնականաբար, շատ կարևոր են հայտորոշիչ և ձևավորող գնահատում կատարելը (ոչ միավորային), որի արդյունքում ավելի հստակ է ամփոփիչ գնահատումը:

Որոշեցին՝ 2-րդ, 5-րդ և 7-րդ դասարաններում նոր ՀՊՁ-ների ներդրման գործընթացի արդյունքների մասին զեկուցումն ընդունել ի գիտություն:

Լսեցին 5. 2023-2024 ուսումնական տարվա 2-րդ կիսամյակում իրականացված տեսչական ստուգումների և տրված գրավոր աշխատանքների արդյունքների վերլուծության մասին հարցը:

(զեկուցող Ս. Ավանեսյան)

Զեկուցողը նշեց, որ 2023-2024 ուսումնական տարվա 2-րդ կիսամյակի ընթացքում մայիսի 13-ից 17-ը դպրոցում իրականացվել են տեսչական ստուգումներ և դասալսումներ ՀՀ տեսչական մարմնի կողմից: Բնագիտամաթեմատիկական առարկաների մասնախմբում դասալսումներն իրականացվել են «Մաթեմատիկա», «Հանրահաշիվ» և «Երկրաչափություն» առարկաներից, 6-րդ և 9-րդ դասարաններում: Յուրաքանչյուր ուսուցչի՝ Սիրուշ Բաղդասարյանի, Ալլա Զեյնալյանի մոտ իրականացրել է 5 դասաժամ դասալսում: Դասալսումների նպատակներն ու պահանջները տարբեր էին, նոր մանկավարժական մեթոդների, ՏՀՏ միջոցների կիրառումը և այլն:

Դասալսվող ուսուցիչների աշխատանքը բարձր գնահատվեցին:

Արտահայտվեցին՝ Ս.Բաղդասարյանը, Ա. Զեյնալյանը, Ա. Մարտիրոսյանը

Արտահայտվողները նշեցին, որ տեսչական մարմնի կողմից դասալսումների ընթացքում ստուգողների կողմից տրվել են բավականին օգտակար դիտարկումներ՝ դասապրոցեսը ավելի արդյունավետ դարձնելու համար: Ժամանակակից դասապրոցեսում հատկապես շատ կարևորեցին ՏՀՏ-ների օգտագործումը, դասալսումների քննարկումները, խորհրդատվությունները, արդյունքների ամփոփումը կարևոր է դասապրոցեսը հետագայում ավելի արդյունավետ դարձնելու համար:

Որոշեցին՝ Ընդունել ի գիտություն 2023-2024 ուսումնական տարվա 2-րդ կիսամյակում իրականացված տեսչական ստուգումների և տրված գրավոր աշխատանքների արդյունքները (կցվում է):

Լսեցին 6. 2023-2024 ուսումնական տարվա ընթացքում էլեկտրոնային մատենավարության ստուգման մասին:

(զեկուցող՝ Ս. Ավանեսյան)

Զեկուցողը նշեց, որ ՄՄ աշխատանքներում կարևոր է ճիշտ մատենավարությունը: ՄՄ բոլոր նիստերում այդ հարցը քննարկվում է և ստուգվում են էլեկտրոնային դասամատյանները, կատարված փոփոխությունները արձանագրվում են, հնարավորության դեպքում կատարվում են ուղղումներ:

Արտահայտվեցին՝ ՄՄ անդամները, Ս. Ավանեսյանը:

Սերգեյ Ավանեսյանը նշեց, որ շատ կարևոր է յուրաքանչյուր ուսուցչի պատասխանատու աշխատանքը ճիշտ և ժամանակին մատենավարություն իրականացնելու համար, ՕԹՊ-ների հետ համապատասխանեցված: Սիրուշ Բաղդասարյանը նշեց, որ երբեմն այդ թերությունները կախված են ինտերնետային կապի որակից և այս ուսումնական տարում այդ թերությունները համեմատաբար քիչ են:

Որոշեցին՝ 2023-2024 ուսումնական տարվա ընթացքում իրականացված էլեկտրոնային մատենավարության ստուգման արդյունքներն ընդունել ի գիտություն:

Լսեցին 7. 2023-2024 ուսումնական տարում իրականացված երկարօրյա ուսուցման խմբակների հաշվետվությունների քննարկման մասին հարցը։

(զեկուցող Ա. Գևորգյան)

Զեկուցողը նշեց, որ 2-րդ և 5-րդ դասարանների 22 աշակերտի համար նոր ՀՊՉ-ների ներդրման կարգի համաձայն 2023-2024 ուսումնական տարվա հոկտեմբեր-դեկտեմբեր ամիսների ընթացքում կազմակերպվել են երկարօրյա ուսուցման խմբակներ։ Երկարօրյա ուսուցման խմբակներում աշակերտները ընդգրկվել են ըստ Հանրակրթական ծրագրեր իրականացնող ուսումնական հաստատություններում երկարօրյա ուսուցման կազմակերպման կարգի 16-րդ կետի 1-ին և 2-րդ ենթակետերի, որտեղ սահմանված է, որ 2-րդ դասարաններից ընդգրկվում են այն աշակերտները, որոնք ունեցել են առաջադիմությունը բնութագրող գնահատման միջոցով արձանագրված ցածր արդյունքներ, 5-րդ և 7-րդ դասարաններից ընդգրկվում են այն աշակերտները, որոնք երկու անգամ անընդմեջ ունեցել են 1-3 գնահատական։ Զեկուցողը նշեց, որ պարբերաբար կատարվել են ընթացիկ դիտարկումներ իր և ուսումնական գծով փոխտնօրեն Սերգեյ Ավանեսյանի կողմից և իրականացված աշխատանքները գոհացուցիչ են։ Զեկուցողը ներկայացրեց նաև փետրվար-մայիս ամիսների ընթացքում իրականացված աշխատանքները, և նշեց այդ աշխատանքները նույնպես գոհացուցիչ են։

Արտահայտվեցին՝ Արփինե Մարտիրոսյանը։

Արփինե Մարտիրոսյանը ներկայացրեց իր հաշվետվությունը, խոսեց աշխատանքների իրականացման ընթացքում առաջացած խնդիրների մասին, անդրադարձ կատարեց ձեռքբերումներին ու արդյունքներին։

Որոշեցին՝ Ընդունել ի գիտություն 2023-2024 ուսումնական տարում իրականացված երկարօրյա ուսուցման խմբակների հաշվետվություններն ու ներկայացնել տնօրենի հաստատմանը։

Մ/Մ նախագահ՝ _____ Ա. Դաջունց

Ուսումնական գծով փոխտնօրեն՝ _____ Ս. Ավանեսյան

«ԳՈՐԻՍԻ ՅՈՒ. ԲԱԽՇՅԱՆԻ ԱՆՎԱՆ ԹԻՎ 3 ՀԻՄՆԱԿԱՆ ԴՊՐՈՑ» ՊՈԱԿ-Ի
ԲՆԱԳԻՏԱՄԱԹԵՄԱՏԻԿԱԿԱՆ ԱՌԱՐԿԱՆԵՐԻ ՄԵԹՈԴՄԻԱՎՈՐՄԱՆ ՆԻՍՏԻ
ԱՐՁԱՆԱԳՐՈՒԹՅՈՒՆ № 12

«24» հունիս 2024թ. ք. Գորիս

Նիստին ներկա էին ՄՄ հետևյալ անդամները՝

1. Անուշ Դաջունց (մ/մ նախագահ)
2. Սիրուշ Բաղդասարյան
3. Արփինե Մարտիրոսյան
4. Ալլա Զեյնալյան
5. Հերմինե Ալավերդյան
6. Օլյա Ղուլյան
7. Արմանուշ Բակունց
8. Մարինե Բաբայան
9. Մերի Մկրտչյան
10. Մարետա Հարությունյան
11. Կարինե Արզումանյան
12. Ալեքսանդր Հայրապետյան

Նիստին ներկա էր տնօրենի ուսումնական գծով տեղակալ Սերգեյ Ավանեսյանը, ՄԿԱ գծով տեղակալ Արմիդա Գևորգյանը, ուսուցչի օգնական Արփինե Ծատրյանը:

Օ Ր Ա Կ Ա Ր Գ

1. Բնագիտամաթեմատիկական առարկաների մեթոդմիավորման նիստի օրակարգի հաստատում:
(զեկուցող՝ Ա. Դաջունց)
2. Բնագիտամաթեմատիկական առարկաների մեթոդմիավորման նախորդ նիստի որոշումների կատարման ընթացքի մասին հաղորդում:
(զեկուցող՝ Ա. Դաջունց)
3. 2023-2024 ուսումնական տարվա 9-րդ դասարանների ավարտական քննությունների արդյունքների ամփոփում:
(զեկուցող Ս. Ավանեսյան)
4. 2023-2024 ուսումնական տարվա ընթացքում իրականացված բաց դասերի, դաս միջոցառումների, վիկտորինաներին կատարման արդյունքների քննարկում:
(զեկուցող՝ Ա. Դաջունց)
5. 2023-2024 ուսումնական տարվա ընթացքում իրականացված աշխատանքների հաշվետվությունների քննարկում:
(զեկուցողներ՝ ՄՄ անդամներ)
6. 2023-2024 ուսումնական տարվա ընթացքում իրականացված արտադասարանական խմբակների աշխատանքների կատարման արդյունքների քննարկում:
(զեկուցող՝ Ա. Գևորգյան)
7. 2023-2024 ուսումնական տարում իրականացված դասալսումների ամփոփում:
(զեկուցող՝ Ա. Դաջունց)
8. ԿԱՊԿՈՒ աշակերտների հետ ուսումնական գործընթացի կազմակերպման արդյունքների մասին:
(զեկուցողներ՝ Ս. Ավանեսյան, Ա. Ծատրյան)
9. Էլեկտրոնային մատենավարության ամփոփիչ ստուգման արդյունքների քննարկում:
(զեկուցող՝ Ա. Դաջունց)
10. 2024-2025 ուսումնական տարվա նախնական ժամաբաշխում:
(զեկուցող՝ Ս. Ավանեսյան, Ա. Դաջունց)

Լսեցին 1. Բնագիտամաթեմատիկական առարկաների մեթոդմիավորման նիստի օրակարգի հաստատման մասին հարցը:

(զեկուցող՝ Ա. Դաջունց)

Զեկուցողը ներկայացրեց օրակարգի կետերը:

Արտահայտվեցին՝

Որոշեցին՝ Հաստատել 2023-2024 ուսումնական տարվա բնագիտամաթեմատիկական առարկաների մեթոդմիավորման 12-րդ նիստի օրակարգը:

Լսեցին 2. Բնագիտամաթեմատիկական առարկաների մեթոդմիավորման նախորդ նիստի որոշումների կատարման ընթացքի մասին հարցը:

(զեկուցող՝ Ա. Դաջունց)

Զեկուցողը ներկայացրեց բնագիտամաթեմատիկական առարկաների մեթոդմիավորման նախորդ նիստում ընդունած որոշումների կատարման աշխատանքները և նշեց, որ դրանք կատարվել են նշված ժամկետներում:

Արտահայտվեցին՝

Որոշեցին՝ Բնագիտամաթեմատիկական առարկաների մեթոդմիավորման նախորդ նիստի որոշումների կատարման ընթացքի մասին տեղեկատվությունն ընդունել ի գիտություն:

Լսեցին 3. 2023-2024 ուսումնական տարվա 9-րդ դասարանների ավարտական քննությունների արդյունքների ամփոփման մասին հարցը:

(զեկուցող՝ Ս. Ավանեսյան)

Զեկուցողը նշեց, որ կատարվել են բոլոր նախապատրաստական աշխատանքները քննությունները բարձր մակարդակով անցկացնելու համար: Ավելի բարձր արդյունքներ ունենալու համար անհրաժեշտ է աշխատանքներ տանել աշակերտների գիտակցական մակարդակի բարձրացման ուղղությամբ, ինչպես նաև ուշադրություն դարձնել քննությունների ձևաչափին: Աշակերտների համար պետք է կարևորվի ստացած գիտելիքը և ոչ թե միայն գնահատականը: Զեկուցողը նշեց, որ քննությունների արդյունքները հիմնականում գոհացուցիչ են: Նա ներկայացրեց 2023-2024 ուսումնական տարվա 9-րդ դասարանների քննությունների ամփոփագիրը մաթեմատիկայից և բնագիտական առարկաներից:

Արտահայտվեցին՝ ՄՄ անդամները

Ա. Դաջունցը, նշեց որ քննությունների ժամանակ լարվածության հետևանքով աշակերտները սխալներ են թույլ տալիս, այնուամենայնիվ տարվա ընթացքում կատարված աշխատանքը տալիս է բարձր արդյունք:

Ս. Բաղդասարյանը նշեց, որ «Մաթեմատիկա» առարկայից սովորողներն ունեն լավ արդյունքներ:

Որոշեցին՝ 2023-2024 ուսումնական տարվա 9-րդ դասարանների ավարտական քննությունների արդյունքները մաթեմատիկայից և բնագիտական առարկաներից՝ քիմիա, ֆիզիկա, կենսաբանություն, աշխարհագրություն, ընդունել ի գիտություն (կցվում է):

Լսեցին 4. 2023-2024 ուսումնական տարվա ընթացքում իրականացված բաց դասերի, դաս միջոցառումների, վիկտորինաներին կատարման արդյունքների քննարկում:

(զեկուցող՝ Ա. Դաջունց)

Զեկուցողը նշեց, որ 2023-2024 ուսումնական տարվա ընթացքում բնագիտամաթեմատիկական առարկաների մասով պլանավորված բաց դասերը, դաս միջոցառումները, վիկտորինաները իրականացվել են, փոփոխություններ կատարվել են միայն ժամկետների մասով: Կազմակերպված աշխատանքների մեծ մասը կատարվել է բարձր մակարդակով: Սովորողները մեծ ոգևորությամբ էին մասնակցում միջոցառումներին ու վիկտորինաներին:

Արտահայտվեցին՝ Ս. Ավանեսյանը, Ա. Զեյնալյանը, Ա. Մարտիրոսյանը։

Ավանեսյանը նշեց, որ բաց դասերը, ինչպես նաև միջոցառումները իրականացնելու համար, պետք է մանրակրիտ նախապատրաստվել և որ բաց դասը պետք է տարբերվի առօրյա դասից, բայց նախապես անցկացված շոու դաս չլինի։

Ա. Զեյնալյանը նշեց, որ π թվի մասին սովորողները իրենք բավականին մեծ աշխատանք են կատարել։

Ա. Մարտիրոսյանը նշեց, որ 5-րդ դասարանցիները բավականին ոգևորված էին և որ այդպիսի միջոցառումները ավելի հետաքրքիր են դարձնում դասապրոցեսը։

Որոշեցին՝ 2023-2024 ուսումնական տարվա ընթացքում իրականացված բաց դասերի, դաս միջոցառումների, վիկտորինաներինմասին զեկուցումն ընդունել ի գիտություն։

Լսեցին 5. 2023-2024 ուսումնական տարվա ընթացքում իրականացված աշխատանքների հաշվետվությունների մասին հարցը։

(զեկուցողներ՝ ՄՄ անդամներ)

Զեկուցող Ա. Դաջունցը նշեց, որ բնագիտամաթեմատիկական մասնախմբի ուսուցիչների կողմից պլանավորված աշխատանքները հիմնականում կատարվել են, նշվեց նաև, որ կան բաց թողումներ։

Մ/Մ անդամները ներկայացրեցին իրենց կատարած աշխատանքների հաշվետվությունները, ամփոփեցին։

Արտահայտվեցին՝ Հ. Ալավերդյանը, Մ. Բաբայանը։

Արտահայտվողները կարևորեցին քննարկումները, որոնց արդյունքում վեր հանվեցին մի շարք խնդիրներ և մատնանշվեցին այդ խնդիրների լուծման ուղիները։

Որոշեցին՝ 2023-2024 ուսումնական տարվա ընթացքում իրականացված աշխատանքների հաշվետվությունների մասին զեկուցումն ընդունել ի գիտություն։

Լսեցին 6. 2023-2024 ուսումնական տարվա ընթացքում իրականացված արտադասարանական խմբակների աշխատանքների կատարման արդյունքների քննարկումների մասին հարցը։

(զեկուցող՝ Ա. Գևորգյան)

Զեկուցողը ներկայացրեց 2023-2024 ուսումնական տարվա ընթացքում բնագիտամաթեմատիկական մասնախմբի իրականացրած արտադասարանական խմբակների կատարած աշխատանքները։ Արմիդա Գևորգյանը խոսեց նաև խմբակների մատենավարության և ժամանակացույցի ճիշտ պահպանման մասին։

Արտահայտվեցին՝ Ս. Ավանեսյանը, ՄՄ անդամները

Ա. Դաջունցը նշեց, որ «Առողջ ապրելակերպ» խմբակը բավականին հետաքրքիր է և հագեցած, ամբողջ դասարանը մասնակցում է։ Չնայած նրան, որ անց են կացվում 7-րդ կամ 8-րդ դասաժամին, սովորողների ակտիվությունը բավականին բարձ է։

Սերգեյ Ավանեսյանը նշեց, որ իր և Արմիդա Գևորգյանի կողմից կատարված ստուգումները ցույց են տվել, որ երբեմն խմբակները սահմանված օրերում չեն իրականացվել։

Խմբավարները ներկայացրին իրենց կողմից իրականացված աշխատանքները։

Որոշեցին՝ 2023-2024 ուսումնական տարվա ընթացքում իրականացված արտադասարանական խմբակների աշխատանքների կատարման արդյունքների մասին զեկուցումն ընդունել ի գիտություն։

Լսեցին 7. 2023-2024 ուսումնական տարում իրականացված դասալսումների ամփոփման հարցի մասին։

(զեկուցող՝ Ա. Դաջունց)

Զեկուցողը ներկայացրեց 2023-2024 ուսումնական տարվա ընթացքում բնագիտամաթեմատիկական մասնախմբում իրականացված դասալսումներ և դասալսումների արդյունքում կատարված քննարկումները: Դասալսումները հատկապես նոր ՀՊՉ-ներով պայմանավորված ավելի հաճախակի էին կատարվում 2-րդ, 5-րդ և 7-րդ դասարաններում, ինչպես նաև տարբեր առարկաների դրվածքի ուսումնասիրման ժամանակ (մաթեմատիկա, բնագիտական առարկաներ), շատ ավելի արդյունավետ է, երբ դասալսմանը մասնակցում են 2 և ավելի դասալսողներ և մանրամասն իրականացնում են քննարկումներ: Դասալսումները ցույց են տալիս, որ ուսուցիչների մեծ մասը դասը վարում է ուսուցչակենտրոն մեթոդներով, ժամանակն է անցնել ավելի աշակերտակենտրոն մեթոդներով դասավանդմանը:

Զեկուցողը նշեց նաև տեսչական ստուգումների ժամանակ կատարված դասալսումները 6-րդ և 9-րդ դասարաններում «Մաթեմատիկա» առարկայից, որի արդյունքների մասին ամփոփագրերը կցվում են:

Արտահայտվեցին՝ ՄՄ անդամները

Արտահայտվողները նշեցին դասալսումների և դասալսումների քննարկումների կարևորության մասին, ինչպես նաև շեշտվեց դասալսումներից հետո դասալսողների կողմից խորհրդատվությունների կարևորության ու փորձի փոխանակման մասին:

Որոշեցին՝ 2023-2024 ուսումնական տարում իրականացված դասալսումների ամփոփման հարցի մասին զեկուցումն ընդունել ի գիտություն (կցվում է):

Լսեցին 8. ԿԱՊԿՈՒ աշակերտների համար ուսումնական գործընթացի կազմակերպման արդյունքների մասին հարցը:

(զեկուցող՝ Ս. Ավանեսյան, Ա. Ծատրյան)

Զեկուցողները մանրամասն ներկայացրին ԿԱՊԿՈՒ աշակերտների հետ կատարված աշխատանքները, խնդիրներն ու անելիքները: Արփինե Ծատրյանը նշեց, որ այն ուսուցիչները, որոնք ԿԱՊԿՈՒ աշակերտների համար ԱՈՒՊ են լրացնում, պատշաճ կերպով կատարել են իրենց անելիքները, ինչպես նաև պատշաճ լրացրել են ցածր առաջադիմությամբ երեխաների դիտարկման թերթիկները, որոնցով իրականացրել են դիտարկումներ և վեր հանել առկա խնդիրները: Զեկուցողները նշեցին, որ ուսուցիչներն ուսուցչի օգնականների հետ միասին կատարել են անհրաժեշտ աշխատանքներ, որպեսզի հասնեն սահմանված արդյունքին:

Արտահայտվեցին՝ ՄՄ անդամները

Արտահայտվողները նշեցին, որ այդ աշխատանքներում միշտ չէ, որ ամեն ինչ հարթ է, այնուամենայնիվ պետք է համագործակցել ուսուցչի օգնականների հետ և հասնել արդյունքների:

Որոշեցին՝ ԿԱՊԿՈՒ աշակերտների համար ուսումնական գործընթացի կազմակերպման արդյունքների մասին զեկուցումն ընդունել ի գիտություն:

Լսեցին 9. Էլեկտրոնային մատենավարության ամփոփիչ ստուգման արդյունքների քննարկման մասին:

(զեկուցող՝ Ա. Դաջունց)

Զեկուցողը նշեց, որ էլեկտրոնային մատենավարությունը և՛ տնօրինության, և մեթոդմիավորման աշխատանքների ուշադրության կենտրոնում է: 2023-2024 ուսումնական տարվա 1-ին և 2-րդ կիսամյակներում ստուգումների արդյունքից պարզվել է, որ թերացումներն ավելի քիչ են, երբեմն անկախ ուսուցչից:

Արտահայտվեցին՝ Ս. Ավանեսյանը:Ս. Ավանեսյանը նշեց, որ գնահատականները և թեմաները լրացնելուց հետո լավ կլինի շաբաթվա վերջում, ինչպես նաև օրվա վերջում նորից ստուգել, թե արդյոք կապի խնդիրներ կան, կամ ինչ-որ բան չի

հաստատվել: Նա նշեց, որ մատենավարությունը ամենօրյա ուշադիր աշխատանք է պահանջում:

Որոշեցին՝ Էլեկտրոնային մատենավարության ամփոփիչ ստուգման արդյունքների քննարկման մասին արդյունքները համարել բավարար:

Լսեցին 10. 2024-2025 ուսումնական տարվա նախնական ժամաբաշխման մասին հարցը:

(զեկուցողներ՝ Ս. Ավանեսյան, Ա. Դաջունց)

Զերկուցող Սերգեյ Ավանեսյանը ներկայացրեց այն բոլոր փոփոխությունները, որոնք կկատարվեն նոր 2024-2025 ուսումնական տարում, կապված նոր ՀՊՉ-ների ներդրման հետ: Նշվեց նաև, որ 5-ից 8-րդ դասարաններում, ինչպես նաև 2-րդ և 3-րդ դասարաններում (ԹԳՀԳ և Շախմատ) կանցնեն նոր չափորոշիչներով, իսկ 9-րդ դասարաններում և 4-րդ դասարանում (Շախմատ) հին չափորոշիչներով: Շեշտվեց, որ փոփոխությոնների մասին ավելի հստակ տվյալներ կունենանք օգոստոսյան խորհրդակցությունից հետո:

Արտահայտվեցին՝ Հ. Ալավերդյանը, Ս. Բաղդասարյանը, Կ. Արզումանյանը:

Սիրուշ Բաղդասարյանը նշեց, որ 2023-2024 ուսումնական տարվա ժամաբաժանումը կատարելիս և ուսումնական տարվա ընթացքում անհրաժեշտ է առաջնորդվել նոր ՀՊՉ-ներով: Արտահայտվողները խոսեցին նաև 6-րդ դասարանում «Աշխարհագրություն» առարկան այլևս չեն ուսումնասիրելու, սակայն 7-9-րդ դասարաններում այն ուսումնասիրելու են 2 դասաժամով: Խոսվեց «Տեխնոլոգիա» առարկայի մասին, նշվեց, որ 5-րդ և 6-րդ դասարաններում այն այսուհետ անցնելու են 2 դասաժամով և այլևս դասարաններն ըստ սեռի չեն բաժանվելու, այլ միայն կարգի համաձայն համապատասխան աշակերտների թվաքանակն ունենալու դեպքում կիսվելու են երկու խմբի:

Որոշեցին՝ Ընդունել ի գիտություն 2024-2025 ուսումնական տարվա նախնական ժամաբաժանումը (կցվում է):

Մ/Մ նախագահ՝ _____ Ա. Դաջունց

Ուսումնական գծով փոխտնօրեն՝ _____ Ս. Ավանեսյան

Տ Ե Ղ Ե Կ Ա Ն Ք

Առարկայական մեթոդական միավորման արձանագրությունների ամփոփման

2023-2024 ուսումնական տարվա ընթացքում *Բնագիտամաթեմատիկական առարկաների մեթոդմիավորումը* գումարել է *12 նիստ*, որոնց համար կազմվել է *12 արձանագրություն։*

Բնագիտամաթեմատիկական առարկաների մեթոդմիավորման նիստերի տվյալները՝ ստորև.

№	ԱՐՁԱՆԱԳՐՈՒԹՅԱՆ ՀԱՄԱՐԸ	ԱՐՁԱՆԱԳՐՈՒԹՅԱՆ ԱՄՍԱԹԻՎԸ	ՔՆՆԱՐԿՎԱԾ ՕՐԱԿԱՐԳԱՅԻՆ ՀԱՐՑԵՐԻ ՔԱՆԱԿԸ
1	1	22.08.2023թ.	12
2	2	25.09.2023թ.	7
3	3	26.10.2023թ.	7
4	4	29.11.2023թ.	5
5	5	22.12.2023թ.	13
6	6	25.01.2024թ.	8
7	7	26.02.2024թ.	7
8	8	26.03.2024թ.	5
9	9	25.04.2024թ.	4
10	10	08.05.2024թ.	7 (արտահերթ)
11	11	29.05.2024թ.	7
12	12	24.06.2024թ.	10

Բնագիտամաթեմատիկական առարկաների մեթոդմիավորման սույն արձանագրությունների մատյանը կազմված է *65* էջից։

Մ/Մ նախագահ՝ _____ Ա. Դաջունց

Ուսումնական գծով փոխտնօրեն՝ _____ Ս. Ավանեսյան

«24» հունիսի 2024թ.